Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԵՏՀՐԱՏԻ ԵԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 25—28

№ 25—28

ՄԻՐԿՈ ՄԱՐԿՈՎԻՉ

ԾՐՈԴԱՐԿԱ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1934

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԻՐԿՈ ՄԱՐԿՈՎԻՉ

A I/8624

ԲՐՈԴԱՐԿԱ

ՊԵՏՀՐԱՏ 1933

ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
32029

Պատ. խմբագիր՝ Ցե. Զարեց
Թարգմ. Արշ. Տեր Հովհաննյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Հանձնված է արտադրության 9 հունվարի 33 թ.
Ստորագրված է տպելու 5 հուլիսի 33թ.

Պետհրատի Տպարան, Գլավլիտ № 8184 (բ), Հրատ. № 3038, Պատվեր № 1432, Տիրաժ 3000

Գործադո՛ւլ:

Գործարանի դարպասից փրփրեց հազարավոր քրտնապատ ու կեղտոտ դեմքերի, հազարավոր յուղոտած վերնաշապիկների մարդկային հեղեղատը:

Ստեփան Վադները՝ յերկրորդ բաժանմունքի փականագործ՝ բարձրացավ բակում շրջած փայտե մի արկղի վրա: Չուգունի փոշին մեքենայի յուղի հետ շաղախված, լցրել եր նրա կաշվի ծակոտիները: Ծակոտի կնճիռները կուտակվում եյին հոնքերի վրա ծալ-ծալ, մերթ սահում եյին վեր, դեպի գագաթ: Յուղոտած, սպիտակած մազերը քունքերի վրա ցնցվում եյին:

... Նա խոսում եր ընդհանուր նախադասություններով, դանդաղ ու խնամքով կշռելով յուրաքանչյուր բառ, շոշափում եր աչքերով բազմությունը, ծանր կոպերով նետում եր այդ բազմության մեջ անտաշ բառերը:

— Քաղաքի արհեստակցական միությունների կոմիտեյի միջոցով առաջարկել մյուս ձեռնարկությունների բանվորներին համերաշխության և բողոքի գործադուլ հայտարարել... Չնահանջել պայքարի ֆրոնտից:

հսկսել աշխատանքը, քանի դարպասից դուրս
շպրտված բարեկամները չեն վերադարձել
գործարան:
— Ձեզանից ամեն մեկը գիտե, որ նրանք
դուրս են շպրտված ոչ թե նրա համար, որ
վատ բանվորներ են և «զուր տեղը տիրոջ հացն
են ուտում»: Նրանց արձակեցին, որովհետև
վախենում են նրանցից. մեր թշնամիներն էլ
իմանում են, որ վաղվա օրը խլելու յեն նրան-
ցից իրենց գործարանները, գրասանալերը,
վիլլաները, ավտոմոբիլները: Որովհետև
մե՛նք ենք կյանքի տերերը, մե՛զ է պատկա-
նում այն ամենը, ինչ ստեղծված է մարդու
ձեռքով: Մեր պաշտպանությունը և մեր հար-
ձակումը մենք պետք տանենք բոլորս միասին:
Միայն ա՛յդ դեպքում մենք կհաղթենք:
Վազները ձեռքը բարձրացրեց վեր, դան-
դաղորեն բռունցք սեղմելով:
— Առաջարկում եմ ցրվել տները, իսկ
վաղն առավոտյան ժամի 10-ին բոլորդ լինեք
այստեղ... Փողոցներով գնանք շարքերով:
Բռունցքի վերից վար շարժումն ընդգծեց
վերջին նախադասությունը: Փոքրիկ փայտնե-
րով, լայն գետակներով բանվորները հոսեցին
գործարանի դարպասից դուրս, լցրին փողո-
ցը, հավաքվեցին, կուտակվեցին խիտ ողա-
կով, շարժվեցին սալահատակով:
Բռնկվեցին մարտական յերգերի բառերը:
Քաղքենիները մայթերի վրա վախվորած
սեղմվեցին տների պատերին, սսկվեցին, խեղ-

ճացան, հոնքերի տակից նայելով գործադու-
լավորների դրոշակներին:
Ցուցարարների առաջին շարքերը հավա
սարվեցին ֆաշիստական ակումբի շենքին
Ցադրանյան փողոցում և սուր սուլոցը սղոցեց
օդը բարակ սղոցի պես:
— Կորչե՛ն ֆաշիստները: Կորչի՛ բուր-
ժուազիան: Արյունարբունե՛րը... Դահիճ-
նե՛րը...
Կենտրոնական հրապարակից ցուցարարնե-
րըն սկսեցին ցրվել: Գնում էյին խմբերով,
քննելով այսօրվա դեպքերը: Յերիտասարդ-
ներն ուրախ ու անհոգ յերգում էյին:
Բրոդարկան տուն էր վերադառնում միայ-
նակ...
Տանը նրան դիմավորեց մոր զարմացած,
վախեցած դեմքը:
— Ի՞նչ է պատահել: Ինչո՞ւ այսպես
շուտ: Այսօր մի՞թե չեք աշխատում:
Ձայնը բեկվեց:
— Մի՞թե...արձակեցի՞ն...
— Սարսափելի ոչինչ չի պատահել...
Մենք գործադուլ արեցինք...
«Գործադուլ» բառը ճզմեց Բրոդարկայի
մորը: Պառավը ծանր նստեց աթոռին:
— Կրկի՞ն գործադուլ...Կրկի՞ն քաղց...
Պառավի աչքերը լցվեցին արցունքներով:—
Անցյալ տարվա գործադո՛ւլը... Յես դեռ ըզ-
գում եմ նրա ծանրությունն իմ մեջքին... Յե-
թե չլիներ այդ անիծյալ գործադուլը, Գաս-
տոնը կենդանի կլիներ:

Իր ամբողջ կյանքը պառավն անց եր կացրել իր կարի մեքենայի առաջ: Նա անցյալ տարի գործադուլի ժամանակ սպանված բանվորի կին եր: Յեվ այնուամենայնիվ շրջապատում կատարվածի իմաստը պարզ չեր նրա համար: Նա զգում եր լոկ միայն իր տառապանքներն, իր դժբաղդությունները: Աղջկանից նրան բաժանում եր տասնիներորդ և քսաներորդ դարերի մեջ ընկած ժամանակի տարածությունը, տասնինը տարեկանի և հիսնամյա հասակի տարբերությունը:

— Ինչո՞ւ կրկին սկսվեց այդ դժբաղդ գործադուլը:

— Վացուն հոգու մեր ընկերներից արձակեցին աշխատանքից...Իսկ մենք այդ բանը չենք կարող թույլ տալ:

— Ո՛, տեր աստված: Մի՞թե լավ չեր լինի, յեթե առանց գործի մնային վացուն հոգին, քան ամբողջ գործարանը: Մի՞թե ավելի լավ չեր լինի, յեթե քաղցած մնային վացունը և վոչ թե յերկուս ու կես հազարը:

— Վո՛չ, մայրիկ, այդպես բանի նման չե: Չի կարելի թույլ տալ, վորպեսզի մեզ ջախջախեն մեկիկ-մեկիկ:

Մայրը չեր կարողանում մխիթարվել: Նա զգում եր միայն մի բան. վոր իր Բրոդարկան ընկել ե ինչ վոր հորձանքի մեջ և ամեն բոպե կարող ե գլխապտույտ տարվել կամ կորչել: Մաքրելով քրտինքով ծածկված դեմքը, նա

արտում, քարշ տալով վոտքերը, անցավ խոհանոց:

Որը հանգչում եր: Արեգակի շողերը շեղակի ընկնում եյին տների կղմինդրի տանիքներին: Ստվերները չափազանց յերկարում եյին: Գործարանների վրա գալարվում եր սև ծուխը: Չեյին ծխում միայն յերկու սևացած ծխնելույզներ՝ Սավա գետի ափին. կեսօրից հետո նրանց վրա ագռավներն եյին թառել հանգիստ առնելու, չվախենալով ծխի ուժգին հոսանքից ու անտրացիտի շիկացած փշրանքների կրակյա ամպերից:

Փողոցները դոփում եյին: Մարդիկ ավելի արագացնում եյին քայլերը: Արեգակի անտանելի ճառագայթներն այլևս վոտքերը չեյին ծանրացնում կապարի պես: Խոհարարուհիները, տանտիկինները հնամաշ մուճակները բոբիկ վոտքերին ու գոգնոցներով, շտապ անցնում եյին խանութից-խանութ, զամբյուղները լցնելով կաղամբի խշխշան գլուխներով, հյութալի, արյունոտ մսով ու կանաչ սոխով:

Մայթերի վրա, մարդուց մարդ եյին անցնում, ճախրում եյին շշուկներ, լուրեր...Այսոր ցերեկը «Յադրան» ակցիոներական ընկերության անկվածա-մանածային գործարանում տեղի ունեցած դեպքերն ամեն տեղ խոսակցության նյութ եյին ծառայում:

Սուրբ Անտոնիոսի և Թագաժառանգ Մարկոսի փողոցների անկյունում լուսամուտների մրոտած ապակիներով կիսակույր նայում ե

դեպի փողոց մի հին գարեջրատուն: Այսօր այնտեղ հյուրերի թիվը մասամբ ավելի յե, քան սովորաբար: Սեղանների մամռակալած, կեղտոտ մարմարների շուրջն աշխույժ զրուցում են գործադուլավորները: Դռները ճռինչով բացվում են ու փակվում, ամեն բացե ներս թողնելով մանածագործների, ջուլհակների ու հնոցպանների խմբեր:

— Ա՛յս կողմ, ընկե՛րներ:

Առևտրասեղանի յետև, ծխախոտի ծխի մառախուղի մեջ—գարեջրի թրաշավոր գավաթների յերկար շարքեր են: Առևտրասեղանի առջև գտնված ծանր սեղանի լայն մեջքը վողողված է գարեջրով: Սեղանի շուրջ՝ սկըսված պայքարից շողացող, աշխույժ աչքեր են՝ խորը թաղված գորշ դեմքերի փոխ կաշվի ծալքերում: Թրաշավոր գավաթներն ուռչում են սպիտակ փրփուրի փափախներով:

— Հ՞ը, ի՞նչ կա, Վույո: Ի՞նչ ես քիթդ կախել:

— Նա միշտ այդպես թթված է ու դըժբաղդ, հենց վոր մի բան է պատահում:

Ջրնդացին թասերը, հոսեց ուրախ կենաց յերգը:

— Լցրո՛ւ, Մառե: Խմե՛նք, ընկերներ, գործադուլի հաջողության համար:

— Իսկ մեր Վույոն ժաժ էլ չի գալիս: Կարծես այսօր կորցրել է կուսությունը: Մի՛ վախեցիր, ծերուկ: Մենք գործադուլը կտանենք:

— Տա սատված... Ո՛խ–ո՛խ–ո՛խ... Միայն թե յես վախենում եմ, վոր...

— Ե՛խ դու, թրջված հավ:

— Հա՛–հա՛–հա՛... Հո՛–հո՛–հո՛... Նա վախենում է: Նա այսօր է միայն աշխարհ յեկել: Գրո՛ղը քեզ տանի: Ի՞նչն ավելի սարսափելի կարող է լինել, քան այն, ինչ արդեն նըստել է քո քառասնամյա սապատին: Հա՛–հա՛–հա՛...

***

Արդեն լուսնի կանաչա–կաթնագույն սկավառակը կախվել եր Բալկանների վրա, յերբ Բրոդարկայի բնակարանի դուռը բացվեց ու ներս մտավ Միլան Գրոյիչը՝ «Յադրան» մանածա–անկվածային գործարանի նորոգիչ փականագործը: Գործադուլավոր: Բանվորական ատելության մշակման ղեկավարն ու կազմակերպիչը:

— Յես ներս եմ գալիս առանց բաղխելու:

— Վոչինչ: Այժմ ավելի լավ է չբաղխել... Յես չեյի սպասում, վոր այսօր մերոնցից մեկն ու մեկը կգա: Ինքս էլ վոչ մի տեղ չեյի պատրաստվում գնալու: Մինչդեռ հարկավոր է խոսել այն մասին, ինչ անել...

— Նոր հենց լսեցի, վոր սոցիալ–դեմոկրատները վորոշել են գործադուլը վիժեցնել: Իրենց միության գործադուրկներից գործատերերին շտրեյկբրեխերներ են առաջար–

գարեջրատուն: Այսօր այնտեղ հյուրերի թիվը մասամբ ավելի է, քան սովորաբար: Սեղանների մամռակալած, կեղտոտ մարմարների շուրջն աշխույժ զրուցում են գործադուլավորները: Դռները ճռնչով բացվում են ու փակվում, ամեն բոպե ներս թողնելով մանածագործների, ջուլհակների ու հնոցպանների խմբեր:

— Ա՛յս կողմ, ընկե՛րներ:

Առեվտրասեղանի յետև, ծխախոտի ծխի մառախուղի մեջ—գարեջրի թրաշավոր գավաթների յերկար շարքեր են: Առեվտրասեղանի առջև գտնված ծանր սեղանի լայն մեջքը վողողված է գարեջրով: Սեղանի շուրջ՝ սկըսված պայքարից շողացող, աշխույժ աչքեր են՝ խորը թաղված գորշ դեմքերի վոխ կաշվե ծալքերում: Թրաշավոր գավաթներն ուռչում են սպիտակ փրփուրի փափախներով:

— Հ՞ը, ի՞նչ կա, Վույո: Ի՞նչ ես քիթդ կախել:

— Նա միշտ այդպես թթված է ու դըժբաղդ, հենց վոր մի բան է պատահում:

Զրնգացին թասերը, հոսեց ուրախ կենաց յերգը:

— Լցրո՛ւ, Մատե: Խմե՛նք, ընկերներ, գործադուլի հաջողության համար:

— Իսկ մեր Վույոն ժաժ էլ չի գալիս: Կարծես այսօր կորցրել է կուսությունը: Մի՛

վախեցիր, ծերուկ: Մենք գործադուլը կտանենք:

— Տա աստված... Ո՜խ-ո՜խ-ո՜խ... Միայն թե յես վախենում եմ, վոր...

— Ե՜խ դու, թրջված հավ:

— Հա՜-հա՜-հա՜... Հո՜-հո՜-հո՜... Նա վախենում է: Նա այսօր է միայն աշխարհ յեկել: Գրո՛ղը քեզ տանի: Ի՞նչն ավելի սարսափելի կարող է լինել, քան այն, ինչ արդեն նըստել է քո քառասնամյա սապատին: Հա՜-հա՜-հա՜...

***

Արդեն լուսնի կանաչա-կաթնագույն սկավառակը կախվել էր Բալկանների վրա, յերբ Բրոդարկայի բնակարանի դուռը բացվեց ու ներս մտավ Միլան Գրոյիչը՝ «Յադրան» մանածա-անկվածային գործարանի նորոգիչ փականագործը: Գործադուլավոր: Բանվորական ատելության մշակման ղեկավարն ու կազմակերպիչը:

— Յես ներս եմ գալիս առանց բաղխելու:

— Վոչինչ: Այժմ ավելի լավ է չբաղխել... Յես չէյի սպասում, վոր այսօր մերոնցից մեկն ու մեկը կգա: Ինքս էլ վոչ մի տեղ չէյի պատրաստվում գնալու: Մինչդեռ հարկավոր է խոսել այն մասին, ինչ անել...

— Նոր հենց լսեցի, վոր սոցիալ-դեմոկրատները վորոշել են գործադուլը վիժեցնել: Իրենց միության գործադուրկներից գործարանատերերին շտրեյկբրեխերներ են առաջար-

կում: Գործարանում մի քանիսն արդեն քթերը կախել են... Բայց վաղը գործն ավելի պարզ կլինի... Եթե գործադուլային կոմիտեյի նիստին նրանք սկսեն ծամծմել, հարկ կլինի նրանց խփել, վորքան կարելի յե խիստ: Ես խոսել եմ տղաների հետ այդ մասին: Տղաները բոլորը միակարծիք են... Միայն չպետք է մոռացության տալ, վոր վաղը, հավանորեն, գործին կմիջամտի ոստիկանությունը: Նաև առաջ խուզարկություններ կլինեն: Քեզ էլ հարկավոր է նյութերը բոլորը վորևե այլ տեղ փոխադրել: Ընդհանրապես, թերևս, ամենևին կարիք չկար յետ բերել...

Միլանը խոսում էր ընդհատ-ընդհատ, կարճ նախադասություններով: Կարծես հաջում էր: Բրոդարական լսում էր նրան՝ գլուխը կախ գցած, մտազբաղ, սեղանին՝ իր արևից թխացած ձեռքի տակ պառկած թղթի կտորի վրա փոքրիկ սատանաներ նկարելով:

— Այո՛, այո՛: Բանը նրանում չէ միայն, վոր յես կարող եմ բռնվել: Բրոշյուրնե՛րը կը կորչեն... Բրոշյուրներ ձեռք բերելն այժմ դժվար է:

Սուրբ Անտոնիոսի յեկեղեցու գոթական զանգակատան ժամացույցը ցույց էր տալիս ժամի տասնումեկը, յերբ Միլանը և Բրոդարկան կամացուկ փողոց դուրս յեկան, լիք ճամպրուկներով բեռնված... Արագ քայլում եյին մութ միջափողոցներով, չուրջները դիտելով

և զգուշորեն խույս տալով սալահատակին փռված լուսնի շիթերից:

— Լավ ժամանակ չընտրեցինք,— շշնջաց Միլանը:— Պետք էր մի փոքր սպասել, մինչև բոլորովին մթներ:

Բրոդարկան լուռ արագացրեց քայլերը:

Մի քանի րոպեյից նրանք ուղղահայաց ու նեղ աստիճաններով բարձրացան Միլեվայի՝ պառավ, բարեսիրտ ու թուլակազմ ջուլհակուհու սենյակը:

Միլեվան հենց նոր ընթրում էր: Դանդաղ մի հայացք նետեց նա յերկու հևացող մարդկանց վրա, նրանց ճամպրուկներին, կուլ տվեց սխմինդրի հացի վերջին պատառն ու առանց շտապելու բարձրացավ սեղանի մոտից: Ըմբռնելով բանի եյությունը՝ անխոս վերցրեց ճամպրուկները Միլանի ու Բրոդարկայի ձեռքերից և, անխոս, սկսեց տեղավորել մահճակալի տակ: Ապա վերկացավ, թափ տվեց դոգնոցը և լուռ նստելով սեղանի մոտ, ձեռքն առավ կիսատ մնացած կարը: Բրոդարկան մոտեցավ նրան ու ամուր սեղմեց կոպիտ, մսոտ ձեռքը:

— Շնորհակալություն, մորաքույր,— կամացուկ շշնջաց աղջիկը...

* * *

Մայիսյան արեգակը շողշողում է: Բալկանը վաղուց է արթնացել: Դղրդում է նա

գործարանների մեքենաներով, ճղփում է փողոցների, հրապարակների բազմաձայն աղմուկով, խշշում է ավտոմոբիլների շիներով։

Բոլորը գործի յեն, բոլորն՝ աշխատանքի։

Բացի գործադուլավորներից։

Նրանք էլ են գնում ինչ վոր տեղ։ Բայց նրանք չեն շտապում։ Փոքրիկ խմբերով, դանդաղ քայլերով ամեն կողմից հավաքվում են գործարանի մոտիկ հրապարակը։

Փորձառու աչքն անմիջապես ու առանց սխալվելու մարդկանց կբաժանի յերկու խմբի։ Վոմանք մռայլ են, խոսում են կամացուկ։ Աչքերում անհամբեր անհանգստություն կա։ Դրանք սոցիալ-դեմոկրատների հետ են գնում։ Դրանք շատ էլ չեն հավատում գործադուլի հաջողության։ Դրանք յերեկ պայքարի մեջ գրավվեցին տարերայնորեն։ Յեվ այժմ անընդհատ մի միտք է դառնում նրանց ուղեղներում.

«Իսկ ինչո՞ւ յես պիտի ընտանիքիս հետ քաղցեմ այդ փսլնքոտ խռովարարների պատճառով։ Լա՛վ, գործարանից դուրս են շպրտել, բայց ի՞նձ ինչ, յե՞ս ինչ գործ ունեմ այդտեղ։ Իմ մանկիկներն ինչո՞վ են հանցավոր»։

Մյուսները զվարթ են և ցույց են տալիս, վոր ուրախ են սաստիկ։ Նրանք աշխատում են անհոգ յերևալ։ Նրանք աշխատում են միմյանց անվեհերություն և վճռականություն ներշնչել։ Նրանք իսկապես էլ անվեհեր են։ Խոսում են համարձակ ու բարձրաձայն, շատ

ծիծաղում են՝ ցույց տալով յերիտասարդ ատամները։ Խփում են միմյանց ուսի, յերգում են։ Սրանք ունիտար հեղափոխական արհմիության անդամներն են, վոր անլեգալ կոմունիստական կազմակերպության ազդեցության տակ են գտնվում։ Ռացիոնալացման ստանոկները, կանաչ պղպեղը, սիմինդրի խյուսը և բանվորական արուարձանների խավար նկուղները սրանց մեջ չեն մեռցրել պայքարելու ընդունակությունները։ Սրանք ատում են։ Սրանք պայքար են ցանկանում։

Վեռնիճած փոքրիկ ավտոն, չչակի վռնոցը՝ կամացուկ սահելով, բազմության մեջ ներս խցկեց դեր Միլլերին՝ գործարանի վարչության քարտուղարին։

Բանվորները խոժոռվեցին, լռեցին, յետ քաշվեցին։

Միլլերը կանգնեց։ Հանեց ցիլինդրը։ Աջ ձեռքով մաքրեց քրտնած ճակատը, ձախն ինքնավստահ դրեց մեջքին... Յեվ հանկարծ վորտեղից-վոր հետին շարքերից հորձանք տվեց յերիտասարդ մի ձայն.

— Կորչի՛ բուրժուազիան։ Կորչե՛ն նրանց սպասավորները։

Կարծես ահռելի ուժի մի հոսանք անցավ բազմության վրայով ու բռնկվեց ահարկու ձայների մի քաոս։

— Գո՛ղ...

— Կորչի՛...

— Գործարանատիրոջ արբանյա՛կ...

— Դո՛ւրս...
— Կորի՛...
— Կորչի՛ բուրժուազիան...
— Ցած դարձիր,— խռպոտեց Միլլերը, բարկությամբ ընկնելով ավտոյի բարձին ու գլուխն ուսերի մեջ թաղելով:— Սրիկանե՛ր:
Շչակի վռնոցն ու մոտորի հանկարծակի ուժգնացած աղմուկը խլացրին նրա բառերը:
Գասպարը մտախոհ, ծնոտի չիկավուն խոզանը շփելով, արմունկով հրեց հարևանին:
— Տեսա՞ր, ծերուկ:
Հավլեն վհատ վեր բարձրացրեց անգույն աչքերն ու կրկին ցած թողեց: Փնթփնթաց քնկոտ ձայնով.
— Այդ միշտ այդպես է յեղել, յեղբայր... Ամեն ինչ աստծու կամքով է,— ավելացրեց նա հուսահատ հառաչանքով:
Գասպարը կատաղությամբ շուռ յեկավ նրանից ու մռմռաց ավելի շուտ ինքն իրեն, քան խոսակցին.
— Ե՜հ, գնա՛ դու յել քո աստծո հետ դրողի ծոցը:
Արեգակը մոլեգնում էր: Քրտինքը դուրս էր գալիս շապիկներից, ծորում էր շորերի վրայով խոնավ ու մեծ-մեծ բծերով: Փողոցներով ամեն րոպե հսկայական դղրդոցով սլանում էին ապրանքատար ավտոմոբիլներ, մարդկանց ծածկելով սպիտակ, կծու փոշու խիտ ամպերով:
— Ընկերնե՛ր, ո՞վ է համաձայն ցույցի

յերթ կազմակերպենք քաղաքում: Պլակատներն արդեն պատրաստ են... Ո՞վ է համաձայն: Բարձրացրեք ձեռքերդ:
Մասսան շարժվեց: Գլուխների վերև ծածանվեցին դեվիզների սպիտակ տառերով գրոտած կարմիր կտավներ.
«Բոլորը մեկի՝ մեկը բոլորի համար»:
Ցադրանյան փողոցը լցվեց հուզված լավայով: Սալահատակի ընդարձակությունը նեղ է: Ահա կսկսեն ճարճատել տների կողերն ատելության գրոհից: Յերիտասարդ դասակարգ,— խորտակո՛ղ ու ստեղծագործո՛ղ:

***

— Միլա՛ն, դու նկատեցի՞ր առաջին շարքում հագուստը փոխած գործակալին:
Միլանը, որ քայլում էր Բրոդարկայի հետ միասին նույն պլակատի տակ, կանգ առավ:
— Ի՞նչ ես ասում: Չի՛ կարող պատահել: Ոտար մարդն առաջին շարք չի սպրդի...
— Յես համոզված եմ, որ նա ոստիկանական լրտես է: Յես նրան ճանաչեցի, յերբ պտույտ տվեցինք քաղաքային վարչության մոտ:
— Պետք է շտապ առաջին շարք հասնել: Տուր պլակատը յես պահեմ, իսկ դու վազիր առաջ... Թող ոտները նրա կողքերը տրորեն:
Փողոցի հատվող մասում ժանդարմների

անշարժ դեղին շարքեր են կանգնած: Այն կողմը հեծյալների վաշտն է: Ձիերը թափահարում են խուզած պոչերը, անհամբեր դոփելով սմբակներով: Փայլփլում են նիզակները: Ժանդարմները գրգռված են ու փոքր ինչ հարբած:

Հուզմունքն անցավ ցուցարարների շարքերով: Առաջին շարքերը կանգ առան: Հետին շարքերը ճնշում են առաջիններին: Ցուցարարները սեղմվում են, շերտ-շերտ խցանվում են փողոցի մեջտեղ: Առաջին շարքերն սկսեցին «Ինտերնացիոնալ»: Մի րոպեյից պրոլետարական հիմնի մեղեդին թնդաց բոլոր շարքերում: Ապա կրկին ծնվեց ձայների քաոսը: Սուլում էին, առաջ էին անցնում շարքերից, նետում էին խոժոռած ժանդարմների երեսին.

— Դահիճնե՛ր:

— Վարձկաննե՛ր:

— Արյուն լակե՞լ եք ցանկանում:

Վոխտ յերիտասարդն արագորեն չորս բոլորքը նայեց և ավելի հապճեպ բարձրացրեց ձեռքն, ու փոքրիկ ատրճանակը մի քանի անգամ կապտավուն ծուխ թքեց դեպի յերկինք:

Շնչակտուր, հուզված Բրողարկյան դուրս պրծավ ցուցարարների բազմության ողակից ու վազեց դեպի յերիտասարդը:

— Բռնեցե՛ք նրան, ընկերներ: Նա պրովոկատոր է: Լրտես...

Կողքի միջափողոցից վորոտաց հարգարկ: Զոր չաչեցին փակագակների պողպատյա ատամները... Փոշու ամպ բարձրացավ: Վառոդի ու խանձվող չորի հոտը տաք, բարկ հոսանքով քթին խփեց: Գնդակների բզզացող պարսը մխվեց ցուցարարների շարքերը: Լսվեցին մորմոքալից հառաչներ ու ճիչեր: Ու մինչդեռ հառաչանքների ու ճիչերի մի մասը հոգեվարքային խռխռոցի յեր փոխվում, մյուսները, նորերը՝ տառապանքով ու հուսահատությամբ լի, հաջորդում էին նրանց:

Բազմությունն սկսեց յետ նահանջել ու ցվել հարևան փողոցները: Դողդողում էին ծնկները: Շնչառությունը դառնում էր ընդհատ ու սեղմ: Արյունը խփում էր կատաղի: Փոշին բարձրացավ հսկայական դանգվածով ու նստեց մարդկային մարմինների մրջնոցի վրա: Ժանդարմների շարքերի դիմաց մի րոպե առաջ «Ինտերնացիոնալ» և ատելություն հորդող բազմության փոխարեն այժմ պառկած էին մեկ ու կես տասնյակ արյունլվիկ, ջղաձգորեն ցնցվող մարմիններ: Արյունը, վոր յերկու որ առաջ հոսում էր բանկային դրամանիշների խշխշան կապուկների մեջ, վոր կենդանություն էր տալիս բազմաթիվ սատանոկների ու մեքենաների, այժմ ծանր կաթիլներով ու լճակներով թանձրանում էր սալահատակի փոշու մեջ, արեգակի տոչորող ճառագայթների տակ...

Խառնաշփոթ ծափեցին ատրճանակների պայթյուններ: Սակայն դա այլևս փոքրիկ, ու

32029
A 8624
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

բրաունինգի անվտանգ Թուքը չէր, վորի տե-
րը՝ փոխ յերիտասարդը՝ անհայտացավ ժան-
դարմական համազգեստների մեջ: Այժմ կրա-
կում եյին պրոլետարական ինքնապաշտպա-
նության ջոկատի պարաբելումները:

— Դու յերկո՞ւ ատրճանակ ունես, Մի՛-
լան:

— Այո՛... Մեկը մնացել է Դուշանից...
Իսկ թե ո՞ւր է նա այժմ, չգիտեմ: Գուցե սպա-
նել են նրան...

— Մեկն ի՛նձ տուր:

— Իմաստ չունի... Ուշ է կրակել, Բրո-
դարկա... Բոլորն արդեն ցիրուցան յեղան:
Մենք վերջինն ենք: Հարկավոր էր մի փոքր
կազմակերպված սկսել...

Փողոցի հակադիր կողմում ճրթճրթում
էր պարաբելումը:

— Գասպարն է այնտեղ կրակում: Ահա
ժանդարմը գլորվեց...

Բրոդարկայի աչքերը նյարդային վազվը-
զում եյին Գասպարից դեպի մոտեցող ժան-
դարմների զորասյունը: Նրա ձեռքը պարզվեց
դեպի Միլանի՝ ատրճանակը բռնած ձեռքը:
Ջղաձգորեն դուրս քաշելով Միլանի թուլացած
մատների միջից ատրճանակը, Բրոդարկան
դիմադրություն չզգաց:

Հրաձգությունը շարունակվում էր: Գաս-
պարը՝ Միլանի ու Բրոդարկայի դիմաց՝ կրա-
կում էր հանգիստ և վստահ, թաքնված տան
անկյունում:

— Մեզ շրջապատում են: Ժանդարմները
վազում են միջափողոցից:

Ժանդարմները վազում եյին դռնից-դուռ,
սյունից-սյուն: Կարաբինների չխկացած փո-
ղերը կրակ եյին ժայթքում:

— Գասպա՛ր, փախի՛ր մեզ մոտ:

— Իսկույն:

Գասպարի ցասումով փայլատակող աչքե-
րը պատրաստ եյին դուրս թռչելու խոռոչնե-
րից: Յետ նայեց... Գալիս են: Կրակում են:
Թաքնվելու տեղ չկա: Մի ակնթարթ: Շիկա-
ցած մի սեղ ծակեց կուրծքը: Վոտքը: Գլու-
խը: Փողոցը կինոլենտի փոխվեց: Ջրախողո-
վակը կարծես թափով նետվեց ցած: Գլխա-
վերեվ՝ փողոցի ասֆալտած առվակը ցցեց իր
գիշատիչ յերախը: Համազարկ: Արյունը շա-
ղախվեց փոշու հետ, կանաչավուն խյուս կազ-
մելով: Խավարը՝ խորը, ինչպես ովկյանի
ջուրը՝ իջավ նրա աչքերին:

Ժանդարմները մոտենում եյին Բրոդար-
կային ու Միլանին: Գնդակները լիզում եյին
սալահատակը: Փողոցները դատարկվել եյին:
Գնդակների դադարների ժամանակ լսվում ե-
յին սմբակների դոփյուններ...

— Պատին մոտ կաց. փախիր այն դարպա-
սով: Յես գալիս եմ քո յետևից,—ձայն տվեց
Միլանը, փամփուշտի մի նոր պահունակ սեղ-
մելով ծխացող ատրճանակի պահեստանոցը:

Կարծես քնարը վիճակում Բրոդարկան
հասավ դարպասի մոտ: Միլանը բռնեց աղջկա

— Այդ ճիշտ է: Իսկ յե՞րբ կարող ենք մենք հավաքվել:

— Ցես կարծում եմ կարիք կլինի բավական ժամանակ սպասել, մինչև ամեն ինչ խաղաղվի:

Ծխախոտի ծխի խիտ քուլաները լողում էին խոսակիցների գլուխների վերև: Միլանը յետ ընկավ աթոռի մեջքին, հայացքը պտտեց ներկա յեղողների վրա ու հազաց:

— Այս բոլորը շատ լավ, միայն թե յես շատ եմ կասկածում, վոր մենք հնարավորություն ունենանք շուտով հավաքվել, խորհրդակցելու մեր հետագա անելիքների մասին: Մի՞թե դուք չգիտեք,—Միլանը ձայնը բարձրացրեց,—վոր վաղը մենք բոլորս արդեն պահնորդական բաժնում կլինենք:

Մանածագործ Անդրան թեքվեց սեղանի վրա ու բերանից հանեց ծխամորճը:

— Այո՛, ընկերնե՛ր: Այդ էլ ճիշտ է: Միայն թե յես վոչ մի յելք չեմ տեսնում:

— Իսկ յես տեսնում եմ,—տեղից շարժվեց Միլանը և բռունցքը սեղանին խփեց:

— Հարկավոր է անմիջապես թռուցիկ գրել ու մինչև վաղն առավոտյան ժամի վեցը տպագրել և տարածել բոլոր ձեռնարկություններում: Այստեղ կան քաղաքային կոմիտեյի անդամներ: Այդ գործի պատասխանատվությունը նրանք պետք է իրենց վրա վերցնեն: Թռուցիկում պիտի կոչ անել քաղաքի բոլոր գործարանների բանվորներին՝ բողոքի գործա-

դուլ անել ընդդեմ իշխանության այսօրվա սանձարձակության: Կոչ անել բանվորներին ցույց կազմակերպելու: Իսկ այս գիշեր մեզանից և վոչ մեկը թող իր տանը չգիշերի: Գիշերը բոլորիս մոտ «հյուրեր» կլինեն:

— Ե՛, վերջին առաջարկն այնքան էլ լավ չի: Տանը չգիշերելն ավելի վատ կլինի... Անպայման կասկած կառաջացնի: Իսկ առաջին առաջարկությանը յես համամիտ եմ... Այո, թերևս բոլորն էլ համաձայն են,—ասաց Անդրան:

— Ուրեմն ինչպե՞ս: Թռուցիկը գրո՞ւմ ենք:

Բանվորները լուռ գլխով արին:

Մի քանի րոպեյից թռուցիկի բովանդակությունը պատրաստ էր: Գործի ամբողջ պատասխանատվությունը հանձնարարեցին չորս հոգու: Վեր կացան սեղանի մոտից և ամուր սեղմեցին միմյանց ձեռք:

— Դե՛, ընկերնե՛ր,— ճանապարհ դրեց բանվորներին կոմիտեյի անդամը,— պահնորդական բաժին ընկնելիս մենք պետք է կանգնած լինենք մեր բարձրության վրա: Պատասխանը կարճ է՝ «վոչ», «չգիտեմ» և ուրիշ վոչինչ:

***

Բրոդարկան առաջարկեց Միլանին անցնել քաղաքի ծայրամասով և սպասել մինչև բոլորովին մթնի: Գնում էին փշալարերով ու նեղ սրածայր բրերով շրջափակված փոքրիկ բան-

Ջրանոցների կողքով, ուր սուր-սուր ցցվել եյին կանաչ սոխի ցողունները, յերփներանգում եյին գետնախնձորի սպիտակ մանրիկ ծաղիկները, կարմրին եյին տալիս պամիդորի գնդիկները:

Յերկու հոգի քայլում եյին դանդաղ: Նրանցից ամեն մեկը տարված եր իր մտքերով:

— Գասպարն սպանվեց,—կարծես ինքն իրեն ասաց Բրոդարկյան:

— Այո...

— Ի՞նչ պիտի անի այժմ նրա կինը, յերեխայի հետ... Արդեն մի տարի յե, ինչ կնոջն արձակել են աշխատանքից:

— Դժվար է: Քանի Կարմիր Ոգնությունը լեգալ եր աշխատում, ելի հնարավոր եր մի կերպ դուրս գալ այդպիսի դրությունից: Յեթե մեզ բոլորիս անմիջապես չձերբակալեն, դեռ կարելի յե մի բան անել: Շուտով չաբաթ որ է: Մյուս գործարանների տղաներն ուրախությամբ իրենց ստացածից ամեն մեկը մի բան կտա սպանվածների ընտանիքների համար:

— Իսկ դու հույս ունե՞ս, վոր մենք կարող ենք խույս տալ ձերբակալվելուց: Չե՞ վոր բոլորս չենք կարող անլեգալ դրության անցնել: Չե՞նք կարող հո բոլորս կուսակցության հաշվին ապրել:

— Վոչ, հասկանալի յե, այժմ մեզ կձերբակալեն.—յեթե վոչ այսոր, ապա վաղը:

Միայն թե, նախկին ձերբակալությունների նայած, այս անգամ հազիվ թե բոլորին յերկար պահեն. մեծ մասին բաց կթողնեն մի յերկու-յերեք ամսից:

— Իսկ յես կարծում եմ, վոր բոլորովին հակառակը կլինի: Մենք կրակել ենք ժանդարմների վրա: Այժմ վոստիկանությունն ամեն միջոցի կդիմի խոշոր դատավարություն պատրաստելու:

Փողոցում մի գեր կին սպիտակ հաց եր ծախում: Բրոդարկյան ուրախ ծիծաղեց:

— Ա՛յ, սա յես հասկանում եմ: Չե՞ վոր այսոր յես դեռ վոչինչ չեմ կերել: Յեկ հաց գնենք ու գնանք անտառով, ահա այն կածանով:

Գյուղացի կանայք, վերջացնելով իրենց գործը, տուն եյին վերադառնում:

Մերկ վոտքերով փոշի բարձրացնելով ճանապարհի վրա, նրանք բարձրաձայն զրուցում եյին ու դատողություններ անում այդ որը քաղաքում տեղի ունեցած «դժբաղդության» մասին:

— Յես հենց այն ժամանակ կաթը ձեռքիս գնում եյի մայթով, յերբ սկսվեց կրակոցը: Բանվորները փախան... Խանումը, վոր ինձանից չարունակ կաթ է վերցնում, ասում է, իբրև թե մեղավորը բանվորներն են: Ժանդարմների վրա առաջինը նրանք են կրակել:

— Տեր աստված, տեր աստված,—մոմրռում եր սպիտակահեր գյուղացի մի կին, խա-

չակնքելով:—Ինչե՜ր տեսանք... Յեղբայրը յեղբորն է սպանում: Են էլ մի անգամ չէ, սիրելիներս: Ամեն տարի բանվորները խռովություն են սարքում, ամեն տարի կրակում են... Առաջ ժամանակ այդ տեսակ բան չկար:

— Մենակ մեզ մոտ չի այդպես... Ասում են ուրիշ յերկրներում էլ բանվորներն ապըստամբում են: Ռուսաստանում բոլոր յեկեղեցիները քանդել են: Յերեկ չէ առաջին որը տեր հայրն եր ասում:

***

Սավան մեղմ վշշում եր: Մանրիկ ալիքներն անձայն սահում եյին դեպի ափի ավազը: Արեգակի վերջին հորիզոնական ճառագայթները բոցավառվեցին ծառերի մեջ, ներկեցին ջուրը սուտակի գույնով ու անհայտացան:

Խավարը հանդարտ ու անշշուկ ծածկեց առարկաները, բռնեց բոլոր անկյունները, մեղմելով սիլուետների ուրվագծերն ու միաձուլելով գույները, վորպես մի ամբողջական անորոշ զանգված...

Բալկանի վրա վառվեցին ելեքտրական ճրագների լուսավոր շերտեր: Ծլնգում եյին տրամվայները, բռներով մավի կայծեր ցանելով: Մարդիկ շտապում եյին, արագ վազվզելով բոլոր ուղղություններով, ինչպես մըրջյունները՝ մրջնոցում: Մասնավորապես քաղաքի ծայրամասերում, բանվորական թաղամասերում վոչ վոք չի կամենում կանգ առնել մայթին: Վոչ վոք չի ցանկանում իր վրա

գրավել վոստիկանական գործակալների ու ժանդարմական պահակների ուշադրությունը...

Կես որվա ժամի յերկուսից սկսած թաղային բաժանմունքների փոքրիկ, սևացած, թթու սուր գարշահոտությամբ բռնված բանտային խցերն ու կենտրոնական վոստիկանության ստորերկրյա բանտերն անընդհատ լըցվում են ձերբակալվածներով: Արդեն ձերբակալված են այն չորս հոգին, վորոնց հանձնարարված եր թռուցիկների տարածման գործը: Բռնվեցին այն մոմենտին, յերբ թարմ, տպագրական ներկի հոտ բուրող թռուցիկների կապուկները վերնաշապիկների տակ թագցրած, նրանք դուրս եյին գալիս փոքրիկ մասնավոր տպարանի նկուղից: Նրանց դեմքերն արդեն ծածկված են կանաչ ու կապտին տվող յերանգներով: Նրանց դաստակները սեղմված են կապանքների պողպատյա ողակներով:

Խավար փողոցների սալահատակներով ծանր քայլում են սև կերպարանքներ, վորոնց մեջքերին փայլում են սվինների լայն, կարճ սայրերը:

Ձերբակալված գործադուլավորները դընում են: Կենդանի-կենդանի գնում են դամբարան, քայլելով գլխահակ, ավելի նման գիշերային ֆանտաստիկ ուրվականների, քան մարդկանց...

Բրոդարկայի փոքրիկ յեղբայրն ընդունում է բարկացկոտ հյուրերին: Հյուրերը կա–

տաղլ չուել են բեղերը, դոփում են կրունկները ծանր պայտերով, տակն ու վրա յեն անում անկողինը, սենյակով մեկ դես ու դեն են անում գրքերը, թղթերը, տնային տնտեսության մանր առարկաները: Յեվ կենդանի հետաքըրքրություն են ցույց տալիս դեպի տանտիկինը, դեպի նրա առողջությունը:

— Ո՞ւր է քուրդ: Ինչպե՞ս է նրա առողջությունը:

Այդ անսովոր այցելությունը յերեխային շատ զվարճալի յե թվում: Յեվ նա, նայելով Հասո ժանդարմի քրտնած դեմքին, ծիծաղում է խորամանկ ու կլկլան:

— Ի՞նչ ես խրխնջում, խողի ճուտ: Քիթդ վոր կտրեմ, այն ժամանակ ել կծիծաղես...

Բայց յերբ բանը հասավ քրոջ մահճակալի գլխավերև կախած Լենինի նկարին, յերեխան զգաց, վոր դրությունն ավելի լուրջ է, քան թվում եր սկզբում: Ու թափով ձգելով Հասո ժանդարմի փեշը, վորն աշխատում եր «նկարը» պոկել, բարկացած բացականչեց.

— Նկարին ձեռք մի՛ տուր, քեռի՛: Ինչպե՞ս ես համարձակվում:

Ժանդարմներից մեկը բռնեց յերեխայի վզից ու կատվի ձագի նման շպրտեց անկյունը:

— Յեթե դու մի փոքր մեծ լինեյիր, յես քեզ նկար ցույց կտայի, բոլշևիկյան լակոտ...

Պառավը յեղավ բոլոր հիվանդանոցներում, բոլոր մորգերում և շուտափույթ ոգ-

նության կետերում, փնտրելով աղջկան: Հոգնած, գունատ, շնչահեղձ վազ եր տալիս նա փողոցներով, ակնապիշ նայում եր մարդկանց դեմքերին, խնամքով հեռու վանելով իրեն սոսկում պատճառող միտքը: Յերեկոյան դեմ ծանր ներս մտավ իր բնակարանի շեմքից:

Սենյակում քաոսային դրություն եր տիրում, ծխախոտի ծուխ եր կանգնած: Յերեխան վազեց մոր մոտ:

— Մամա, ժանդարմները գողացան բոլոր նկարները: Նրանք փնտրում եյին Բրոդարկային:

— Ի՞նչ եյին ասում:

— Հարցնում եյին, ո՞ւր ես գնացել դու: Յես ասացի, վոր դու գնացել ես Բրոդարկային փնտրելու:

— Իսկ ինչո՞ւ ամեն բան տակն ու վրա յե արված: Անկողինն ինչո՞ւ յե քրքրած:

— Այնտեղ ել փնտրեցին:

— Ո՞ւմ, Բրոդարկայի՞ն...

— Վոչ, մամա, Բրոդարկային չէ, այլ նամակներ...

— Փա՛ռք աստծո, — խաչակնքեց պառավը, մանկան սեղմելով իրեն, — նշանակում է աղջկան դեռ չեն ճանչել...

* * *

Գիշերվա ժամի մոտ յերկուսն եր, վոր Բրոդարկան և Միլանը տուն եյին վերադառնում: Բրոդարկան ցուրտ եր զգում: Մանա-

վանդ այդտեղ, ծառերով չպաշտպանված տափին, ուր քամին ավելի ուժգին եր փչում:

Յերկնքով մանրիկ ամպեր եյին լողում, ծածկելով լուսնի դեմքը:

Փախստականները մոտենում եյին Սավայի կամրջին, վորը մի ծայրով հենվել եր քաղաքի ծայրամասի բանջարանոցներին, մյուսով՝ արտերին ու անտառակին:

— Կամուրջի վրա պահակ կարող ե լինել...Արդեն ուշ ե: Պահակը կարող ե մեզ ձերբակալել:

Միլանն ինքնավստահ թափահարեց գլուխը:

— Հազիվ թե: Քանի անգամ անցել եմ այս կամուրջով, յերբեք վոչ մի պահակ չի յեղել: Յեվ, վերջ ի վերջո, անգամ յեթե այդպես լինի:

— Հապա խուզարկությո՞ւնը: Իսկ զե՞նքը,—արագ հարց տվեց Բրողարկան:

— Այո, ճշմարիտ ե: Յես բոլորովին մոռացել եյի, վոր գրպանումս...Դե, լավ, վոչինչ, մոտ կգնանք ու կտեսնենք: Յեթե կամուրջի վրա պահակ լինի, մենք կարող ենք մի փոքր ցածրանալ ու գետն անցնել լաստով: Այստեղից հարյուր մետր ներքև լաստավար կա:

Կամուրջին մոտեցան կամացուկ, շունչները պահած ու միմիանց ձեռք սեղմած: Անցավ մի քանի րոպե: Ամպի ծածկոցի տակից դուրս նայեց լուսնյակը, լուսավորելով կա-

մուրջի մեջտեղ գտնվող նիզակը, անշարժ կանգնած մարդկային կերպարանքի գլխավերեվ:

— Պահակ,—շշնջաց աղջիկը:

— Տեղիցդ մի շարժվիր: Սպասիր, մինչև նորից մթնի:

Լուսինը ծածկող ամպերը կրկին խավարի մեջ թաղեցին շրջապատը: Փախստականներն արագ վազեցին ճանապարհով ու ափի մացառուտներով հասան ծերունի լաստավարի հյուղակի կրակին:

Սավան հանդարտ թավալում եր իր ջրերը, ու թփերի ճողփյունն հազիվ եր լսվում...

Բրողարկան ավելի մրսեց. Նա մոտ սեղմվեց Միլանին:

Այնտեղ, գետի մյուս ափին, արվարձանի ցածրիկ տնակներից մեկից լսվում եր մեկի բարձրաձայն, աղեկտուր լացը, վոր յերբեմն խլացնում եր շների վոռնոցներն ու տարածվելով, խլանում եր գետի մակերեվույթի վրա:

— Յերեկ նրա ամուսինն սպանվել ե այսոր,—շշնջաց Բրողարկան:

Բրողարկայի բնակարանի մոտ, դարպասի ստվերում Միլանը թեքվեց դեպի աղջիկն ու հանդիստ և վստահ շշնջաց, կարծես բյուրոյի նիստում եր գտնվում:

— Քեզ յես կառաջարկեյի հետևյալը. տանը դու կիմանաս, փնտրե՞լ ե քեզ այսոր վոստիկանությունն արդյոք: Յեթե փնտրել

է, դու տանը մնալ չես կարող: Գնա մորաքրոջդ տուն, վորի մոտ յերեկ նյութերը թողեցինք: Իսկ հետո կտեսնենք:

— Հապա դու վորտե՞ղ ես քնելու: Տեղ ունե՞ս: Քեզ էլ յերևի տանը ժանդարմներն են սպասում:

— Յես ապահով տեղ ունեմ... Միայն այստեղ կանգնել չի կարելի: Յես գնացի: Ցտեսություն:

Մի քանի վայրկյանից Բրոդարկան արդեն միայնակ քայլում էր մայթով: Յետ նայեց— Միլանը չկար: Ակամա կանգ առավ: Ներսում աճեց ինչ վոր մի ծանր, մեծ և սառը բան, ինչպես գերեզմանաքար: Մենակությո՛ւն... Միլանի համար...

Գնում էր զգույշ, գրպանում ջղաձգորեն սեղմած ատրճանակի կոթը, ամեն ակնթարթ չորս կողմը նայելով: Տների սև լուսամուտները նայում էյին, ինչպես մարդու աչքերի դատարկ խոռոչներ: Փողոցի հեռավոր մասում, սյունից կախված լապտերի անորոշ գունդն էր տարուբերվում: Իր ապրած տան մոտ Բրոդարկան թագնվեց դարպասի վորմախորշում:

Զրխկաց դռան փականն ու պատշգամբում յերևացին ժանդարմների սիլուետները: Զինված մարդիկ շռնդացնելով նիզակները, կանգ առան, գլանակ ծխելու: Լուցկու բոցը լուսավորեց վոստիկանական գործակալի մուռ

ռունգները կիսախուզած բեղերի վերև կախված ու պենսնեյի ապակիները:

Անձայն, ինչպես ստվեր, Բրոդարկան նետվեց դարպասից ու թաղվեց փողոցի խավարում:

Մի քանի րոպեյից Բրոդարկան կամացուկ ծեծեց պառավ Ջուլհակուհու սենյակի դուռը:

Միլևան, արթնանալով անսպասելի այցելությունից, հազալով ու կիսաձայն փնթփնթալով, մուճակները գցեց մերկ վոտքերն ու մոտեցավ դռանը:

— Ո՞վ է,— հնչեց նրա դժգոհ ձայնը:

— Բա՛ց արա, մորաքույր, յե՛ս եմ,— պատասխանեց Բրոդարկան մեղմ:

— Ո՞վ է այսպես ուշ ժամանակ: Ա՜խ, այդ դո՞ւ յես, Բրոդարկա: Վորտեղի՞ց այս ժամանակ: Մայրդ ամբողջ որը քեզ էր փնտրում:

— Գիտեմ: Նա հավանորեն այժմ էլ չի քնել: Բայց յես տուն գնալ չեմ կարող: Այնտեղ վոստիկաններ կան:

— Մայրդ ասաց, վոր քեզ փնտրել են: Նա շատ էր վախեցել:

— Վաղո՞ւց է մայրս յեկել վերջին անգամ:

— Վոչ, յերեք ժամ առաջ կլիներ: Վաղը յես նրան կասեմ, վոր դու վողջ-առողջ ես ու

դանվում ես ինձ մոտ... Մի բան կեր ու պառկիր քնելու: Շուտով լույսը կբացվի:

— Ուտել չեմ ուզում, բայց խմել...

— Թան ունեմ, իսկույն բերեմ:

Արշալույսի պղտոր-սպիտակ լույսը ներս նայեց լուսամուտից: Քաղաքում լռություն էր տիրում: Բալկանը խորասուզվել էր այդ լռության մեջ՝ անշունչ ու անկյանք: Միայն գիշերային պահակների ծանր վոտնաձայներն էին, վորպես սուր աններդաշնակություն, ներխուժում այդ լռության խորքը:

— Դու պառկիր իմ մահճակալի վրա ու քնիր...Յես այլևս չեմ քնելու: Շուտով գործի պիտի գնամ...Բայց չգիտեմ...այսոր մերոնք աշխատանքի կգա՞ն...

Սառը, թթվաշ թանի ումպերը թարմացրին աղջկան: Նա յետ դրեց ալյումինի թասն ու հապճեպ մաքրեց շրթունքները:

— Հավանորեն, մորաքույր, արհեստակցական միությունների կոմիտեն վոչ մի միջոց ձեռք չի առել: Կոմիտեյի սոցիալ-դեմոկրատ անդամները յերևի արդեն համաձայնության են յեկել գործատերերի հետ:

— Դե լավ: Դու պառկիր ու քնիր: Այստեղ, պահարանում հաց, պանիր ու միս կա: Հերիք կանի քեզ, մինչև յես գործից վերադառնամ... Միայն տես, զգույշ յեղիր: Միջանցք դուրս մի արի սենյակից, յեթե այնտեղ մարդ կլինի: Իսկ յեթե դուռը ծեծեն,

դու ձայն մի՛ հանիր ու բաց մի՛ արա: Յերբ յես վերադառնամ, դուռը չեմ ծեծի, այլ կճանկռեմ...Իսկ մորդ կասեմ, վոր դու ինձ մոտ ես և ամեն ինչ լավ է:

— Վոչ, գիտես, ավելի լավ է, մորս մի ասա թե յես վորտեղ եմ: Ասա միայն, վոր յես վողջ-առողջ եմ և թաքնվում եմ վոստիկանությունից: Իմ այստեղ լինելու մասին գիտենք միայն յերեքով,—յես, դու և Միլանը:

— Ի՞նչ Միլան:

— Նա, վորի հետ գրքերը բերեցինք... Մեր գործարանից է...

— Հիմի վո՞րտեղ է նա:

— Չգիտեմ: Մենք մի քիչ առաջ բաժանվեցինք: Յես,—Բրոդարկան ձայնն իջեցրեց,— շատ եմ վախենում, վոր նրան ձերբակալեն: Նրա բանը վատ կլինի, յեթե նրանց ճանկն ընկնի:

— Իսկ նա ապահով տեղ ունի՞:

— Այո: Վախենում եմ միայն, վոր նրան ճանապարհին ձերբակալեն: Ինձ էլ քիչ մնաց բռնեյին:

— Լավ: Մորդ կասեմ: Քնիր:

Մութ յերկնքի ֆոնի վրա, դետնահարկ հյուղակի դռան առաջ հայտնվեցին ավելի ևս մութ սիլուետներ: Փողոցը քնած էր: Մարդիկ խոսում եյին շշուկով, համառոտ:

Թողեք, դրանից բան դուրս չի գա... Նա

վախկոտի մեկն է...Ոչ մի պայմանով նրա չի թողնի...

— Կթողնի... Դուռը ծեծենք... Միայն զգույշ...

Մի քանի ընդհատ հարվածներ դռանը: Դռան յետև բոբիկ վոտքերի ծանր, զգույշ քայլեր:

— Վո՞ր սատանան է:

— Բա՛ց արա, քեռի՛ Մատե:

Լռություն:

Դռան յետևում յեղածի ձայնում անվճռականություն կա:

— Դո՞ւ յես, Սլավկո: Այսպես ուշ ի՞նչ ես ուզում:

— Բա՛ց արա, կարևոր գործ կա:

Դուռը ճռնչած: Բոցավառվեց ու հանգավ լուցկին:

— Իսկ սրանք ովքե՞ր են քեզ հետ, Սլավկո: Ի՞նչ եք ուզում:

— Մի՛ վախեցիր... Սրանք բոլորը մեր մարդիկն են... Ծածկի՛ր դուռը, ծերո՛ւկ:

Պատերի վրա պարեց գրպանի լապտերի լուսավոր շերտը:

— Սա խոհանոց է, աղե՛րք...Նստեցեք տա բուրետների վրա, այստեղ, սեղանի մոտ: Միայն հանդարտ, քնածներին չարթնացնեք:

Տանտերը քաշեց Սլավկոյի թևը:

— Մարդի՛կ, խելքներդ թռցրե՞լ եք: Ինձ

մոտ ուզում եք ժողո՞վ անել,—հարցրեց Մատեն, հուզված շշուկով:

Սլավկոն հանգստացնող խփեց նրա ուսին:

—Մի՛ վախեցիր, Մա՛տե: Քեզ վրա վոչ մի կասկած չկա: Քեզ մոտ, յերևի, վոստիկանությունը չի գա: Իսկ մենք ուրիշ տեղ չունենք: Ընդամենը կես ժամ կտևի:

— Բա եղպես բան կմտածե՞ն: Յես ընտանիք ունեմ...Յերեխաներ... Լավ կանեյիք ուրիշ տեղ փնտրեյիք:

— Լավ, լավ... Ժամանակ չկորցնենք: Ավելի լավ է դու դուրս արի փողոց, հսկիր: Իսկ մենք լույս ել չենք վառի:

Սենյակի դաղջ, տաք, խտացած ոդը, պլիտայի դեռևս չհանգած կրակով և մարդկանց շնչառություններով ջերմացած, յերերում եր ջրիկ խաշի նման լերդացած: Սենյակում, սեղանի շուրջ բոլորած հինգ հոգու գլուխները լուսամուտի գորշ կիսախավարում հիշեցնում եյին ջրասույզների սաղավարտներ: Բառերը դուրս եյին թռչում արագ, կլկլոցով և բառերի բշտիկները լողում եյին դեպի ցածրիկ առաստաղը...

— Գործարանային բջիջի բոլոր անդամներից ազատվել ենք միայն մենք, հինգ հոգիս: Մնացածներին ձերբակալել են: Կուսակցական կոմիտեյի հետ կապը խզվել է: Հույս չկա, վոր քաղաքի ձեռնարկությունների մեծամասնությունը վաղը գործադուլ անի...

Սլավկոն շտապով բաց եր անում բոլոր

խաղաթղթերը մեկը մյուսի յետևից: Բոլոր թղթերը կարծես խփված-տարված լինեյին... Իր համար ուղեղի խորքում մտքի հաշվիչի վրա գցում եր շանս-հատիկները—թեր ու դեմ...

— Կապ չկա—մեկ: Ցեմենտի գործարանը, մեքենայականը և յերկաթուղային արհեստանոցները վաղը անպայման աշխատանքի դուրս կգան—յերկու...

— Սպասի՛ր, սպասի՛ր, Սլա՛վկո... Յերիտասարդ հնոցապան-կոմյերիտականը մթության մեջ ձեռքով անտեսանելի բողոքի շարժում արեց:—Մենք կարող ենք-այնպես անել, որ և՛ գործարանը, և՛ արհեստանոցները վաղը աշխատանքի դուրս չեն գա,—արտասանեց նա, աշխատելով շշունջին, որքան կարելի յե, կորովի շունչ ներշնչել:

— Ինչպե՞ս կանես այդ:

Մի րոպե դադար տիրեց:

— Գործը շատ պարզ է,—սկսեց հնոցպանը,—ցեմենտի գործարանը գտնվում է լեռան տակ, իսկ բանվորներն ապրում են ջհանդամի ծայրին—Սավայի մոտ: Նույնն ել՝ յերկաթուղայինները: Մեզ հարկավոր է կանգնեցնել... տրամվայը...

Մթության մեջ մեկը խեղդեց իր հավանության ծիծաղը:

— Ճիշտ է, ընկեր... Տրամվայը կանգնեցնելն ամենից ուղիղ միջոց է: Միայն

թե դու հարկադրված կլինես մեզ հետ անմիջապես շրջել տրամվայի բանվորների բնակարանները: Ժողով, հասկանալի յե, գումարել այժմ անհնարին է: Հարկավոր է այս գիշեր և վաղը առավոտյան տեսնվել թեկուզ նրանց հետ, վորոնց հերթը վաղը առավոտյան է...

— Ի՞նչ եք ասում, նշանակում է համաձա՞յն եք:

— Համաձայն ենք:

— Գնանք: Թե չէ տանտերը, յերևի դըրսում վախից մեռավ:

***

Մյուս որը փողոցներում աչքի ընկավ տրամվայների բացակայությունը: Ժանդարմական պահակներն ուժեղացված եյին: Ռելսների վրա հանգիստ թռչկոտում եյին ճնճղուկները, վազ եյին տալիս քաղաքի շները՝ պոչերը բարձր տնկած ու սրածայր դնչերը գետին պարզած: Տրամվայի կայաններում մարդիկ չորս բոլորքն եյին նայում, հույս ունենալով շրջադարձերում լսել անիվների հանրածանոթ քստոցը, զանգակի ղողանջը, տեսնելու վագոնների քերծված կարմիր կողերը..Բայց վագոններ չկային: Տրամվայի բանվորները հանգիստ քնած եյին իրենց համար...Առանց սինդիկալ կոմիտեյի թույլտվության, նրանք բողոքի գործադուլ եյին հայտարարել բանվորական ցույցը գնդակոծելու դեմ:

Սոցիալ-դեմոկրատներն արհեստակցական միությունների կոմիտեյում կրակ ու բոց եյին ժայթքում... Տրամվայի բանվորների միության նախագահը բռունցքով ծեծում եր սեղանը:

— Սա իսկական քաղաքականություն ե,— աղաղակում եր նա, թուք ցանելով չորս կողմը:—Ինչո՞ւ յեք դուք միջամտում այդ կոմունիստական խելացնորության: Ուզում եք ծա՞կը մտնել: Ո՞վ ե ձեզ խնդրում պաշտպանել այդ անարխիստների ինքնասիրությունը... Միևնույն ե, նրանց բոլորին հրացանազարկ են անելու թռչունների նման: Ուզում եք, վոր ձեզ հետ ե՞լ նույնը պատահի:

Լիադորները մռայլված, անհանգիստ շարժում են անում կանգնած տեղերում, հոնքերի տակից խոժոռ նայելով նախագահին: Նրանցից մեկը հանկարծ ցասկոտ վոտքը հատակին խփեց.

— Բայց և այնպե՛ս, գործադուլ կանենք...բացականչեց նա կատաղի ու չուռ յեկավ դեպի դուռը: Նրա յետևից՝ մյուսները: Նախագահը զայրացած թքեց ու հայհոյեց:

Արդեն առավոտյան ժամի յոթն եր:

Քաղաքի վերջում, լեռան ստորոտում վոռնաց ցեմենտի գործարանի շչակը: Նրան ձայնակցեցին յերկաթուղային արհեստանոցների շչակները: Վոռնոցն ընդարձակվում եր, մեծանում: Ձայների զամաններին միախառնը-

վեցին «Ցադրան» ակցիոներական ընկերության տեկստիլ ձեռնարկությունների կանչի ցածր տոները:

Ի՞նչ ե: Գործադո՞ւլ: Բողո՞ք: Համերաշխությո՞ւն: Պայքա՞ր:

Վոչ:

Դա կոչ ե նոր աշխատանքային օրվա, սովորական ու առօրյա, ինչպես հազարավոր նախընթացները:

Համերաշխությունը թաղված ե արհեստակցական միությունների կոմիտեների ստորաքարշության ճահճում:

Ցերեկվա գործադուլավորներն իրենց հին տեղերումն են: Կրկին դղրդում ե գիգանտի սիրտը—ելեկտրոցենտրալը:

Մեքենայացրած հնոցների կոնվեյերները կլանում են ադամանդի պես սև ու փայլուն քարածխի կոշտերը: Կաթսաների կոլեկտորներում վերև՝ առաստաղի տակ հուժկու մռնչում ե ու յեռում գոլորշին: Հսկայական, ծանր զոռում են լայնականիջ տուրբինները: Գեներատորների խողանակների տակից ճարճատելով վեր են ցատկում կապտավուն կայծեր: Կաբել-զարկերակների միջով ուժը հոսում ե բաժանմունքները, շրջում ե հղկված գլանները, տրանսմիսիաները, բզզում ու պտտում ե հազարավոր մանածային իլիկներ, լցնում ե անկվածային սրահները նորդորոպների խլացուցիչ ճայթյունով:

Վարժ շարժվում են բանվորական ձեռքերը։ Հագուստը ծածկված է փոշու շերտով ու բամբակի մազմզուկներով։ Գլուխները խոնարհված են աշխատանքի վրա։ Ամեն մեկը վազվզում է իր ստանոկի շուրջը, ուղղելով թելը, յուղ լցնելով, փոխելով ճախարակները։ Բայց բոլոր մեքենաները չեն աշխատում։ Յերկար, գալարվող փոկերի շարքերում այստեղ ու այնտեղ անկյանք կախ են ընկել շկիվներից դուրս ընկած լարերը, արդեն ծածկված բամբակի փոշով։ Չխչխկացող ու աղմկող նորդտրոպների շարքում յերեք–չորս ստանոկ կողք–կողքի կանգնած են անշարժ ու լուռ, ինչպես միջնադարյան դղյակի ավերակներ։ Չեն շարժվում այդ ստանոկների մոտ արագաշարժ վոտքերը, չեն խոնարհվում նրանց վրա գունատ ու վտիտ դեմքեր։ Չկան այսօր նրանք, վորոնք աշխատում եյին դեռ յերեկ... Յեվ չե՛ն լինի...

Փոթորիկն անցավ։ Գործադուլավորները կրկին աշխատանքի յեն։ Կաֆեներն ու ռեստորանները բաց են։ Ժանդարմների ուժեղացրած պահակներն ամեն տեղ պաշտպանում են պաշտելի խաղաղությունը և «անձնական ապահովությունը»։ Բորսան աշխատում է նորմալ։ «Ցադրան» ընկերության ակցիաները պահպանում են իրենց նախկին կայունությունը։

Ամեն ինչ կարգին է։

***

Յերբ Բրոդարկան արթնացավ, մոտ ժամի տասներկուսն եր արդեն։ Արեգակի շողերը վողողել եյին անկողինը, տաքացնելով բարձն ու վերմակը։

Տրորելով քնաթաթախ-խոնավ աչքերն ու ճակատի քրտինքը մաքրելով, Բրոդարկան միանգամից չկարողացավ վորոշել, թե վորտեղ է գտնվում ինքը։ Այս ի՞նչ սենյակ է, խոհանոցի նման։ Դեպի ո՞ւր են նայում փոքրիկ, անծանոթ լուսամուտի ապակիները։ Այդ ում գոգնոցն է այդպես անհոգ ընկած կոշտ փայտե աթոռի մեջքին։ Արագ հավաքեց քնից խառնափնթորված մտքերը։ Գործադուլ... ընդհարում... վոստիկանություն... իսկ ո՞ւր է Միլանը։

Բրոդարկան արագ դուրս թռավ անկողնից, վրան գցեց հանած հագուստը և մոտեցավ արևից տաքացած ջրով լի թասին։

Մեծ, դեղին, բրդոտ և արտասովոր լուրջ կատուն ծուլորեն նայում եր լուսամուտի գոգից իր ժամանակավոր տիրուհուն։

Քանի Բրոդարկան շտապ լվացվում եր, կատուն առանձին ուշադրություն չնվիրեց նրան։ Յեվ միայն այն ժամանակ, յերբ նա բացեց պահարանը, ուր գտնվում եր ուտելիքը, կատուն գտավ, վոր այլևս անտարբեր մնալ չի կարելի։ Ցատկեց լուսամուտից և բրդոտ մորթով փաղաքշական սեղմվելով աղջկա վոտքերին, փայլուն դորշ աչքերի հայացքով հա-

մառ ցանկություն հայտնեց նախաճաշին մասնակից լինելու... Նրա խնդիրն անպատասխան չմնաց: Նա շատ շուտով ստացավ մի կտոր ճարպ ու մի մեծ կտոր հաց՝ կաթի մեջ թաթախած:

Նախաճաշից հետո Բրոդարկան փորձեց կարդալ: Բայց գլուխը վատ էր աշխատում: Յեվ յերբ լսեց լրագրավաճառ յերեխաների կանչերը, նրան պատեց սոսկալի անհամբերություն և հսկայական ցանկություն՝ ինչ ուզում է լինի, շուտով լրագիր ձեռք բերելու, միակ միջոցը, վորով նա կարող էր տեղեկանալ իր ընկերների դրության մասին:

Լսվեցին գործարանային շչակների ձայները: Ճաշի ընդհատում:

— Նշանակում է, գործադուլը վերջացավ,—շշնջաց Բրոդարկան մռայլ:

Կրկին զգաց իրեն անուժ ու միայնակ: Յերեկվա պատկերները վերածնվեցին նրա աչքերի առաջ:

— Մի՞թե սա բանվորական համերաշխություն է,—շշնջում էր նա, ջղային քայլելով սենյակում:—Սա ի՞նչ դրողի տարած համերաշխություն է, յերբ ընկերների գլխները դեռ չեն սառել, իսկ նրանք արդեն աշխատում են տերերի համար:

Բրոդարկան հուզմունքից կրծոտում էր շրթունքները: Կատուն բարեսիրտ ու հանգիստ նայում էր լուսամուտի գոգից տների

կղմինդրե տանիքներին, յերկնքի փետրավոր ամպերին ու սալահատակի վրա թռչկոտող ճնճղուկներին: Յերբեմն փիլիսոփայական հայացք էր նետում Բրոդարկայի վրա և վիրավորված շուռ էր գալիս, չհասկանալով, թե ինչո՛ւ այդ մարդը խենթի նման վազ է տալիս սենյակում, փոխանակ ուտելուց հետո նստելու լուսամուտի գոգին ու խաղաղ հրճվելու արևգակի ջերմությամբ:

Բրոդարկան մի քանի անգամ բուռն ցանկություն զգաց փողոց դուրս գալ և լրագրեր գնել: Բայց ամեն անգամ պատկերանում էր առաջը Միլանն իր խորհուրդներով՝ կոնսպերացիայի մասին: Նա տեսնում էր նրան՝ մուրճը և պտուտակի բանալին ձեռքին, յուղոտած կանաչ վերնաշապիկով, մանածային մեքենայի մոտ: Մեկ էլ նա պատկերանում էր նրան փողոցում, ատրճանակից ժանդարմների վրա կրակելիս... Ահա նա սպրդում է պատերի մեջ... Ահա նա ծայրամասի պանդոկի փոքրիկ սենյակումն է՝ լցված ծխախոտի ծխով ու գործարանային բջիջի կոմունիստների կենտրոնացած լուրջ դեմքերով:

Դռան յետև ճանկռտոց լսվեց: Բրոդարկան պտտեց բանալին և զգուշությամբ բաց արեց դուռը, աշխատելով աննկատելի մնալ միջանցքի կողմից: Մորաքույր Միլևան արագ ներս մտավ, մաքրելով ծնոտի քրտինքը:

— Յես չտապեցի, վորովհետև իսկույն

պետք է վերադառնամ։ Այժմ ճաշի ընդմիջումն է։ Շատ նորություններ կան,—արագ ասաց Ջուլհակուհին, լայնացնելով մսուտ ռունգները խորը և հաճախակի շնչառությամբ։—Առավոտյան յեղա մորդ մոտ։ Պառավն ամբողջ գիշեր լաց եր յեղել։ Յերբ յես նրան ասացի, վոր դու առողջ ես, քիչ մնաց ուրախությունից խելքը թռցներ։ Յեղբայրդ առողջ է... Յես նրանց չասացի վորտեղ ես ապրում։ Իսկ քաղաքում կրկին խառն է,—շարունակեց Միլևան, մի րոպե շունչ առնելուց հետո։—Տրամվայի բանվորները չեն աշխատում։ Բազմաթիվ մարդիկ այդ պատճառով բոլորովին աշխատանքի չեն գնացել։ Ցեմենտի գործարանում, ասում են, համարյա մեքենաների կեսը կանգնած է։ Մեքենայական արհեստանոցում էլ համարյա նույն բանն է։ Աշխատանքի գնացել են միայն մոտակայքում ապրողները։ Պահանջում են ազատել ձերբակալվածներին, դատի տալ ինչ վոր ժանդարմական սպաների և ելի ուրիշ բաներ։ Գործարաններում մարդիկ սաստիկ հուզվում են։ Արհմիութենական կոմիտեն նիստի յե, ասում են, այսոր համարյա առավոտից։ Փողոցները լիքն են ժանդարմներով, թքելու տեղ չկա... Դե, յես շատ խոսեցի։ Պետք է գնալ աշխատանքի։ Դու լրագրերը կարդա։ Յես դեռ չեմ նայել։

Բրոդարկան արագ ծածկեց դուռն ու անհամբեր վերցրեց լրագիրը։ Հուզված եր և միաժամանակ ուրախ՝ Ջուլհակուհու բերած նորություններով։ Դեռևս ամեն բան կորած չի։ Աշխարհում ա՛յնուամենայնիվ ընկերական համերաշխություն գոյություն ունի։ Դեռ կարելի՛ յե կռվել, դրո՛ղը տանի։ Կեցցե՛ն տրամվայի բանվորները։

Սիրտը տրոփում եր ավելի արագ, քան սովորաբար։ Մատները դողում եյին լրագրի թերթը դարձնելիս... Յերկրորդ եջում եֆեկտավոր հաստ վերնագիր՝ «Ձերբակալված աղմկարարները»։ Խոշոր տառերով շարված մի քանի տող ազդարարում եյին «վոստիկանության վրա գործադուլավորների ավազակային հարձակման», «յերկու կողմից յեղած զոհերի» և «թագավորական վոստիկանության ձեռք առած յեռանդուն միջոցների» մասին, «պատշաճ հանգստություն և կարգ պահպանելու համար»։ Հայացքը սահեցնելով խայտաբղետ վերնագրերի վրայով՝ Բրոդարկան զարմանքից լայնացած աչքերը պահեց իր սեփական պատկերի վրա, վորի տակ տպված եր՝ «Բրոդարկա Գավրիլովիչ, գործադուլը գրգռողներից մեկը»։ Բրոդարկան անսպասելիությունից մի քանի ակնթարթ կարդալ չեր կարողանում, սակայն, ուշքի գալով, նա կարդաց «Թագնված խռովարարուհին» վերնագիրը կրող հոդվածը։

«Վոստիկանության վրա գործադուլա-

վորների յերեկվա հարձակման և դրան հաջորդող զինված ընդհարման ժամանակ ամենից ավելի աչքի յեր ընկնում մոխրագույն հագուստով մի յերիտասարդ աղջիկ, վոր անընդհատ կրակում եր գործադուլավարներից մեկի հետ, Վարդարյան փողոցի անկյունից: Նրանց գնդակներից սպանված են յերկու և վիրավորված չորս վոստիկան, վորոնք փորձում եյին նրանց ձերբակալել: Մի խումբ վոստիկաններ հետապնդեցին աղջկան և նրա ընկերոջը: Բայց հանցագործներն արագորեն անհայտացան միջափողոցում, փախչելով № 2/16 տան բակով, ուր նրանց վերջին անգամ տեսել ե այդ տանը բնակվող կանանցից մեկը: Հանցագործուհին մինչև այժմ չի հայտաբերված:

Վոստիկանության ունեցած միանգամայն հավաստի տեղեկությունները ապացուցում են, վոր յերիտասարդ խռովարարուհին «Յադրան» ակցիոներական ընկերության տեկստիլ գործարանի բանվորուհի յե և նույն գործարանի բանվոր, հայտնի կոմունիստ Գանսոն Գավրիլովիչի դուստրը, վորն անցյալ տարի անկարգություններ առաջ բերեց ընկերության ձեռնարկություններում և սպանվեց վոստիկանության հետ տեղի ունեցած ընդհարման ժամանակ:

Յերիտասարդ կոմունիստուհին ապրում եր Տրեխդլավսկի փողոցում, № 7 տանը, իր

մոր և փոքր յեղբոր հետ: Նա 19 տարեկան ե: Դեռևս առաջ կասկածվում եր գաղտնի կոմունիստական ընկերության պատկանելու մեջ, վորը մեր որենքն արգելում ե ազատ գոյություն ունենալու: Ըստ յերևույթին Գավրիլովիչն այդ շայկայի ակտիվ անդամն ե: Յերեկ ամբողջ օրը վոստիկանությունը խուզարկություն ե կատարել նրա բնակարանում: Փնտրումները շարունակվում են: Խուզարկությունը վոչ մի եյական արդյունք չի տվել:

Միջոցներ են ձեռք առնված չուտափույթ ձերբակալելու խռովարարուհուն և նրան վանդակը գցելու: Տալիս ենք այդ վտանգավոր բոլշևիկուհու նկարը, վորը գտնվել ե նրա բնակարանում կատարած խուզարկության ժամանակ: Յուրաքանչյուր ազնիվ քաղաքացու պարտականությունն ե հանցագործի մասին վորևե տեղեկություն ունենալու դեպքում անհապաղ հայտնել մերձակա վոստիկանական բաժանմունքին»:

Հարցը պարզ ե: Յեթե այժմ նա ձերբակալվի, նրան, համաձայն պետության պաշտպանության օրենքի, սպասում ե յերկարամյա աքսոր կամ մահ: Բրոդարկան մի րոպե իջեցրեց լրագիրը բռնած ձեռքը, թափահարեց գլուխն ու կրկին սկսեց կարդալ: Յերկար սյունակները թվարկում եյին «ձերբակալված խռովարարների» անունները, այն մարդկանց անունները, վորոնց հետ մինչև յերեկ Բրո-

դարկան բաժանում էր իր մտքերը, որոնց հետ ձեռք-ձեռքի գնում էր պայքարի։

Նրա առաջ պատկերացան ծանոթ դեմքեր։ Ուր որ հեռու, խորքում ջերմանում էր կծկըված հույսի կրակը.—Միլանը ձերբակալվածների մեջ չէր։ Հանկարծ նրա հայացքը կանգառավ թանձր տառերով յերրորդ եջի անկյունում ընկած տողերի վրա։

Նա ցուրտ զգաց։ Լայնացած բիբերն այլևս չէյին տեսնում շրջապատը։ Նա մաքրեց դեմքը հագուստի թևքով։ Ուղղեց ջղաձգորեն տրորած լրագիրը և, ահռելի կամքի ուժով զսպելով ճիչը, հարկադրեց իրեն հետևելու լրագրական նոր տողերին։

«Ձերբակալված է գլխավոր գրգռիչը

Բալկան, 17 մայիսի։

Գիշերվա մոտ ժամի յերկուսին Թատրոնական փողոցում ձերբակալված է Միլան Գրոիչը, գործադուլի և վոստիկանության վրա հարձակվելու գլխավոր կազմակերպիչը։ Վորոշ տվյալներից կարելի յե յեզրակացնել, վոր Միլան Գրոիչն է յերեկվա ընդհարման ժամանակ յերկու ժանդարմ սպանող Բրոդարկա Գավրիլովիչի համախոհը։ Ցերեկ ամբողջ որը վոստիկանությունն ապարդյուն փնտրում էր հանցագործներին և միայն գիշերը հաջողվեց նրան գտնել Միլան Գրոիչի հետքերը։ Ձերբակալվածի մոտ վոչ մի փաստաթուղթ չի գտնը-

վել, սակայն գտնվել է ատրճանակ։ Գրոիչը ներկայումս գտնվում է վոստիկանական գըլխավոր վարչության բանտում։ Մեր ունեցած տեղեկություններով, առաջին իսկ քննության ժամանակ նա ցուցաբերել է անասելի հանդըգնություն և համառություն։ Ըստ յերևույթին վոստիկանությունը գործ ունի ամենամոլի և վտանգավոր մի կոմունիստի հետ»։

Բրոդարկան կիտեց հոնքերը, պինդ սեղմեց շրթունքները։ Մի տեսակ հավաքվեց, ավելի փոքրացավ ու ամրապնդվեց։ Խնամոտ ծալեց լրագիրը, դրեց սեղանին ու մնաց այդպես անշարժացած, հայացքը մի կետի հառած։

***

Տրամվայի աշխատավորների միության նախագահն այսոր հավանորեն հազարերորդ անգամ հայհոյեց «անիծյալ կոմունիստներին» ու վերցրեց զանգահարող հեռախոսի փողակը։

— Այո։ Տրամվայի աշխատավորների միության նախագահն այստեղ է, ի՞նչ է հարկավոր։ Ա՛խ, այդ դո՞ւք եք, հարգելի։

Նախագահի դեմքն ընդունեց հարգանքի ու քաղաքավարության արտահայտություն։ Նա իջեցրեց ձայնը։

— Այո-այո, շատ մեծ անախորժություն։ Ինքս հասկանում եմ...ի՞նչ եք ասում։ Շատ-շատ վատ է։ Բայց յես համարյա անուժ եմ։ Չգիտեմ ամենևին ինչ անել։ Բայլշևիկները

բոլորովին խելքահան են արել իմ հիմարներին: Դուք ասում եք, վոր հարկավոր է վե՞րջ տալ...Լսում եմ... Հասկանում եմ...Բայց դուք, հարգելի, մտեք իմ դրության մեջ: Ինչպե՞ս վերջ տալ... Պարոն դիրեկտո՞րը... Նու, յես կաշխատեմ, հարգելի: Յես ամեն ջանք գործ կդնեմ: Այսուամենայնիվ ինքներդ գիտեք, վոր մենք չենք խրախուսում կոմու-նիստական անմտությունները...Այո... Լսում եմ...Կաշխատեմ... Խնդրեմ...Ցտեսություն:

Նախագահը կախեց փողակը, հոգնած ըն-կավ աթոռին ու դառնորեն տարածեց ձեռքե-րը:

— Ի՞նչ անեմ,— շշնջաց նա:— Ի՛նչ բրդոշ բրդեցին անիծյալները... Գետնի տակն անց-նեն, հա՛: Անախորժությունների ձեռքից այ-ևս ազատություն չի լինելու... Շա՛ն կյանք է: Գրո՛ղը տանի այս տեսակ կյանքը:

Դուռը բաղխեցին: Սենյակ սողաց վոչ այնքան բարձրահասակ, նիհար մի մարդ, հագնված վերջին մոդայով,— ընդգծված էլե-գանտ ու շքեղ: Վոչ մի խոսք չասելով, նա նըս-տեց աթոռի վրա, նախագահի մոտ, ծխախոտ ծխելով և շարունակ շարժելով գծաձև խու-զած աշխետ բեղերը: Գորշ աչքերի անգույն հայացքն արագ թռիչքներ եր գործում առար-կայից առարկա, ապա կանգ առավ նախագահի վրա, սառը հետաքրքրությամբ ու հեգնան-քով:

— Այդպես,— ասաց վերջապես յեկվորը, վոտքը վոտքին գցելով,— գործերը վա՞տ են:

Նախագահն աշխուժացավ: Նա լավ եր ճա-նաչում իր հյուրին: Նա նայեց նրան, հույսով լցված:

— Վատ է, պարոն Տրոտ: Յես այսոր վաղ առավոտից գլուխ եմ պատռում և չեմ կարողանում վոչինչ մտածել: Նրանց հետ համարյա անկարելի յե խոսել: Նրանք վերին աստիճանի գայրացած են յերեկվա գնդակոծու-թյամբ և չեն կամենում վոչինչ լսել: Գուցե դուք արդեն յելք գտե՞լ եք...— ավելացրեց նա-խագահը հաճոյական:

Տրոտը ցույց տվեց, վոր չլսեց վերջին նա-խադասությունը: Նա աչքերն հառեց առաս-տաղին և հակաճառություն չվերցնող տոնով հայտարարեց.

— Դուք, սիրելիս, պառաված տխմար եք: Դուք ինձ ավելի ու ավելի համոզում եք, վոր բացարձակապես անպետք եք գրավելու այն տեղը, ուր նստած եք: Զարմանում եմ, ինչ-պես է հանդուրժում ձեզ մինչև այժմ տրամ-վայի վարչությունը:

Նախագահը, լռությամբ կուլ տալով վի-րավորանքը, տրորում եր գլուխը: Վոչինչ անել չես կարող— այդպիսի մարդ է վոստիկա-նական գործակալ Տրոտը: Նա, հավանորեն, ունի այժմ փայլուն մի գաղափար: Նա միշտ

ծաղրում է մարդկանց, յերբ զգում է իր գերազանցությունը:

Տրոտը ծիծաղում եր ճռճռան, համարյա անձայն ծիծաղով: Հագենալով իր զոհի խըղճալի տեսքով, նա կրկին անտարբեր ու հանգիստ տեսք ընդունեց:

— Լսեցեք, աստծու գառը, գիտե՞ք ինչը կարող է փրկել ձեզ ձեր տեղն ու համբավը կորցնելու վտանգից:

— Չգիտեմ, պարոն Տրոտ:

— Հը...Չգիտե՞ք: Յես այդպես ել գիտեյի: Տրոտը դադար տվեց:

— Տը-պա-րան,— ասաց նա եֆեկտով ու վանկելով:

Նախագահը չեր հասկանում: Անօգնական կնճռոտելով ճակատն ու փորձելով իր դեմքին խորամիտ արտահայտություն տալ, նայում եր նա Տրոտին: Գործակալը կրկին անձայն ծիծաղեց:

— Դուք դեռևս գլխի չե՞ք ընկնում, սիրելիս: Յես այդ բանը պարզ տեսնում եմ ձեր դեմքի ապուշ արտահայտությունից: Լսեցեք ուշադիր:—Տրոտը կրկին դադար տվեց և թեքվեց նախագահի կողմը:

— Յերեկ բռնվել է կոմունիստների անլեգալ տպարանը: Տպարանը բռնվելու մասին բանվորները չգիտեն: Մենք կոմունիստական կուսակցության անունից կտպագրենք տրամվայի բանվորներին ուղղված կոչ, բայլշևի-

կյան տպարանի մեքենայով: Կոչի մեջ մենք հրավեր կկարդանք նրանց վերսկսելու աշխատանքները:

Նախագահը զարմանքից ապուշ կտրեց: Բայց և այնպես դեռևս նայում եր անվստահ: Այդպիսի հասարակ և, եյապես հանճարեղ յելք:

— Քանի՞ բանվոր կա այս հերթում, վորոնց դժվար չի լինի աշխատանքի կանգնեցնել:

— Կարգապահ և լսող բանվորներ կլինեն վեց-յոթ հոգի:

— Այդպես: Դրանք հենց առաջինը պիտի ստանան թռուցիկները: Հույս ունեմ ձեզ բացատրելու՝ հարկ չկա, թե ի՛նչ ձևով պիտի թռուցիկներն ընկնեն բանվորների ձեռքը: Դուք կունենաք մի զույգ աղմկարարներ, վորոնք այժմ ել հավանորեն ինձ մոտ հաշվառման են յենթարկված. Նրանք աղաղակ կբարձրացնեն, վորևե մեկին մեղադրելով պրովակացիայի, խաբեբայության և նման բաների մեջ: Հարկավոր է, ինչպես ուզում է լինի, կոնֆլիկտ առաջացնել տրամվայի բանվորների մեջ: Նու, թեկուզ մի փոքրիկ տուր ու դմփոց: Յես ոգուտ կքաղեմ դրանից և կձերբակալեմ հրահրողներին: Մնացյալն արդեն ձեր գործն է, սիրելիս:

Տրոտը վեր կացավ: Առանց հրաժեշտ տալու, ուղղվեց դեպի դուռը:

— Թռուցիկը կուղարկեմ ժամ ու կեսից հետո,— նետեց նա շեմքից։

***

Տրամվայի կայանը շրջափակող ցանկապատի դեղին դարպասի տակից դեպի փողոց են վազում փայլուն գորշագույն ռելսների շերտերը։ Դարպասի վերև չուգունի սյուների վրա գամված են հաստ յերկաթալարի ճոպանները։ Դարպասի յետև տրամվայի դեպոյի կարմրաորճագույն սևացած շենքն է։ Դարպասի մոտ ժանդարմերիայի պահակախումբն է և փոքր ինչ հեռու՝ հետաքրքրվողների մի խումբ։ Մեծ, ինքնավստահ մի ագռավ անվախ նստել է լարին, կտցով ժրաջան քրքրելով իր փետուրները։ Ցանկապատը յերկար է։ Այնտեղ, ուր նա սեղմում է արուարձանի միջափողոցը և միանում է կառուցվող զինվորական պահեստին, ցանկապատի ստվերում, առվակի զառիվայրի կանաչի վրա նստած են գործադուլավոր մի խումբ տրամվայի բանվորներ։ Դրանք այն բանվորներն են, վորոնք պիտի այժմ ստանձնեյին հերթափոխությունը ռեսպատների մոտ և փոքրիկ բաց տրամվայի վագոնների վրա։ Խմբից վորոշ հեռավորության վրա նստած են առանձին-առանձին հինգ, թե վեց բանվոր։ Նրանք անհոգ տեսքով ծծում են իրենց ծխամորճերը կամ աժանագին գլանակները և ծուլորեն դիտում են

չորս բոլորքը, վորպեսզի միջափողոցի վերջում կասկածելի անձնավորություններ յերևալու դեպքում, անմիջապես նախազգուշացնեն իրենց ընկերներին, պայմանավորված նշանով։ Կհնչի կամացուկ մեջե-մեջ սուլոց— և անմիջապես կանհայտանան մոխրագույն փոքրիկ թերթիկները, վորոնց վրա այժմ խոնարհված են գործադուլավոր տրամվայի բանվորների հուզված դեմքերը։

Ծանրամարմին սպիտակաբեղ բանվորը հանեց գլխարկն ու ձեռքով ջղայնորեն խառնեց կլոր գլխի խոնավ կարճ խուզած մազերը։

— Այստեղ ինչ վոր մի բան այնպես չէ, ընկերք,— փնփնթաց նա։— Չի կարող այսպիսի բան լինել։ Յերեկ ինձ մոտ յեկան ունիտար արհմիությունների կոմիտեյի մարդիկ և պահանջեցին, վորպեսզի յես աշխատանքի դուրս չգամ։ Իսկ այսոր կոմունիստները խնդրում են մեզ վերջ տալ գործադուլին։ Ինչպե՞ս կարող է այսպես լինել, հը՞։

Այդ հարցը շատերի գլխում եր դառնում։ Իսկապես՝ յերեկ յերեկոյան մարդիկ գործադուլի կոչ եյին անում, ապացուցում եյին, պնդում եյին, համոզում եյին, իսկ այսոր հանկարծ, վոչ այս, վոչ այն, առանց վորևե ակնհայտնի պատճառի, խնդրում են դադարեցնել այն գործը, վորը յերեկ իրենք են հենց սկըսել... Դա ինչ վոր նման չէ կոմունիստներին։ Յերևի այստեղ ինչ վոր մի բան կա։

— Ի՞նչ անենք այժմ։ Թերևս, այնուամենայնիվ, պետք ե աշխատանքի կանգնենք։ Մենակ մենք ենք մնացել։

— Հիմարություն ե։ Այս թռուցիկներն ուղղակի վոստիկանության սարքած կեղծիք են։ Յես լավ եմ ճանաչում կոմունիստներին։ Նրանք այսպես չեն անում։

— Այո, բայց թե մեզ եժան չի նստի։ Ինչ գրողի տարած գործադուլ անել ե, յերբ քաղաքի բոլոր գործարաններն աշխատում են։ Այ, աշխատանքից քեզ դուրս կշպրտեն, այն ժամանակ կիմանաս ինչ ե նշանակում քիթ խոթել այնտեղ, վորտեղ հարկավոր չե։

— Հապա ինչ, քո կարծիքով պետք ե գործը հենց այդպես ել թողնե՞լ։ Նրանք մեզ վոչխարների պես մորթեն փողոցում, որը ցերեկով, իսկ մենք սո՞ւս անենք։ Թաղա քրիստո՛ս ես գլխիս...

Վեճը բորբոքվեց։ Տրամվայի բջիջի կոմունիստների մի փոքրիկ խմբակ կողմնակից եր գործադուլը շարունակելու առաջարկության։ Մեծամասնությունը տատանվում եր։

— Ինչպես, տղայք, գնանք գործի։ Սատանան ինքը բան չի հասկանա նրանց թռուցիկներից։ Մեկ հարկավոր չի աշխատել, մեկ հարկավոր ե...

Թռուցիկները վաղուց եյին կարդացվել ու թագցվել, իսկ գործադուլավորների թիվը ցանկապատի մոտ շարունակ ավելանում եր։

Այժմ արդեն վոչ վոք վոչնչից չեր վախենում։ Բաժանված փոքրիկ խմբակների, վիճում եյին բարձրաձայն և վոգևորված, տրամվայի կայան հրապուրելով արվարձանի բնակիչներին։

Հերթապահ սմենան աշխատանքի դուրս գալուց մեկ ժամ առաջ յեկավ տրամվայի աշխատավորների միության նախագահը։ Բանվորները շրջապատեցին նրան։

Լսելով բանվորների ստացած թռուցիկի մասին, նախագահը հաճելի զարմանքի արտահայտություն տվեց իր դեմքին։

— Հապա, տեսնո՞ւմ եք, նույնիսկ կոմունիստները խելքի յեկան։ Ինչի՞ յե պետք ձեր արարքը, յերբ ամբողջ քաղաքն աշխատում ե։ Վոչ մի շահ դրանից չի ստացվի, բացի վնասից։ Դե, լավ, ընկերներ։ Յեկեք թողնենք մեր յերեխայական ինքնասիրությունն ու սկսենք աշխատանքը։ Յես բերել եմ ձեզ մեր կոմիտեյի վորոշումը գործադուլին վերջ տալու մասին։ Ի՞նչ կարիք կա ինքներս մեզ համար աննախորժություններ ստեղծենք, յերբ մեր պոչը վոչ վոք չի տրորում։

Նախագահը, կանգնած բանվորների բազմության կենտրոնում, աշխատում եր խոսել վորչափ կարելի յե հանգիստ ու վստահ։ Սկզբում նրան լսում եյին լարված ուշադրությամբ, հանկարծակի լռելով ու կենտրոնանալով։ Բայց հանկարծ բազմության գլխին,

ինչպես մտրակի հարվածը, շաչեց բարձր բացականչություն․

— Սո՛ւտ է։ Խաբեբայությո՛ւն...

Բոլորը ցնցվեցին ու յետ նայեցին։

Յերիտասարդ վագոնավար Ֆրանիոն յեռանդագին ճանապարհ հարթելով իր համար արմունկներով, բազմության միջից առաջացավ ու կանգ առավ նախագահին դեմ-դիմաց։ Բարձրացրեց ձեռքը բազմության վերև․

— Ընկերնե՛ր, մի հավատացեք նրան։ Նա խաբում է ձեզ։ Կոմունիստները վոչ մի թռուցիկ գրել անգամ չեն մտածել...

Նախագահը բռնեց Ֆրանիոյի վզից։

— Լռի՛ր, լակո՛տ։ Ինչպե՞ս ես համարձակվում բղավել այստեղ, յերբ քեզ վոչ վոք ձայն չի տվել։ Ինչո՞վ կարող ես ապացուցել քո կեղտոտ սուտը։

Բանվորները յետ քաշվեցին, յերկու միմյանց բախվող մարդկանց շուրջ առաջացնելով առաջ ընկած մարմինների, սեղմված բռունցքների և հոնքերի տակից փայլատակող աչքերի ողակ։ Յերկուսից մեկը պիտի այժմ հաղթի վոչ միայն իր հակառակորդին, այլև տիրապետի բոլոր ներկա յեղողների կամքին։ Ֆրանիոն և նախագահը զայրագին նայում եյին միմյանց, աշխատելով գուշակել, ինչ զենք է պատրաստել հակառակորդը։ Նախագահն արհամարական ծամածռեց շրթունքները։

— Վորովհետև դու խախտում ես կարգա-

պահությունը, լակոտ, մենք քեզ դուրս կշպրտենք արհմիությունից և աշխատանքից... Ինչո՞վ կարող ես ապացուցել, վոր թռուցիկները կոմունիստները չեն գրել։

Ֆրանիոն աչք ածեց բազմությանը և ասաց պարզ ու հատիկ-հատիկ․

— Կոմունիստները չեյին կարող տպագրել թռուցիկները, վորովհետև նրանց տպարանը վոստիկանությունը յերեկ յերեկոյան ձերբակալել է։ Մեկ... Կոմիտեն չեր կարող այսոր կոչն ստորագրել, վորովհետև յերեկ յերեկոյանից ամբողջ կոմիտեն բանտումն է։ Յերկու։

Բազմությունը տատանվեց։

— Խաբում ես, տղա։ Հապա ո՞վ է ստորագրել կոչը։

— Յերկնքի՞ց ընկավ, ինչ է։

— Վորտեղի՞ց գիտես, վոր տպարանը բռնել են։ Ո՞վ ասաց քեզ։

Ֆրանիոն ձայնը բարձրացրեց․

— Յես գիտեմ։ Յես յերբեք սուտ չեմ խոսել։ Դուք բոլորդ վկա յեք։ Ինձ ասել են այնպիսի մարդիկ, վորոնց կարելի յե հավատալ...

Ֆրանիոյի դիմաց բազմության միջից բուսավ վոչ բարձրահասակ, արագաշարժ մի մարդ, գծաձև խուզած աշխետ բեղերով։ Նա ակնդետ նայեց յերիտասարդ վագոնավարի դեմքին։

— Իսկ ո՞վ է հայտնել ձեզ, յերիտասարդ պարոն, վոր ձերբակալված է կոմունիստական

տպարանը... Նշանակում է, դուք կապ ունեք կոմունիստների հետ: Իսկ գիտե՞ք մեզանում այդպիսի բաների համար ի՛նչ է լինում:

Հրմշտելով բանվորներին, արագորեն առաջացան մի քանի ծանրամարմին մարդիկ: Նրանք կիսաշրջան բոլորեցին նիհար մարդու թիկունքում:

— Գործակալներ...—շշուկը պտույտ գործեց բազմության մեջ:

Նիհարավուն մարդը յետ գցեց բաճկոնի ոձիքը և Ֆրանկոն կապիչի դեղին ռետինի վրա տեսավ թագավորական յեռագույն գերբը:

— Հանուն որենքի,— բացականչեց մարդը,—յես քաղաքական վոստիկանության դետեկտիվ եմ: Դուք ձերբակալված եք: Բարեհաճեցեք հետևել մեզ:

Բանվորները քրթմնջացին: Մոտ շարժվեցին վոստիկանները: Հնչեցին զայրույթի բացականչություններ: Գործակալները, կարծես հրամանով, մարդկանց վրա ուղղեցին ատրճանակների սև փողերը:

— Հանգստությո՛ւն,— գոչեց Շրոտը:— Այսպես կվարվենք յուրաքանչյուր աղմկարարի հետ, ով գրգռում է քաղաքացիներին որենքը խախտելու: Ցրվեցեք ու անցեք աշխատանքի:

Իրեն շրջապատողների դեմքերը պտույտ գործեցին Ֆրանկոյի աչքերում: Նա չեր զգում ձեռքերի կապանքների բարակ ողերը, վորոնք

պիրկ սեղմում եյին բազուկների մորթը: Նա չեր զգում վոստիկանական գործակալի կոպիտ հարվածները: Սև ավտոմոբիլի դռների մոտ նա յետ նայեց: Տրամվայի կայանի դարպասները լայն բացված եյին: Դարպասից շռինդով ու սվվոցով դուրս յեկավ առաջին վագոնը...

***

Բրոդարկան վորոշեց փողոց դուրս գալ: Պլանը մանրակրկիտ կերպով մտածված, քննված է: Միլևայի միջոցով ձեռք բերեց բոլոր անհրաժեշտ բաները: Դեմքը կոսմետիկայով անվարժ գրիմ արեց, խնամքով սևացրեց դեղնած կոշիկներն ու ձեռքն առավ հովանոցը:

— Վոչ ուշ, քան յերկու ժամ տանը լինես,—խիստ պատվիրեց պառավ Ջուլհակուհին:

Բրոդարկան գնում եր թեթև քայլերով հասարակության հետ միասին: Ազատության զգացումը նրան ինչ վոր հատուկ թեթևություն եր պատճառում: Նա կարող եր գնալ ցանկացած ուղղությամբ: Նա կարող եր դանդաղեցնել քայլերը: Նա կարող եր, վերջապես կանգ առնել աշխույժ առևտուր անող վաճառատների լուսավոր ցուցադարակների առաջ:

Նախ և առաջ Բրոդարկան վորոշեց կտրել իր յերկար մազերը, վոր այնպես վորոշակի աչքի յեն ընկնում լրագրում զետեղված լուսա-

նկարում: Բրոդարկայի սև, ծանր, ալիքանման մազերն ամենալավ նշանն է...

Բրոդարկան մտավ մերձակա վարսավիրանոցը և հազիվ զսպեց ծիծաղը, մեծ հայելու մեջ տեսնելով իր շպարած ու ներկված դեմքը:

Գալանտ սանրված վարսավիրան, փայլելով մազամիջի բացվածքով ու ձյունաթույր վերնազգեստով, նստեցրեց աղջկան բազկաթոռում:

— Տղայաձև—կցանկանա՞ք:

— Այո, խնդրեմ:

— Իսկ ինչպիսին կկամենայիք, տիրուհի:

Մի պահ Բրոդարկան շփոթվեց դժվարին ու անսպասելի հարցից: Բայց շուտով հավաքեց իրեն:

— Վերջին վեննական ձևի...

— Ինչպես Լիանա Հայդին,—չգիտես ինչու ուրախացավ վարսավիրան:

— Այո, այո, հենց այդպիսին,—նրանից ոչ պակաս ուրախացավ Բրոդարկան:

— Ձեզ հիանալի կսազի: Այս րոպեյիս,— և վարսավիրան վարպետորեն չխկչխկացրեց մկրատը: Բայց և այնպես յես ձեր տեղը չեյի կտրի այսպիսի սքանչելի մազերը,—շշնջաց նա, ճարպիկորեն բարձրացնելով մետաքսանման փայլուն մազերի խիտ հյուսերը:

Քողարկումը վերջացավ: Բրոդարկան

վարսավիրանոցից դուրս յեկավ հանգստացած սրտով: Այժմ նա իրեն ապահով եր զգում արտաքին հսկողության գործակալներից:

Փողոցներում մարդկանց թիվն այժմ ավելի շատ եր: Կաֆեներն ու բարերը դղրդում եյին ջազ-բանդների սակսաֆոններից ու ծընծղաներից:

Բրոդարկան առաջ եր անցնում հասարակության միջով: Կանգ առավ հսկայական վառ լուսավորված ապակու առաջ, վորի յետեվ մոմե կիսատուկների վարդագույն մարմինների վրա վերջին մոդայի հագուստների ծալքերն ու զարդարանքները փաղաքշում եյին հայացքը: Նայեց հայելուն... Դեմքը և գլուխն իրոք անճանաչելի եյին: Բայց ամբողջ գործը փչացնում եր հին, բավական տրորված հասարակ հագուստը: Բրոդարկան հաշվեց իր ֆինանսական միջոցները և վճռեց, վոր կարող ե լրիվ մասկարադ սարքել:

Նա մոտեցավ վաճառասեղանին:

Յերբ քսան րոպեյից նա կրկին նայեց իրեն հայելու մեջ, արդեն նախկին Բրոդարկան չեր, այլ մի ելեգանտ օրիորդ եր, կտրած մազերով ու շպարված, տարազավոր հագուստով և նոր տարազավոր կոշիկներով:

— Այժմ ամեն ինչ կարգին ե,— շշնջաց Բրոդարկան և կրկին դուրս յեկավ մայթ:

Այժմ նա առաջ եր գնում կատարյալ անհոգությամբ: Սակայն ո՞ւր գնալ: Աղմկալից

փողոցները, հարյուրավոր պարապ, կուշտ մարդիկ, կաբարեների անգործությունը և գիշերային ռեստորանների վորկրամոլությունը զզվանք եյին առաջացնում: Տուն գնալ չի կարելի: Բրոդարկան մեքենայորեն նստեց տրամվայ և գնաց քաղաքի հյուսիսային մասը, կենտրոնական բանտի ուղղությամբ: Ինչո՞ւ: Նա ինքն ել չգիտեր:

Բանտի հսկայական մասսիվ շենքի դիմաց նեղ զբոսավայր ե: Շենքի պատերը դրսից լավ ծեփված են ու խիստ տեսք ունեն: Փոքրիկ լուսամուտները ծածկված են ներքեվից փայտե արկղանման կափարիչներով: Կափարիչի վերեվ յերեվում ե յերկաթյա վանդակների ձողերի մի մասը: Դարպասի աջ ու ձախ կողմերում պահակներ են կանգնած: Աշխույժ հասարակությունը ներքեվում անցնում ե զբոսավայրով, անբռնազբոսիկ խոսակցելով, ուրախ ծիծաղելով, շշնջալով և յերջանիկ ծիծաղում ե՝ նստարանների վրա նստած, ծառերի ստվերներում: Այստեղ լույս ե ու կյանք: Իսկ վերև, բանտի պատերի վրա միայն յերեք լապտեր ե տարուբերվում բարձր սյուներին, լուսավոր չերտեր նետելով պատերի գորշ քարերին: Ավելի վեր — վերին հարկերի խավար ուրվագծերը միաձուլվում են մութ ամպերի դաժան կապարին: Այնտեղ, վերեվում լարված, նեխած, ցավագին լռություն ե:

Բրոդարկայի գլխում ամրապնդվում եր

վորևե կերպ այդ շենքի ներսի հետ կապվելու միտքը: Նա ցանկանում եր մտքով թափանցել այնտեղ, բանտի պատերի այն կողմը: Կամենում եր տեսնել այնտեղ այն մարդկանց, վորոնց հետ նա դեռ յերեկ չե առաջին որը միասին աշխատում եր: Բրոդարկան լարեց ուշադրությունը, աշխատելով վորսալ վորևե ձայն մռայլ վանդակապատ փոսերից: Բայց այնտեղ, ներսում ամեն ինչ մեռած եր ու անշարժ և ծանր, լարված հեք եր միայն կարծես դուրս թռչում դամբարանի լուսամուտներից:

Բանտի դարպասների մոտ վզզում եյին ավտոմոբիլները. նրանք ձերբակալվածներին տանում եյին հարցաքննության ու յետ եյին բերում: Դարպասի փոքրիկ դռնակը բացվում եր ու փակվում, ներս թողնելով կապանքների զնգացող ողակներով պրկված գլխահակ մարդկանց...

Արդեն ուշ եր, յերբ Բրոդարկան տուն վերադարձավ: Նա մասամբ զարմացավ, տեսնելով Միլևայի ապրած տան դռան առաջ մի մեծ ավտո, վոր սպասում եր ում վոր: Բրոդարկան կանգ առավ փողոցի հակադիր կողմում: Մի փոքր անց, տանից դուրս յեկավ բարձրահասակ մի մարդ, հարմարավոր տեղավորվեց բարձին, ինչ վոր ասելով շոֆերին: Կամացուկ մռմռացող մոտորը վռնաց, և ավտոն սլացավ փողոցով: Սպասելով ևս մի քանի րոպե, Բրոդարկան մտավ սենյակ:

Ջուլհակուհին չճանաչեց աղջկան: Կրկին ջուրը դցեց լվացած ափսեն ու զարմանքով հարցրեց.

— Ո՞ւմ եք կամենում, տիրուհի:

Բրողարկան ծիծաղեց և, մոտ վազելով ճրագին, բարձրացրեց լույսը:

— Լավ է, մորաքույր Միլեա: Այժմ ինձ մայրս էլ հազիվ թե ճանաչի:

***

Գործարանների կառավարչի առանձնատնյակը «Ցադրան» ակցիոներական ընկերության սրբության սրբոցն է: Մասսիվ կարսիները լայնանիստ տեղավորվել են բուրգերի նման: Ապակեպատ պահարանների յետեվ շարվել են կազմերի դեղնավուն մեջքերը: Ոդի մեջ սիգարի բուրավետ ծուխ է կանգնած: Խորը կաշվե բազկաթոռների մեջ թաղված են ակցիոնատերերը: Գործարանների վարչության նախագահը նուրբ շրթունքները սեղմած ու չփելով չոր այտերի նուրբ կաշին, դանդաղ և հատիկ-հատիկ զեկուցում էր յերեք որ առաջ գործադուլ հայտարարած մեծ մանածա-անկվածային գործարանի դրության մասին:

— Բոլշևիզմի գաղափարները տարածվում են բանվորների մեջ արտասովոր արագությամբ: Այդ գաղափարները վարակում են նույնիսկ ամենից հնազանդներին ու խոնարհներին: Բայց և այնպես բոլշևիզմը ինքնին մեզ համար մեծ վտանգ չի հանդիսանում, վորովհետև նրա գաղափարների արտահայտիչ-

ները լինում են սովորաբար գրգռիչների փոքրիկ խմբակներ: Նրանց մեծ մասն այժմ ձերբակալված է, և մենք կարող ենք հույս ունենալ, վոր գործարանում խաղաղություն կթագավորի:

Արագաշարժ սպասավորը, ռետինե ներբանների անձայն քայլերով, յերրորդ անգամ նստածներից յուրաքանչյուրի առաջ դրեց սև կոֆեյի և լիքյորի գավաթներ: Կառավարչի ձայնը խոխոջում էր հանգիստ ու միապաղաղ:

— Բայց ռացիոնալացման մեր նոր միջոցառումները անխուսափելի կերպով պետք է բանվորների մեջ հուզմունք առաջացնեն, վորից, անտարակույս, պիտի ոգտվեն գործարանում դեռևս մնացած կոմունիստները: Մենք վոչ մի յերաշխիք չունենք նոր կոնֆլիկտներից ու նոր վնասներից: Կոմունիստներն աշխատում են շատ ճարպիկ կերպով, կարողանում են լավ թաքնվել, և նրանց ժամանակին հայտաբերել ու մեկուսացնել առանց հատուկ կազմակերպության ոգնության, միայն վոստիկանական ուժերով, չափազանց դժվար է: Վոստիկանատան վարչության այն գործակալները, վորոնք աշխատում են վորպես բանվորներ քաղաքի զանազան ձեռնարկություններում, իմ կարծիքով, չեն արդարացնում իրենց վրա դրած հույսերը, վորովհետև կոմունիստներն անմիջապես պարզում են վոստիկանության

հետ նրանց ունեցած կապը, և բանվորները նրանցից զգուշանում են։ Նույնիսկ գործակալներին ծեծելու մի քանի դեպքեր են յեղել։ Յես առաջարկում եմ վոստիկանական հետախուզության զուգընթաց, ընկերության միջոցներով, ստեղծել միանգամայն ինքնուրույն հետախուզական կազմակերպություն, վորն աշխատի իմ անմիջական ղեկավարությամբ։ Մեր ձեռնարկությունների միանգամայն վստահելի և ընկերությանը նվիրված բանվորների ցուցակը յես ունեմ։ Տեղեկություններ հաղորդելու համար միանվագ և պարբերաբար վճարվող հոնորարի համար կպահանջվի վոչ այնքան մեծ գումար։ Բայց դրա փոխարեն մենք միշտ իրազեկ կլինենք բանվորների տրամադրություններին, արհմիութենական կազմակերպությունների ծրագրերին և կոմունիստական գրգռիչների գործունեյության։ Թույլ եմ տալիս ինձ ձեր քննությանը դնելու հետախուզություն կազմակերպելու մասին իմ կողմից մանրամասնորեն մշակած ծրագիրը։

Առանձնասենյակում քչքչում-հոսում է կառավարչի հանդարտ ճառը։ Լուռ խմելով կոֆեն, գլխով հավանության շարժումներ են անում ակցիոներները։ Իսկ վարագույրներով ծածկված լուսամուտների յետեվ ամառային մանրիկ անձրևն է ծեծում գործարանային շենքերի տանիքները, թրջում է վագոնիկներով բամբակ կրող բանվորների փոշեծածկ մազերը։

Գործարանի դահլիճում աղմկում, վորոտում, դղրդում, վոռնում են մեքենաները։ Բարձր խողովակները դուրս են ժայթքում ծանր սև ծխի քուլաներ։ Դղրդացող հրեշները ծանր, ռիթմիկ հևում են առանց հոգնության, առանց հանգստի։ Հազարավոր մկաններ պրկվում են, հետևելով մեքենաների շարժումներին և վոսկի ստեղծելով։

Դեմքերը ծանր են ու կենտրոնացած։ Մարդիկ զգում են իրենց հնազանդ, ծեծված ու ճնշված։ Արագընթաց մտքերն առաջ են անցնում իլիկների վազքից։

— Ինչո՞ւ կրկին դուրս յեկանք աշխատանքի, յերբ փողոցում կրակում են մեզ վրա... Պարոն Միլլերն, իհարկե, գոհ է։ Արհմիության մարդիկ նույնպես գոհ են։ Միևնույն դուքա՛նն է։ Իսկ մենք պիտի աշխատենք... Մինչև յե՞րբ։

Մարդիկ խույս են տալիս միմյանց աչքերի նայել։ Յեվ միայն հայացք նետելով այն ընկերների տեղերին, վորոնք այժմ պառկած են բանտային խցերում կամ գերեզմաններում, ծանրորեն կուլ են տալիս հառաչանքը։

Բրոդարկայի հարևանուհիները, յերիտասարդ մանածագործները, սպասելով նյութի, հավաքվել են մեկուսացած մի անկյունում, մեքենաներից մեկի յետեվ։ Գունատ Ջագորկան, քսանհինգամյա մի աղջիկ, նիհար ու

չարժուն, արագ խոսում է, յեռանդով թափահարելով ձեռքերը․

— Բրոդարկան սքանչելի բանվորուհի յե և ընկեր։ Նա միշտ ամեն ինչ զոհաբերում եր ուրիշների համար։ Իսկ մենք նրան ծախեցինք … Նրան և մյուսներին … Մենք աշխատում ենք … Ցես ինքս ամաչում եմ, վոր այժմ այստեղ եմ, մեքենաների մոտ։

Հարեվանուհին արմունկով հրեց Զադորկային։ Բանվորուհիները վաղուց արդեն գիտեյին, վոր իրենց մեջ վոստիկանության վարձկաններ կան։ Սակայն Զադորկան ըստ յերեվույթին բոլորովին չեր ցանկանում հաշվի առնել թաղային վոստիկանական բաժանմունք ընկնելու հեռանկարը։ Նա սկսեց բարձրաձայն ամոթանք տալ իր ընկերուհիներին, աշխատանքի գալու համար։ Նրա մոտ վազեց Ստանական, կարմրայտ, ճչան և կլոր մի կին։

—Թող խնդրեմ քո Բրոդարկային գովաբանելը,— հայտարարեց նա արհամարհական։ Վոչ մի լավ բան չկա նրա մեջ, բացի ինքնասիրությունից։ Նա վորպես որինավոր աղջիկ, պիտի մտահոգվեր միմիայն իր գործերով։ Առանց նրան ել քաղաքականությամբ զբաղվող մարդիկ կգտնվեն։ Լա՞վ է միթե աղջկա համար, վոր մինչև այժմ ել ամեն տեղ փընտրում են, ինչպես մի ինչ վոր անառակի, իսկ յերբ գտնեն, ի՞նչ կան են նրան … Այժմ քարշ է գալիս ուրիշների տներում, իսկ վաղը կընկնի ժանդարմական զորանոց։ Այդ ամենը ելի սազ է գալիս տղամարդուն, բայց աղջկա համար — աստվա՛ծ ազատի։ Ցես յեթե լինեյի նրա տեղը, մարդկանց աչքերին նայել չեյի կարող։ Ցեթե նա իմ քույրը լիներ, յես նրան սեփական ձեռքերով կսպանեյի։ Խայտառակեց ամբողջ ընտանիքը։

Բանվորուհիները սսկվեցին, մռայլ ունկընդրելով։ Ապա հանկարծ բոլորը բորբոքվեցին, աղաղակեցին վիրավորված․

— Ծախո՛ւ հոգի․

— Ջուր չէ, վոր հաշվապահ Ստեվովիչը նրա մոտ հյուր է գալիս։ Մե՛զ հո տուփերով շոկոլադ չեն բերում։

— Դեռ դու համարձակությո՛ւն ունես Բրոդարկայի մասին խոսելու։ Ինքդ ինչպիսի՞ն ես։ Ի՞նչ։ Հասկանո՛ւմ ենք քո ուզածը։

— Վաղո՛ւց ենք քեզ ճանաչում։

Անսպասելի կերպով յենթարկվելով հայհոյանքների ու կշտամբանքների, Ստանկան զայրագին փախավ իր մեքենայի մոտ ու լուռ իրեն գործին յեղավ։

***

Բրոդարկայի թավամազ բարեկամը՝ դեղին կատուն՝ արդեն մի ժամ առաջ կորցրել եր իր փիլիսոփայական հանդստությունը։ Նա ամեն ձևով տեղավորվեց լուսամուտի գոգում, աշխատելով նինջով լռեցնել դատարկ ստա-

մոքսի խղճալի գոգնոցը․․ Շուռ էր գալիս և՛ այսպես, և՛ այնպես, մերթ դունչը դնելով առաջ ձգած թաթերին, մերթ կծիկ դառնալով և վարդագույն քիթը ծածկելով բրդոտ պոչի ծայրով։ Վերջապես նա վճռեց պարենավորում հայթայթելու վորոշ միջոցներ ձեռք առնել։ Մեջքն աղեղնաձև կեռելով, քաղցր հորանջելով ու փափկաթաթ թռչելով պահարանի վրա, հոտոտեց դատարկ ափսեները, ապա հիասթափված ու անտարբեր աչքերով չափեց վերադարձի ճանապարհը մինչև լուսամուտ՝ պահարանի յեզրը, կոտրած մեջքով աթոռը, արեգակի ճառագայթներով լուսավորված հատակի տախտակները և լուսամուտի գոգը։ Կատուն, կանգնած յետևի թաթերով սկուն ափսեյի վրա, առաջին թաթերն իջեցրեց շարժական արկղի կողքին, պատրաստվելով ցատկել, յերբ հանկարծ վոտքերի տակի հենարանը յետ գնաց։ Ափսեն սահեց տախտակի հարթ մակերեսով և աղմուկով փշրվեց հատակին։

Հանկարծակի աղմուկից Բրոդարկան արթնացավ քնից։ Վեր թռավ անկողնից և մի քանի վայրկյան չորս բոլորքը նայեց։ Զարմանքով հայացքը կանգ առավ ափսեյի կտորների վրա, բայց, հանդիպելով կատվի վախից լայնացած բիբերին, ժպտաց, հասկացավ բանն ինչումն է և, դեն նետելով վերմակը, իր բարեկամի համար փնտրեց մի կտոր փափուկ հացի միջուկ․․․ Շտապ հագնվելով, փողոց նայեց։

Լուսամուտի պանորամայում, ինչպես տիկնիկային թատրոնի բեմում մարիոնետկաները, յերևում եյին ու անհայտանում անցորդներ։ Անցնում եյին շրջակա գյուղերի գեղջկուհիներ, ուսերին բանջարանոցների վաղ-պտուղներով և կաթնամթերքներով զամբյուղներ։ Գնում եյին շուկա բանվորների նիհար, գունատ կանայք, գրպաններում անվճռական հաշվելով մանր դրամներն ու տառապալից միտք անելով, ինչպես կերակրել ընտանիքը մինչև շաբաթ որվա աշխատավարձը։ Փողոցի կենտրոնում կանգնած էր ժանդարմը․․․

Որինականության և կարգի սովորական պահապանը։

Վոչ մի կասկածելի բան չնկատելով, Բրոդարկան վորոշեց փողոց դուրս գալ, չնայած վառ արևոտ առավոտյան։ Սենյակում նստելն իմաստ չուներ։ Վոչ մի կամավոր, հայրենիկի պահած և ձանձրույթից մեռնող Շերլոկ-Հոլմս չէր կարող նրան նմանեցնել այն բայլշևիկուհուն, վորի նկարը խնամքով կտրել և պահում էր իր դրամապանակում։

Բրոդարկան քաշեց արկղը, վորպեսզի վերցնի իր ունեցած դրամի լղարիկ մնացորդը․․․ Գիշատիչ թռչունների նման թռավ հավաքվեց նրա ուղեղում չափազանց տհաճ մտքերի յերամը։—Շատ չնչին դրամ էր մնացել․․․ Ի՞նչ անել հետագայում։ Միլիսայի հաշվին ապրել չի կարելի․ Նա առանց այդ էլ

հաղիվ ե ծայրը ծայրին հասցնում...Իսկ ի՞նչ ե այժմ Բրոդարկայի մոր և յեղբոր դրությունը: Յերևի արդեն նրանք ել նստած են առանց կոպեկի: Քանի Բրոդարկան աշխատում եր գործարանում, մի կերպ յոլա եյին գնում: Այն ժամանակ ել ծանր եր: Իսկ հի՞մա, Լա՛վ: Մի կերպ կանենք: Այդ մասին կարելի յե հետո մտածել, իսկ այժմ պիտի հոգալ ընկերների հետ կորցրած կապերը վերականգնելու: Դա ամենից գլխավորն ե ու անհետաձգելին:

Յերբ Բրոդարկան շպարվելով ու ներկվելով բաց արեց միջանցքը տանող դուռը, այդ նույն ակնթարթին բացվեց նաև դիմացի հարևան սենյակի դուռը: Կիսախավարում գծագրվեց կլոր, յերիտասարդ, Բրոդարկային անծանոթ մի կնոջ դեմք: Սուր աչքերը սահեցին աղջկա կերպարանքով: Դուռն շտապ փակվեց: Դա անախորժ տպավորություն թողեց Բրոդարկայի վրա: «Հարկավոր ե անպայման այսոր և եթ պարզել՝ ինչո՛վ ե զբաղվում մեր հարևանուհին»,—մտածեց նա, ճռճռան աստիճաններով վազելով ցած:

Յերբ խառնվեց բազմազան հասարակության, նրան հանկարծ պատեց վախը: Սողոսկեց կամացուկ, աննկատելի և հանկարծ ամուր սեղմեց սիրտը: Թվում եր, վոր բոլոր անցորդների հայացքները դառել են նրա վրա: Թվում եր, վոր բոլորը ճանաչում են նրան, վոր բոլորն առանց սխալվելու, առաջին հայացքից գուշակում են նրա ով լինելը: Ամեն րոպե նրան թվում եր, վոր ահա-ահա բազմության միջից դուրս կպրծնի վոստիկանական գործակալը, կշողշողա թագավորական վոստիկանության մետաղե նշանը, և ձայնը, կոպիտ ու քաղաքավարի միաժամանակ՝ կնետի կարճ.

— Խնդրեմ, փաստաթղթե՛րը:

Հետո շփոթվածություն, սառը հետաքրքրություն ամբոխի, ծածկված ավտոմոբիլ և...վոստիկանական վարչություն... Իսկ հետո...վո՛չ: Ավելի լավ ե չմտածել: Առայժմ վոչինչ չի պատահել: Պետք ե հանդիստ գնալ ճանապարհով: Հարկավոր ե անհոգ տեսք ընդունել: Պետք ե դեմքի արտահայտությամբ ընդգծել ձանձրույթ և անտարբերություն անգործ աղջկա, վոր զբոսնում ե պարապ, սպասելով յերեկոյան զվարճության ժամին:

Փոքրիկ, կեղտոտ մերկ վոտքերով և կեղտոտ մազերով, արագավազ տղայից Բրոդարկան գնեց առավոտյան լրագիր: Աչքին անմիջապես ընկավ «Բոլշևիկուհին դեռևս չի բռնված» վերնագիրը: Շտապ կարդաց և այլևս կանգ չառնելով լրագրի այլ եջերի վրա, ուշադիր սկսեց կարդալ «Ո՞վ ե մեղավոր» վերնագիրը կրող հոդվածը: Հոդվածի բովանդակությունից աղջկա դեմքին հեղնական ժպիտ սահեց:

հաղիվ է ծայրը ծայրին հասցնում...Իսկ ի՞նչ
է այժմ Բրոդարկայի մոր և յեղբոր դրու-
թյունը։ Յերեկ արդեն նրանք էլ նստած են ա-
ռանց կոպեկի։ Քանի Բրոդարկան աշխատում
էր գործարանում, մի կերպ յոլա էյին գնում։
Այն ժամանակ էլ ծանր էր։ Իսկ հի՞մա, Լա՛վ։
Մի կերպ կանենք։ Այդ մասին կարելի յե հետո
մտածել, իսկ այժմ պետք հոգալ ընկերների
հետ կորցրած կապերը վերականգնելու։ Դա
ամենից գլխավորն է ու անհետաձգելին։

Յերբ Բրոդարկան շպարվելով ու ներկվե-
լով բաց արեց միջանցքը տանող դուռը, այդ
նույն ակնթարթին բացվեց նաև դիմացի հա-
րևան սենյակի դուռը։ Կիսախավարում գծա-
գրվեց կլոր, յերիտասարդ, Բրոդարկային ան-
ծանոթ մի կնոջ դեմք։ Սուր աչքերը սահեցին
աղջկա կերպարանքով։ Դուռն շտապ փակվեց։
Դա անախորժ տպավորություն թողեց Բրո-
դարկայի վրա։ «Հարկավոր է անպայման այ-
սօր և եթ պարզել՝ ինչո՛վ է զբաղվում մեր
հարևանուհին»,—մտածեց նա, ճռճռան աստի-
ճաններով վազելով ցած։

Յերբ խառնվեց բազմազան հասարակու-
թյան, նրան հանկարծ պատեց վախը։ Սողոս-
կեց կամացուկ, աննկատելի և հանկարծ ա-
մուր սեղմեց սիրտը։ Թվում էր, վոր բոլոր
անցորդների հայացքները դառել են նրա վրա։
Թվում էր, վոր բոլորը ճանաչում են նրան,
վոր բոլորն առանց սխալվելու, առաջին հա-

յացքից գուշակում են նրա ով լինելը։ Ամեն
րոպե նրան թվում էր, վոր ահա-ահա բազմու-
թյան միջից դուրս կպրծնի վոստիկանական
գործակալը, կշողշողա թագավորական վոս-
տիկանության մետաղե նշանը, և ձայնը, կո-
պիտ ու քաղաքավարի միաժամանակ՝ կնե-
տի կարճ.

— Խնդրեմ, փաստաթղթե՛րը։

Հետո շփոթվածություն, սառը հետա-
քըրքրություն ամբոխի, ծածկված ավտոմոբիլ
և...վոստիկանական վարչություն... Իսկ հե-
տո...վո՛չ։ Ավելի լավ է չմտածել։ Առայժմ
վոչինչ չի պատահել։ Պետք է հանդիստ գնալ
ճանապարհով։ Հարկավոր է անհոգ տեսք ըն-
դունել։ Պետք է դեմքի արտահայտությամբ
ընդգծել ձանձրույթ և անտարբերություն ան-
գործ աղջկա, վոր զբոսնում է պարապ, սպա-
սելով յերեկոյան զվարճության ժամին։

Փոքրիկ, կեղտոտ մերկ վոտքերով և
կեղտոտ մազերով, արագավազ տղայից Բրո-
դարկան գնեց առավոտյան լրագիր։ Աչքին ան-
միջապես ընկավ «Բոլշևիկուհին դեռևս չի
բռնված» վերնագիրը։ Շտապ կարդաց և այլ-
ևս կանգ չառնելով լրագրի այլ էջերի վրա,
ուշադիր սկսեց կարդալ, «Ո՞վ է մեղավոր»
վերնագիրը կրող հոդվածը։ Հոդվածի բովան-
դակությունից աղջկա դեմքին հեգնական
ժպիտ սահեց։

Սև տառերի ուղիղ շարքերը, լրագրային տողերի անողնական տոնը աստիճանաբար ցրեցին վախի զգացողությունը:

Բրոդարական քայլեց զբոսավայրով հանգիստ և վստահ, ուրախ նայելով հպարտ, քրտնքաթոր վոստիկաններին:

— Թրև են գալիս այստեղ սագերի պես: Ցերեկայում են, որ շատ խորաթափանց են ու խելացի: Իսկ շպարի տակ չեն կարողանում որոշել իրենց քթի տակով անցնող բայլշևիկուհուն:

Իր դրության վստահելիությունն ավելի ու ավելի հավատ էր ներշնչում Բրոդարկային: Այժմ կարելի յե փորձել գնալ տուն: Տեսնել մորը: Խոսել փոքրիկ յեղբոր հետ... բի՞սկ անել, հ՞ը:

Բրոդարկան արագաքայլ անցնում էր մայթերով: Քաղց դեռ չէր զգում: Բայց վորոշ չափով հոգնած էր արդեն: Գլուխն սկսեց ցավել ու պտույտ գալ և, թվում էր, գանգը մնացած մարմնից ավելի ցածր է... Վորչափ ավելի յեր մոտենում իր տանն, այնչափ արագ էր տրոփում սիրտը, այնչափ խորանում էր նրա հուզմունքը: Մտավ ծանոթ տան բակը, առանց յետ նայելու, կարծես միայն իր տան մասին մտածելով, արագ վազեց աստիճաններով վեր և.. յետևում լսեց ծանր պայտած ժանդարմական կոշիկների դոփյուն: Բակ մըտան մի խումբ ժանդարմներ հրացաններով ու

հագցրած սվիններով, դիմելով ուղիղ այն բնակարանը, վորի դռան մոտ կանգնած էր Բրոդարկան:

Յետ դառնալու ճանապարհ չկար:

Ի՞նչ անել: Միջանցքի վերջում, բնակիչների սենյակների յետևի մասում—զուգարանն է: Այնտեղ—և չո՛ւտ: Բրոդարկան անցավ միջանցքն արագ, բայց չափված քայլերով, հազիվ զսպելով դողդոջ վոտքերը սրընթաց թռիչքներից: Սիրտը բաբախում էր կրծքի տակ ահռելի թափով: Ձեռքն արագ արձակեց պայուսակի կափարիչն ու հանելով ատրճանակի կոթին, սեղմեց այն ջղաձիգ, վճռական վորոշումով: Յերբ ժանդարմների կոշիկների դոփյունը լսվեց միջանցքի վերջում, Բրոդարկան արդեն ծածկեց իր յետևից զուգարանի դուռը:

— Գրողը նրանց հետ: Յեթե անգամ մտածեն այստեղ գալ, յես լուսամուտով դուրս կգամ այգի,—շշնջաց նա, հայացքով չափելով լուսամուտի լայնությունը:

Բրոդարկան լարեց լսողությունը, աշխատելով միջանցքից վորևէ ձայն վորսալ: Բայց զուգարանի դեղին հաստ դռները ծածկվում էին քիփ և վոչինչ չէր լսվում: Բրոդարկան թեթևակի բաց արեց դուռն ու մի աչքով նայեց միջանցքի յերկայնքով:

Բրոդարկայի բնակարանի խոհանոցը տանող դռան առաջ կանգնած էր մի ժանդարմ,

իր լայն, մոխրագույն մահուդով ձգված մեջքը դարձրած դեպի Բրոդարկան։ Իհարկե, եվ ո՞ւր կարող էին չեկած լինել ժանդարմները։ Իհարկե, նրանք այժմ Բրոդարկայի բնակարանում են։

Միջանցքում հնչում էին տղամարդկանց կոպիտ ձայներ.

— Պառա՛վ, լսո՞ւմ ես թե վոչ... Վորտե՞ղ է աղջիկդ։

— Այդ դուք պիտի իմանաք,— պատասխանեց հանդարտ, խզված կանացի ձայնը։

«Մայրս»,— անցավ Բրոդարկայի գլխով։ Յեվ նա ավելի լարեց լսողությունը, փորձելով ձեռքի սեղմումով զսպել գազազած սրտի բաբախյունը։

Ժանդարմը, ըստ յերևույթին, լավ պատրաստված էր պառավի պատասխանին։ Նա մի ամբողջ ճառ արտասանեց.

— Բավական են այդ յերգերը։ Բավական է խաբեք իշխանության և օրենքի ներկայացուցիչներին։ Յեթե չես կամենում ասել վորտեղ է աղջիկդ, ինքդ կգաս մեզ հետ այնտեղ, ուր շատերն են իրենց գաղտնիքները դուրս տվել... Չի կարող թագավորական վոստիկանությունն ազատության մեջ թողնել նրան, ով ավազակ է թաքցնում։ Անմիջապես գնանք մեզ հետ։

— Ո՞ւր։

Ձայնում զարմանք կա, միախառնված

անտարբերության հետ, վորը խախտում է րոպեյի վեհությունը։ Ժանդարմների լավագույն զգացմունքները վիրավորված են։

— Ի՞նչ համար հարց... Ո՞ւր։ Հասկանալի յե, կաֆե չե... Դե, գնա, շարժվի՛ր։

— Լավ, ինքս կգամ։ Հարկավոր է միայն վորդուս համար գետնախնձոր խաշել, թե չէ դպրոցից կվերադառնա քաղցած։

Այս անգամ արդեն մի քանի ժանդարմական ձայներ միասին գոռգոռացին։

— Հերի՛ք հիմարություններ դուրս տաս։

— Մենք ինքնե՛րս նրա համար գետնախնձոր կխաշենք։ Կկշտանա՛։

— Մա՛րշ, շարժվիր, պառավ ջադու։

Բրոդարկան ճեղքից տեսավ, ինչպես ժանդարմը սենյակից դուրս հրեց մորը։

Լռեցին քայլերը միջանցքում։ Հարևան բնակարանների դռներից յերևացին վախվորած կանանց գլուխներ։ Գլխից գլուխ վազ տվեց ջղային շշունջը.

— Այդ ինչո՞ւ տարան նրան, սիրելիներս։

— Յերևի լավ գործերի համար։

— Աղջկա պատճառով։ Աղջիկն է ամեն բանում մեղավոր։ Աստված ժառա՛նգ է պարգևել։

— Ի՞նչ է անելու հիմի յերեխան... Խե՛ղճ...

Բրոդարկան հանգիստ դուրս յեկավ փողոց։

Նրա առջև տասը մետր տարածության վրա ժանդարմների խումբը սվինների խիտ օղակով շրջապատած, փողոցի միջով տանում եր ծեր կնոջը: Ծանր կոշիկները խիտ, սպիտակ փոշի եյին բարձրացնում:

Պառավը գնում եր գլուխը կախ գցած, առանց շուրջը նայելու: Անցորդներն ուշադրություն չեյին դարձնում Թափորին, անտարբեր հայացք միայն նետելով այն կողմ: Մարդիկ վարժվել եյին բալկանյան փողոցների համար սովորական դարձած այդ պատկերին:

Բրոդարկյան շնչում եր ծանր: Աղջկա հայացքն ուղեկցում եր ժանդարմներին, վորոնք գնում եյին դանդաղ ու տարուբերվում եյին, կարծես դագաղ եյին տանում ձեռքերին: Շուտով նրանք ծածկվեցին անկյունում, անցնող ապրանքատարի բարձրացրած փոշու ամպի մեջ:

***

Բրոդարկյան ուժ եր գործ դնում վերականգնելու հիշողության մեջ այն մարդկանց անունները, վորոնց ձերբակալման մասին նա կարդացել եր յերեկ լրագրերում: Բոլորը, վորոնցից վորևե մեկի հետ կարելի յեր կապվել այժմ, ձերբակալված են: Մյուսների բնակարաններն անպայման հսկողության տակ կլինեն: Յերրորդների հասցեները Բրոդարկյան չգիտե: Ի՞նչ անել: Ինչպե՞ս դուրս գալ միայ-

նակությունից: Ինչպե՞ս կապվել կազմակերպության հետ:

Բրոդարկյան հիշեց վերջապես համապատասխան մեկին—ելեքտրադացի մեքենավար ընկեր Կոլլարին: Նա վերջին ամսվա ընթացքում պառկած եր հիվանդ: Իհարկե, մասնակցություն չի ունեցել վերջին դեպքերին և, հավանորեն, այժմ վոստիկանության հալածանքին յենթակա չե: Բրոդարական Կոլլարին անձամբ ճանաչում եր Ունիտար արհմիությունների քաղաքային բյուրոյի աշխատանքից: Նա պարզ պատկերացրեց իրեն մեքենավարի փոքրիկ տնակը քաղաքի հյուսիսային մասում ընկած, բանտի և ցեմենտի գործարանի միջև:

Արդեն յերեկո յեր, յերբ Բրոդարկյան կրկին անգամ մանրազնին դիտելով փողոցը և արտաքին հսկողության վոչ մի նշույլ չհայտաբերելով, անցավ փոքրիկ այգով ու տան պատշգամբում բախեց սպիտակ գլխանոցով պառավին—մեքենավար Կոլլարի մորը:

— Տա՞նն ե արդյոք պարոն Կոլլարը:

Պառավն ուշադրությամբ զննեց հյուրին: Խեթ նայեց ներկած շրթունքներին, հայացքը կասկածով սահեց նրա հագուստի վրայով:

— Այո, այստեղ ապրում ե այդպիսին: Իսկ դուք նրա ծանո՞թն եք:

— Ծանոթը... Իսկ ո՞ւր ե նա: Յե՞րբ կվերադառնա:

— Նա այսօր հիվանդությունից հետո առաջին անգամ է աշխատանքի գնացել: Շուտով պիտի գա... Դուք առայժմ նստեցեք այստեղ: Ահա աթոռ:

Շուտով ներս մտավ Կոլլարը: Դեմքը նիհար է, նորերս անցկացրած տիֆից: Բարձր, թիկնավետ մարմնի վրա հնամաշ յուղոտած կոստյում: Կոլլարը հոգնած ներս մտավ սենյակ, սեղանի վրա նետեց լրագիրն ու ժպիտով նայեց մորը, վոր աշխատում եր պլիտայի մոտ:

Տեսնելով Բրոդարկային, կանգ առավ ու մռայլվեց: Սա ինչ պճնուհի յե: Կասկածելի յե այդպիսի թռչնիկի ներկայությունն այստեղ, վորի տեղը Նիբելունգների գրասարանումն ե կամ «Եսպլանադայում»:

Բրոդարկան անմիջապես ճանաչեց մեքենավարին: Արագ վերկացավ, պարզեց ձեռքը նրան և, նայելով պլիտայի մոտ աշխատող պառավի կողմը, կամացուկ ու վստահ շշնջաց.

— Բրոդարկա:

Կոլլարի դեմքին մի ակնթարթ արտացոլեց ներքին ճիգ, ապա կնճիռները հոնքերի վերև վազեցին ամեն ուղղությամբ, իսկ աչքերում փայլեցին ուրախագին զարմանքի կայծեր:

— Ինչպե՛ս փոխվել եք: Յես ձեզ լավ եմ հիշում: Միայն բոլորովին վոչ այդպես, ինչպես այժմ:

Բրոդարկան անմիջապես թեթևություն և անդորր զգաց այդ յերեսնհինգամյա լավ մարդու հետ: Կոլլարը լայնադեմք ժպտում եր:

— Այո, ինձ ել հարկադրեցին շպարվել ու ծաղկաջրեր ցանել: Վոչինչ անել չես կարող:

—Ճշմարիտ խոսք— դուք ուղակի արտիստիկ գրիմ եք արել: Հրաշա՛լի: - Առանց այդ դուք հավանորեն կկորչեյիք առաջին իսկ քայլին... միայն ահա թե ինչ. այստեղ վոչ մի րոպե մնալ չենք կարող: Մի կես ժամից վոստիկանությունն այստեղ կլինի:

— Ինչո՞ւ յեք այդպես յենթադրում:

— Յես դրանում հավատացած եմ: Այնտեղ, վերևում կբացատրեմ բանն ինչումն ե: Այս տունը յես ինքս եմ չինել և այստեղ վորոշ լավ բաներ կան: Գնանք, վերևում կխոսենք: Այնտեղ ել կընթրենք,—դարձավ նա մորը:— Իսկ յերբ կգա վոստիկանությունը—յես կինոյում եմ,— և տանը վոչ վոք չկա:

Առանց աչքը կաթսայից կտրելու, մայրը գլխով արեց, հասկանալով: Կոլլարը սեղանի վրայից վերցրեց լրագրերը: Շուտափույթ ծխախոտը լցնելով յուղոտած կաշվե տոպրակի մեջ ու լցնելով ծխամորճը, հրավիրեց Բրոդարկային հետևել իրեն: Հարևան սենյակում կանգ առավ պատի մոտ ու նստեց հատակին: Բրոդարկան զարմանքով հետևում եր նրա շարժումներին: Կոլլարը բարձրացրեց հատակի տախտակներից մեկը, ձեռքը ներս տարավ

անցքն ու հանեց ծալված բարակ յերկաթյա մի սանդուղք և, ուղղելով, հենեց պատին:

— Այստեղ բավական շատ նյութ է պահվել,—ասաց նա ժպիտով, դառնալով Բրոդարկային:—Յերբեմն էլ մարդիկ են պահվել:

Կոլլարը բարձրացավ վերին աստիճանին և ձեռքերը առաստաղին դեմ տալով, դանդաղ բարձրացրեց ներքևից միանգամայն աննկատելի անցքի դռնակը: Ծածկվելով չերդակի խավարում, այնտեղից Բրոդարկային պարզեց իր ափը, վեր բարձրացրեց նրան, կարթի միջոցով վերև բարձրացրեց նմանապես և սանդուղքը: Կոլլարը կատարյալ խավարի մեջ վառեց լուցկին ու հանկարծ շունչը պահեց, ականջ դնելով:

— Գալի՛ս են,—շշնջաց նա, թեթևակի հրելով արմունկով Բրոդարկային:

Ցածում լսվում եյին քայլերի ձայներ և բարձր խոսակցություն: Բառերը վորոշել չեր լինում: Ժանդարմների ներկայությունը տևեց մի քանի րոպե, ապա ամեն ինչ լռեց: Կոլլարը վառեց ճրագը:

— Պետք է նորից մի քանի անցք բացել, վորպեսզի լավ լսվի, ինչ է կատարվում ցածում,— ասաց նա մտախոհ և հոգատար: Հայացքը դարձրեց դեպի Բրոդարկան և նրա դեմքին հարցական նշան տեսնելով, ուժգին ծծեց ծխամորճը, բաց թողնելով ծխի կապտավուն շերտ:

— Ձեր գործարանում գործադուլ սկսվելուց հետո պահակն ամեն յերեկո այցելում է ինձ: Քանի դեռ յես հիվանդ եյի, ձեռք չեյին տալիս, իսկ այժմ անկողնից վեր եմ կացել, և կրկին սկսել են հետապնդել ինձ: Մեկ անգամ խուզարկություն էլ կատարվեց: Վոստիկանատուն տարան: Բայց իմ տունը հսկողության տակ չի գտնվում կարծես, և այդ պատճառով յես ինձ այստեղ ապահով եմ զգում: Դու յել այստեղ առանձնապես վախենալու վոչինչ չունես:

Մեկ ամբողջ ժամ Բրոդարկան մնաց չերդակում, պատմելով Կոլլարին գործադուլի մանրամասնությունները և գործադուլի հետ կապված բոլոր անցուդարձը: Միլևայի բնակարան վերադարձավ ուշ, ունենալով շատ թարմ տեղեկություններ քաղաքում յեղած վերջին դեպքերի մասին, տանելով հետը յեռանդի բավական մեծ պաշար և Կոլլարի փոքր Ֆրանսիական ռումբներից մեկը:

***

Նստած անտրացիտի ահագին կտորի վրա խուլ մրմնջացող հնոցի դիմաց, Սեֆերը դըրգված ու արագ ծամում եր սիմինդրի հացի և պանրի կտորը, աչքերը ջղային պտույտ տալով «Բալկանյան նորություններ»-ի տողերի վրա:

— Սատանան գիտե ի՛նչ է,— փնթփնթում եր նա ժամանակ առ ժամանակ:

— Շուտով ճաշի ընդմիջումը կվերջանա, իսկ նա դեռ չկա... Ի՞նչ է պատահել նրան:

Մեկի ձեռքը իջավ Սեֆերի ուսին: Յերիտասարդ հնոցապանը ցնցվեց ու շուռ յեկավ:

— Ա՛ա՛, վերջապես: Յես վախենում եյի, վոր բոլորովին չես գա: Շուտով մյուսներն ել կվերադառնան ճաշից:

Սլավիկոն բարձրացրեց խարտյաշ հոնքերը: Թեթևության զգացումով շփեց ձեռքով քթի պեպենները, շունչ առավ ու նստեց Սեֆերի կողքին:

— Հազիվ ազատվեցի... Այդ վոստիկանական շներն ամբողջ ժամանակ քարշ են գալիս յետևիցս: Մտնում եմ սատրելնի,—տեսնեմ դևի մեկը յետևիցս: Յես պանդոկ, մի անկյուն—մյուս սեղանի մոտ արդեն նստած են շան վորդիք... Լավ է, վոր քեզ մոտ կաշեգարկա հասնելն այդքան դժվար է այդ միջանցքների ու փոսերի... Նու, լավ: Լսիր: Դու պետք է սպասես մյուս յերեք հոգուն և ասես նրանց, վորպեսզի այսոր տասին նրանք լինեն «Մուրճի» մոտ: Առայժմ այսքան:

— Լա՛վ: Կարվի:

— Միայն լավ մտիկ տվեք: Մենք ել վոր բռնվեցինք, ամեն ինչ միանգամայն կորած է:

— Մի՛ վախեցիր, կանենք:

Յերբ Սլավիկոն անհայտացավ ջրհանային կայանի նեղ դռներում, պատի մեծ ժամա-

ցույցը գեղգեղեց ու կաշեգարկայի թեք բետոնե տանիքի վրա վոռնաց շչակը: Ճաշի ընդմիջումը վերջացավ: Սեֆերը բարձրացավ ածխի կույտի վրայից, քրտինքով և ծխով հագեցած վերնաշապիկով մաքրեց դեմքն ու վերցրեց բահը:

***

Իջել եր բալկանյան խոնավ գիշերը: Խավարն, ինչպես ջրիկ խմոր, լցրել եր փողոցները: Սեֆերն շտապում եր: Յերբեմն վոտքը հանկարծ սահում եր փոսը, մարմինը կորցնում եր հավասարակշռությունը և կրծքից դուրս եր թռչում կարճ, համարյա անլսելի խուլ մի ձայն: «Մուրճը»— մոտիկ չե: Յեվ շտապել այնտեղ այդպիսի գիշեր, արվարձանի չլուսավորված փողոցներով,— հեշտ գործ չե:

Ուժգին քամին տարուբերում եր ծառերի կատարները խճուղու յերկայնքով, իսկ առջևում հեռու, խավարի թանձրության մեջ քաղամերձ կայարանի կրակն ե առկայծում: Այնտեղ, կայարանի փոքրիկ, պլոկված դեղին շենքի այն կողմ, գյուղի բանջարանոցների յերկար ցանկապատերի յետև, փոքրիկ մի սենյակում քանի րոպեյից հետո պետք է ներկա լինեն անկվածա—մանածային գործարանի հինգ յերիտասարդ կոմունիստներ, վորոնք ազատ են մնացել գործադուլից և ձերբակալություններից հետո: Ծանր խնդիր է ընկած նրանց ուսերին: Ամբողջ որը գործադրեցին նրանք կար-

դավորելու կոմիտեյի հետ կապը: Ամբողջ որը նրանցից յերեքի համար ավագ վարպետի ծոցատետրում նշված է պրոգուլի պատճառով յերեք որվա աշխատավարձ հանել: Ելի ամբողջ մի որ նրանք ման եյին գալիս գործարանում, դիտում եյին բանվորների դեմքերը, կշռում եյին հայացքները, պատահորեն ասված բառերը, վորոշելով մարդկանց ռազմունակության աստիճանը, վորի պատասխանատվությունը կուսակցության կոմիտեն դրել է հինգ յերիտասարդ տղաների վրա, նրանց վրա յե դրել հեղափոխության գործը...

Լեոն Սեֆերի վրա չի հաջում: Լեոն դիմավորում է նրան դարպասից մի քանի քայլ հեռու, բարեկամաբար թափահարում է պոչը:

— Ո՛ո՛, հին բարեկամ,— շշնջում է Սեֆերը, փաղաքշական քաշելով շան ականջները:

Սենյակում Սլավկոն նստած եր սեղանի մոտ. ձեռքին բռնած մատիտ և ճմրթած թղթի մի կտոր:

— Ո՞ւր են մյուսները,— հարցրեց նա, սեղմելով Սեֆերի ձեռքը:

— Մի՞թե նրանք դեռ չեն յեկել:

— Վոչ դեռ:

— Վոչինչ, շուտով կգան...

Կես ժամից բոլորը ներկա եյին: Վերջինը ներս մտավ Չինչը: Մինչև մարմին թրջված՝ սկսված անձրևից ու մի փոքր չփոթ դրությամբ, նա նստեց պլիտայի վրա, շունչ առնե-

լու, իսկ կեղկալից պղտոր կաթիլները թափվում եյին վերարկուի բարձրացած ոձիքի վրա:

— Ինչո՞ւ այսպես ուշ, դրողը քեզ տանի:

Չինչը բարձրացրեց այրվող, բորբոքված աչքերը:

— Իմ յետևից պոչ եր քարշ գալիս, տղե՛րք: Տանից սկսած... Միայն հին խաչի մոտ հազիվ ազատվեցի: Մտա անտառ: Այստեղ հասա դաշտերով... Տեսեք,— և նա բարձրացրեց վոտքը: Ծանր կոշիկի վրա նստած եր հաստ չերտ, դաշտային խոտի ցողուններով խառը:

Սլավկոն մռայլվեց:

— Չցրվե՞նք արդյոք, տղերք,— հանկարծ ասաց նա:

— Սատանան է իմանում, գուցե նրան ուղեկցել են մինչև դռները: Այստեղից կայարան հասնել և զանգահարել քաղաք, վոստիկանական վարչություն,— չնչին բան է:

— Վոչ, վոչ,— ցնցնվեց Չինչը:— Այդ բանը դուք թողեք, ընկերներ: Այսքան տեղ քարշ գալ, վորպեսզի ցրվենք առանց վոչնչի...

— Յեվ վերջն ընկնել պարոն Շրոտի ճանկը,— հեգնական ավելացրեց Սեֆերը:

— Վոչ վոք վոչ մի տեղ չի ընկնի, յեթե հիմար չի լինի,— բողոքեց Չինչը:— Յես ձեզ պարզ ասացի, վոր պոչը յես թողեցի անտառում: Ինքներդ մտածեցեք՝ ինչպե՛ս կարելի յե այսպիսի անձրևի ժամանակ մարդու չկորցնել

Թփերի մեջ... Գիշերն ի՞նչ գիշեր է: Ավելի լավ է ժամանակ չկորցնենք:

— Լավ: Նստեցեք, սկսենք:

«Մուրճը»—տան տերը՝ կարճահասակ, լայնաթիկունք, հասակավոր մի գյուղացի,— վեր կացավ, ծածկեց լայն գլխարկն ու ծխեց հունգարական յերկար ծխամորճը:

— Սկսեցեք, տղերք: Յես գնամ հսկեմ: Յեթե մի բան լինի...դե ինքներդ գիտեք ինչպես պետք է անել:

Ողում անձրևի կաթիլների ջրվեժ է, լեռներում հեծում է հյուսիսային քամին, իսկ ցանկապատի մոտ, հեղեղված, լպրծուն ճանապարհից դուրս, փոքրիկ սենյակում—հինգ հոգի: Խոսում են կիսաձայն: Գրում են մանրիկ տառերով թղթի չափազանց փոքրիկ կտորների վրա, և քամու հեծեծանքին ու վառարանի վրա կծկված կատվի մռռոցին միաձուլվում է ինչ վոր մի նոր ձայն,—ակնթարթապես անզգայանում են, լարված ուշադրություն դառնում, մի քանի րոպե լռում են ու լսում...Բայց առայժմ ամեն ինչ խաղաղ է:

Այնտեղ, տախտակապատ յերկար ցանկապատի վերջում, կոճղի վրա նստած է «Մուրճը», սեղմված ծեր հաճարենու բնին, փաթաթված զինվորական հին թիկնոցում, լայն թևքի մեջ թաքցրած հունգարական յերկար ծխամորճի թասը... Յեվ, յեթե ճանապարհի դար ու փոսերի վրա պարեն վոստիկանական

ավտոյի ավելի ու ավելի պայծառացող լուսավոր բծերը,—կհնչի պայմանական ազդանշանը, կզրնգան լուսամուտի ապակիներն ու հինգ արագավազ ու թրջված կերպարանքներ կանհայտանան լեռան լանջի խաղողի այգում, արձակյունի կրակներ ցանելով:

Սլավկոն հարյուր անգամ ճմռթեց ու հարդարեց փոքրիկ թուղթը:

— Յես ձեզ կկարդամ մեր աշխատանքի ծրագիրը, վորը յես գրի յեմ առել: Ահա: Նախ և առաջ պետք է մեծացնել բջիջի անդամների թիվը: Այլապես հինգ հոգով չենք հասցնի: Կարելի կլինի վերցնել այն յերեք տղաներին, վորոնց մենք նկատի յենք առել: Ահա...Քեզ, Անտե, յես կարծում եմ, մենք կհանձնարարենք մոտիկից ծանոթանալ նրանց հետ, ընդհանրապես այդ գործը գլուխ բերել: Նրանք մեզ բոլորովին չեն ճանաչում, իսկ մեր բաժնից բոլորը նստած են: Անպես, վոր այդ գործը քեզ կմնա:

— Լավ, լավ... հետո:

— Հետո, այս ամիս, մեր տեղեկություններով, պիտի սկսվի նոր ռացիոնալացում: Ջուլհակներին փոխադրելու յեն չորսից վեցի: Այնտեղ պետք է նախապատրաստել պատմություն: Բանվորներն առանց այդ ել անբավական են: Նույնիսկ նրանք, վորոնք միշտ վախեցել են քաղաքականությունից, նրանք ել այժմ քրթմնջում են, վոր այլևս այդպես չի

կարելի... Պետք է կրկին կարգի գցել գործարանային լրագիրը: Դա, թերևս, կանեմ յես:

— Լավ... Հետո:

— Վորպես սկիզբ, հարկավոր է վաղն առավոտյան թռուցիկներ գրել, վոր արդեն պատրաստ են և գտնվում են «Սևի» մոտ: Նրա հասցեն գիտե Ջիչը: Յեվ վաղը, շչակից մեկ ժամ առաջ, թռուցիկները պիտի լինեն կաչեգարկայում:

— Հասկանալի յե:

— Մի բան ել. դիրեկտորի մոտ ծառայող սպասավորը կամենում է ծածուկ մտնել արհմիության մեջ: Յերեկ մեր արհմիութենական լիազորն ինձ մի բան պատմեց, վորը լսել է սպասավորից: Պարոն ակցիոներներին սպասավորը թեյ է մատուցելիս յեղել ժողովի ժամանակ: Նրանք պայմանավորվել են գործարանում կազմակերպել իրենց սեփական, ինչպես իրենք են անվանում, «հետախուզական» կազմակերպություն: Յեվ, ասում են, վոր ունեն համապատասխան տղաների ցուցակ, վորոնք փողով իրենց հարազատ հորը կմորթեն:

Մարդիկ ցնցվեցին:

— Նրանց այդ նոմերը չի անցնի: Բոլոր շուն շան վորդիներին ու վախկոտներին մենք հաշվի տակ ենք առել,—հայտարարեց Սեֆերը:—Մի բան վոր լինի, այնպիսի որը կգցենք

մութ փողոցում, վոր հարազատ մայրը չճանաչի:

— Ճիշտ է,—համաձայնեցին մյուսները:

— Վոստիկանական գործակալները քիչ են նրանց: Ուզում են իրենց գործակալներն էլ ունենալ: Մեզանում նրանցից լավ են զգուշանում: Ստանկայի մանածագործներն ամբողջ որը փակել եյին զուգարանում, վորովհետև նա Բրոդարկայի մասին զանազան բաներ եր դուրս տվել:

— Իսկ Բրոդարկան, հետաքրքիր է, վորտե՞ղ է այժմ, տղերք,—հարցրեց Ջիչը, իսկապես վոչ վոքի չդառնալով:

Տղաները լռեցին ու միմյանց նայեցին: Սլավկոն ցնցեց ուսերը:

— Այդ վոչ վոք չգիտե,—ասաց նա:—Յեկեք ավելի լավ է չշեղվենք: Ո՞վ ինչ ունի ծրագրի վերաբերյալ:

— Յես մտածում եմ,—սկսեց Անտեն,—վոր հարկավոր է մտածել քաղաքային կոմիտեյի հետ մշտական կապ հաստատելու մասին: Սեֆերի համար դա ամենից հարմար գործն է. Նրան...

Անտեն չվերջացրեց նախադասությունը: Դռան յետև դոփեցին շտապ քայլեր, դուռը բացվեց ու սենյակ ներս ընկավ «Մուրճը»:

— Յերկու ավտո, ճանապարհով,—խուլ ձայնով շշնջաց նա:—Թռե՛ք, տղերք:

— Հանգի՛ստ,— ասաց Սլավկոն,— թռեք հերթով, փախեք սավակի մոտով, աջ, անտառ, լեռը... Փղերի պես մի դոփեք,— կատաղի թշշաց նա վերջում:

Սեղանի ճրագը հանգավ:

Յերկու ժամ անց, յերբ հոգնած ու չարացած ժանդարմները, շրջապատելով գյուղը, տակն ու վրա անելով ամեն ինչ և վճռականապես վոչինչ չգտնելով, նստեցին ավտոմոբիլ,— «Մուրճը» բաց արեց լուսամուտը, սենյակ ներս թողնելով գիշերային թարմ օդի ալիքները, դաշտերի բույրը և Սավայի մեղմ խշշոցը:

***

Լուսադեմին մի ժամ մնացած, Ջիչը կարողացավ քնել: Յեվ յերբ առավոտյան մառախուղի շերտերի միջով չերդակի սենյակի լուսամուտից ներս ընկավ գործարանային շչակի վռնոցը, Ջիչին թվաց, վոր նրան քնի խորը հորի հատակում ճանկել ե հսկայական մի ճոպան և անխիղճ կերպով ու արագորեն բարձրացնում ե վերև: Ջիչը շուռ յեկավ մյուս կողքին, գլխին քաշեց պատառոտուն վերմակը, աշխատելով կրկին պահել գիշերային քաղցր մոռացության կապարային մամուլի տակ: Բայց շչակի ծորուն վռնոցը լցվում եր ականջները, ջղերի կենտրոններում արթնացնելով տարիների վարժեցրած ռեֆլեքսները:

Ջիչը չկարողացավ համբերել, թռավ վոտքի ու սկսեց հագնվել:

— Համա քնել եմ, հա՛,— փնթփնթաց նա,— հարկավոր եր վաղ արթնանալ և օգնել Սեֆերին թռուցիկների գործը վերջացնելու:

Մառախուղի ծանր հաստ շերտը պառկել եր քաղաքի վրա, սողում եր յուրաքանչյուր ճեղք, լցնում եր յուրաքանչյուր միլիմետր ազատ տարածություն: Մարդիկ մառախուղի մեջ նման եյին ջրաբույսերի: Փողոցների դեռևս չհանգած լապտերների լուսավոր շողերը տարածվում եյին ինչպես մազութի կաթիլները ջրի յերեսին: Կոշիկ մաքրողները նման եյին գորտերի: Ջիչն արագ անցնում եր փողոցով, կուչ գալով առավոտյան ցրտից: Գործարանից վոչ հեռու նա նկատեց առջևում Սեֆերի տարուբերվող մեջքը:

Ջիչն արդեն արագացրեց քայլերը, հասնելու կաչեգարին, բայց հանկարծ փողոցի մյուս կողմում նկատեց Սեֆերին անընդհատ հետևող մի մարդու: Ջիչը կանգ առավ, զննելով:

— Սա ի՞նչ բան ե,— քրթմնջաց նա,— կարծես ոգնական Ռետիչը լինի: Յեվ կարծես նա հետևում ե Սեֆերին: Ի՛նչ այլանդակություն: Իհարկե, Ռետիչն ե... Ա՛խ, փսլնքոտ անասուն:

Ջիչը, վոր արթնանալիս արդեն վատ տրամադրության մեջ եր, այս անգամ վերջնակա-

նապես զայրացավ։ Նա տանել չէր կարողանում Ռետիչին, այդ բշտիկավոր, սղալված յերիտասարդին, առաջին պճնասերին ու կնամոլին, վոր ամբողջ շաբաթ ձանձրացնում եր, վորպեսզի կիրակի որը հագնի հարթուկած անդրավարտիկ ու ոսլայած ոձիք, գնա յերկրորդ տեսակի բար և ներկայանալով վորևե ներկված աղջկա, վորպես «Ցադրան» ակցիոներական ընկերության «ավագ պաշտոնյա», ամբողջ գիշեր նրա հետ բոստոն պարի և հիմարություններ դուրս տա։

— Սրիկա՛,— հայհոյում եր Զիչը Ռետիչի յերեսին թե յետևից, արհամարհական թքելով գետնին։— Դժբախտ պճնասեր։ Տեսնում եք, նա ամաչում ե ասել, վոր ինքը բանվոր ե։ Իսկապես, ամոթ ե բանվոր դասակարգի համար, վոր նա իր մեջ ունի այդպիսի ապիկարի մեկը։ Մոռանում ե, շան վորդին, նմանվելով պարագլուխներին ու ձրիակերներին, և հասկանալ չի կարողանում, վոր նա պրոլետար ե, կյանքի տերը։ Այդպիսի հիմարների թիվը մեր մեջ քիչ չե։

Բանվորները սովորաբար Զիչի հետ համաձայն եյին։ Միայն Ռետիչի բարեկամների ու շշակիցների փոքրիկ խմբակն եր քիթը կնճռոտում և արժանավայել մի կողմ քաշվում, նմանեցնելով ամեն գիշեր «Ապոլլոյում» ցուցադրվող ամերիկյան ֆիլմերի սիրած հերոսներին։

Զիչի մեջ յերկար տարիներ Ռետիչի և նմանների դեմ կուտակված ամբողջ ատելությունն հանկարծ դուրս սողաց ու ծածկեց մնացյալ ամեն ինչ, ինչպես ջուրը ծածկում ե կոտրված սառույցի մակերևույթը։ Սեղմվելով տների պատերին, Զիչն անլսելի ու թեթև քայլում եր փողոցով, արագորեն հայացքը դարձնելով փոփոխակի՝ Սեֆերից Ռետիչին և հակառակը։ Նկատելի յեր, վոր Ռետիչն իրեն անսովոր ե զգում։ Քայլում եր նա անվստահ, չափազանցրած զգուշությամբ, վախվորած ու ջղային շուրջը նայելով։ Ահա Սեֆերն անհայտացավ ցանկապատի բացվածքում, անցավ բրեզենտով ծածկված բամբակի հսկայական կույտերի միջով և շուռ յեկավ կաթսաների շենքի կողմը։ Ռետիչը վազեց նրա յետևից և անշարժացավ ծածկույթի ստվերում, աշխատելով լավ տեսնել, ուր գնաց Սեֆերն ու ինչ ե անում։ Յեվ հանկարծ Ռետիչի աչքերի առաջ կատարյալ խավար տիրեց։ Մի ճարպիկ ձեռք իր իսկ սեփական կեպկան քաշեց աչքերին, մինչև ծնոտ։

— Դու, ի՞նչ ե, լրտեսությո՞ւն ես անում, ծախված հոգի,— լսեց իրեն կորցրած Ռետիչը խուլ շշունջ իր յետևում։ Նույն ակնթարթին նա զգաց, ինչպես մեկը կատաղորեն ձիգ տվեց նրա ոձիքն, ապա նա այնպիսի ուժգին հարված ստացավ քթին, վոր խավարի մեջ ոդնականի աչքերի առաջ դուրս թափվեցին ու կա-

տաղի պտույտներ գործեցին վառ կարմիր շրջաններ:

Ռետիչը համբացավ ու չնչասպառ յեղավ զարմանքից, սարսափից ու անսպասելիությունից: Հարվածներն ու աքացիներն իջնում եյին նրա վրա ամեն կողմից, ինչպես կարկուտ: Բաճկոնը պատառոտվեց բոլոր կարատեղերից: Յեվ, վորպես վերջավորություն 'խայտառակության, անդրավարտիկը, վորի բոլոր կոճակները պոկվել եյին, սկսեց ցած ընկնել: Հանկարծ խորհրդավո՞ր թշնամին դադարեցրեց իր գազանային ոպերացիան, և Ռետիչը մնաց մենակ, ծեծված, վոչնչացած, ճնշված, կուլ տալով վիրավորանքի արյան հետ միախառնված արցունքները:

Ռետիչը դժվարությամբ հանեց գլխից կեպկան ու շուրջը նայեց: Բարձր ծխնելույզների սևացած գագաթները կորել եյին սև ծխի քուլաներում: Մոտակայքում ռիթմիկ խփում եյին ջրհան կայանի աշխատող անոթները: Թշշում եր գոլորշին: Զորս կողմը բամբակի կույտեր եյին բարձրանում: Վոչ վոք չկար: Ռետիչը անվճռական, բաճկոնի թևքով մաքրեց արյունոտած քիթը, մի քանի ակնթարթ միտք արեց ու ամբողջ ուժով աղաղակեց·

— Ոգնեցե՛ք, սպանո՛ւմ են:

***

Հաշվառման թորիչի միջով, ծփալով

ու խախոջելով, կորպուսների անոթներն եյին լցվում առավոտյան հերթի հոսանքները: Կաթնասպիտակ մառախուղը լուսամուտների յետև աստիճանաբար ցրվում եր: Կանգնած մեքենաների մոտ, վորոնց ներքևի մասերը դեռևս թաղված եյին կիսախավարում, բանվորներն ու բանվորուհիները դանդաղորեն հագնում եյին արտահագուստի ցնցոտիները և հոգնած, անտարբեր նախադասություններ եյին փոխանակում: Յուղողներն ու փոկավորները մագլցում եյին տրանսմիսիաների վրա, ինչպես հսկայական անճոռնի սարդեր, կախվելով կրոնշտեյներից, ստուգելով պադշիպնիկները, կարկատելով փոկերը հաստ կաշվե սրիմներով:

Զիչի մոտով, վագոնետկայի յեզրին կանգնած, շտապ ծամելով հացի պատառը, արագ անցավ Սլավկոն:

— Դու նախաճաշե՞լ ես, Զի՛չ,— նետեց նա վոչինչ չնշանակող հարցը:

Զիչը նրա վրա բարձրացրեց աչքերն ու արագ աչքով արեց:

— Ը-ը,— բառաչեց նա, յեռանդագին աշխատելով ծնոտներով:

«Նշանակում ե թռուցիկներն արդեն իրենց տեղումն են»,— ուրախ մտածեց Սլավկոն, սեղմելով ձեռքում պտուտակի բանալին:

Բարձր կարմիր լուբերի շարքերում, բան-

վորական վերնաշապիկների գրպաններում, զուգարաններում և ուղղակի հատակին—այստեղ—այնտեղ—ամենից անսպասելի տեղերում պառկած էյին փոքրիկ կարմիր. թերթիկներ, բառերի շարքերով զարդարված: Մեքենաների բզզոցների տակ բանվորները, չորս բոլորքը նայելով, գաղտագողի կարդում էյին վորոշ, պարզ ու կարճ նախադասությունները: Մի քանիսը թռուցիկները յետ գցելով կրկին լուռ և ճմռթելով, անցնում էյին մի կողմ, մտածկոտ տարուբերելով գլուխները: Մյուսները կարմիր փոքրիկ թերթիկն արագ թագցնում էյին հագուստներում:

—Տեսար, հա՞,—արմունկով հրեց Վույոյին իր մեքենայի հարևանը՝ յերիտասարդ, արագաշարժ մյուլշչիկը:— Նրանց նստացնում են, սպանում են, կախ են տալիս, բայց նրանք գրում են և աշխատում, աշխատում են և գրում: Դա յես հասկանո՛ւմ եմ:

Վույոն նայեց չորս բոլորքը և լուռ մնալով մի քանի վայրկյան, խորհրդավոր թեքվեց դեպի յերիտասարդը:

— Լսիր ինձ, ծերուկիս տղա,—արտասանեց նա հանդիսավոր,—ճշմարիտ են աշխատում նրանք: Ճիշտ են գրում: Իսկական ճշմարտություն են գրում:

***

Պարոն Միլլերը հուզված քայլում էր առանձնասենյակի փափուկ գորգի վրա, ձեռքերը մեջքին դրած: Մի րոպե կանգ էր առնում

և, հայացքը վոտքերի տակի խայտաբղետ նկարին ուղղած, ծամում էր թխլիկ շրթունքները հեղնական քմծիծաղով: Սպասավորը կամացուկ բաղխեց դուռը:

— Պարոն Հալաուշը խնդրում է ընդունեք,—գլուխ տալով, ասաց նա:

—Թող ներս գա,—քրթմնջաց Միլլերը, նստելով բազկաթոռին:

Հալաուշը ներս մտավ գլխարկը ձեռքին բռնած, և կանգ առավ դռան մոտ: Նրա շփոթված տեսքից Միլլերը վերջնականապես մոլեգնեց:

— Այդ ի՞նչ է պատահել ձեզ,—սպառնական սկսեց վարչության քարտուղարը,—յես, դուրս է գալիս, ձեզ էլ այլևս չեմ կարող վստահել: Գուցե բոլշևիկները ձեր ուղեղն էլ հալեցրել են: Նրանք ձեր քթի տակ ագիտացիա յեն անում, ցրում են զանազան թռուցիկներ, իսկ դուք դրան անգամ արգելք լինել չեք կարողանում... Այսօր յես դեռ անկողնիցս չէյի վերկացել, ինձ հաղորդեցին, վոր ամբողջ գործարանները մինչև առաստաղ լցված են կոմունիստական թռուցիկներով: Ինչի՞ յեք պետք դուք դրանից հետո, ո՞վ կպահի ձեզ:

Հալաուշը հլու լսել էր՝ աչքերը ցած խոնարհած: Նա գիտեր, վոր պարոն Միլլերը շատ շուտով զարույթը վողորմածության էր փոխելու:

—Յեվ այդ ինչ մարդկանց եք դուք ձեզ

ոգնական ընտրել,—ջղային չարունակեց քարտուղարը:—Գիտեք դուք, վոր յերեկ այդ եշերից մեկը կիսակայարան № 6-ից զանգահարել է վոստիկանատուն, բոլորին վոտքի յե հանել, և, յերբ մարդիկ տեղ են հասնում, ամբողջ գյուղում բայլշևիկյան ժողովի ակնարկ անգամ յեղած չի լինում: Յեվ հետո ձեր այդ լակոտը, Ռուտիչ է, թե Ռատիչ, ինչպես է... Նա իսկական հիմար է: Ինձ հայտնեցին, վոր նա կամեցել է հետապնդել մի ինչ վոր կոմունիստի, իրեն ծեծել են և նա, փոխանակ պաշտպանվելու, աղաղակել է մորթվողի նման: Յեվ յերբ հավաքվել են բանվորները, նա սկսել է սպառնալ իրեն ծեծողներին, և բոլորի ներկայությամբ, հասկանում եք, բոլորի ներկայությամբ պարծենալ է սկսել, վոր ինքը ծառայում է վոստիկանության մեջ և ամբողջ գործարանը կձերբակալի: Դրանից ավելի մեծ ապուշ տեսե՞լ եք դուք յերբևիցե: Վորպեսզի այլևս նրա շունչը չլինի գործարանում, այսոր իսկ արձակեցեք: Յեթե դուք այսուհետև ևս պատասխանատու գործեր հանձնարարեք յերեխաների ու ապուշների, յես հարկադրված կլինեմ հրաժարվել ձեր ծառայությունից և այդ մասին հաղորդել վոստիկանական գլխավոր վարչությանը: Հասկանո՞ւմ եք...Կարող եք գնալ:

Բայց Հալուշը չգնաց: Նա սպասում եր, մինչև Միլլերն սպառի իր բարկության աղ-

բույրը: Յեվ այժմ կամացուկ, հաստատուն առաջ քայլեց:

— Պարո՛ն քարտուղար, յես կամենում եմ ձեզ հայտնել մի շատ կարևոր բան: Յես ունեմ պլան:

Միլլերը թթու դեմք շինեց: Մաքրեց պենսնեն և, մի րոպե մտածելով, ձեռքով ցույց տվեց բազկաթոռը:

— Նստեցեք, գրո՛ղը ձեզ տանի: Դուրս տվեք ձեր բեռը...

***

Պատրաստվելով գնալ գործի, Միլևան կամացուկ շարժվում եր սենյակում, հավաքում եր անհրաժեշտ իրերը, ավելում եր հատակը: Աշխատում եր չարթնացնել Բրոզարկային: Բայց Բրոզարկան քնած չեր:

Կիսափակ աչքերով նայում եր պառավ ջուլհակուհու սրածին:

— Յես, մորաքո՛ւյր, կարող է պատահել այսոր յերեկոյան ել ուշ վերադառնամ,—ասաց վերջապես Բրոզարկան կամաց,—միայն խնդրում եմ, դու անհանգիստ չլինես, ինչպես անցյալ գիշեր: Ամեն ինչ լավ կլինի:

Ջուլհակուհին ուղղվեց և ավելը դրեց տաբուրետին:

— Դու քնած չե՞ս,...Լավ: Միայն թե, ի սեր աստուծո, զգույշ յեղիր և այստեղից

դուրս մի գնա, քանի չես ճաշել, թե չէ յերկու որ է վոչինչ չես ուտում և ինքդ քեզ նման չես: Վտիտ ես, ինչպես անտուն կատու:

Բրոդարկան ժպտաց, բայց մի բան հիշելով, հոնքերը յետ քաշեց:

— Ո՞վ է ապրում դիմացի հարևան սենյակում:

Միլևան ուսերը թոթվեց.

— Աստված է իմանում: Մի ինչ վոր փոքր չինովնիկ, իր կնոջ հետ, միայն թե յես նրանց չեմ ճանաչում: Նրանք վերջին օրերս են տեղափոխվել այստեղ:

Բրոդարկան մի րոպե մտածմունքների մեջ ընկավ, նայելով առաստաղի ճանճերին:

—Յերբ յերեկ առավոտ յես դուրս յեկա միջանցք, դիմացի սենյակից մի ինչ վոր կին սկսեց ինձ զննել շատ կասկածելի հետաքրքրությամբ: Դա ինձ դուր չի գալիս,—հաղորդեց Բրոդարկան, մռայլվելով:

Մորաքույր Միլևան ուղղեց գոգնոցն ու թաշկինակը կապեց ուսերին:

— Իհարկե, շատ վատ է, վոր քեզ տեսել են հարևանները,—հառաչեց նա:—Բոլորը գիտեն, վոր յես մենակ եմ ապրում և տանը յես վոչ վոք չունեմ: Միայն թե կարծում եմ, վոր վորևէ նենգամտությունից վախենալու բան չկա: Դա ուղղակի կանացի հետաքրքրություն է,—վերջացրեց Ջուլհակուհին, բաց անելով դուռը:

Կեսօրվա ժամի յերկուսին մոտ Բրոդարկան գնաց Կոլլարի մոտ:

Հենց վոր աղջիկը դուրս յեկավ միջանցք, դիմացի սենյակից մի ակնթարթ դուրս նայեց ու թաքնվեց յերեկվա կնոջ դեմքը: Նրանից հետո նույն դռնից դուրս յեկավ մաքուր սափրված մի յերիտասարդ, պորտֆելը թևի տակ ու գնաց Բրոդարկայի հետքով: Փողոցում նրանք ուղիղ նայեցին միմյանց դեմքի: Յեվ յերիտասարդը, թեքվելով միջափողոց, խառնվեց անցորդներին:

Սև, անհավասար յեզրերով ամպերը լողում էյին արեգակի վրա: Արեգակն այրում էր: Փոշով հագեցած օդն ավելի թանձր էր ու տաք, իսկ հեռվում լսելի յեր ամպերի վորոտ: Պետք էր սպասել մայիսյան ուժեղ անձրևի:

Բրոդարկան անցնում էր փողոցից փողոց, զննելով ժանդարմների ուժեղացրած պահակները, փորձելով գուշակել քաղաքային վոստիկանական վարչության ոպերատիվ առաջադրությունները:

Վերջապես խավարած յերկնքից ընկան ու փոշուն միախառնվեցին առաջին խոշոր, դալմատյան խաղողի վոխկույզների նման անձրևի կաթիլները: Բրոդարկան արագացրեց քայլերը:

Կոլլարի դեմքը գոհունակություն էր արտահայտում և փայլում էր ուրախ ժպիտով: Ծխամորճի կապտավուն ծուխը վոլորվում էր

մեքենավարի քունքերի վրա արդեն սպիտակին տվող սև ու խիտ մազերի շուրջը: Նա արագ ձեռքը պարզեց Բրոդարկային, համարյա ուժով նստեցնելով աթոռի վրա իր կողքին:

— Դե, շուտ պատմիր՝ ի՞նչ նորություն կա: Յեվ...հանգստացիր:

— Ընթրիք տուր մեզ,—դարձավ Կոլլարը մորը,—մենք իսկույն կբարձրանանք վերև:

Կես ժամից Բրոդարկան և մեքենավարը չերդակում ընթրում էին, ունկնդրելով անձրևի կաթիլների աղմուկին:

— Լավ է այսպիսի յերաժշտության տակ քնել,—ասաց Բրոդարկան, մաքրելով շըրթունքները:

— Յես այստեղ հաճախ եմ քնել,—պատասխանեց Կոլլարը: Մանավանդ լավ է դա այն ժամանակ, յերբ մարդ չի կամենում հանդիպել վոստիկանության հետ...

Կոլլարը ծխամորճը վառեց ու բազմախորհուրդ դադար տվեց:

— Յեկ այժմ քեզ հետ ավելի լուրջ բաների մասին խոսենք,—սկսեց նա, հարդարելով կոշտ բեղերը:—Կոմիտեն վերջնականապես վորոշել է, վոր դու պետք է մնաս քաղաքում: Դա քեզ համար անվտանգ է: Նախ և առաջ, վորովհետև քեզ այժմ դժվար է ճանաչել, և, յերկրորդ, վորովհետև դու գտնվելու յես քաղաքի բոլորովին հակառակ մասում...Վաղը դու ինձանից կստանաս սքանչելի անցագիր

Միցիկ Կոնդուրովիչ անունով: Մենք համաձայնության յեկանք մեր արհմիության միջոցով քո աշխատանքի մասին «Բիստրի» արհեստական մետաքսի գործարանում: «Բիստրին» գտնվում է այստեղից չորս կիլոմետրի վրա, արևմտյան յերկաթգծով: Այնտեղ դու կգտնվես անվտանգ դրության մեջ և կարող կլինես աշխատել անմիջականորեն կոմիտեյի հանձնարարություններով: Քեզ համար սենյակ նույնպես գտել ենք: Այնքան էլ լավը չէ, բայց ապրել կարելի յե:

Կոլլարը մի րոպե կանգ առավ, փստացնելով ծխամորճը:

— Հ՞ը, ինչպես է դուր գալիս քեզ այս հեռապատկերը,—հարցրեց նա:

Բրոդարկան ուրախ էր Կոլլարի առաջարկության: Վերջապես նա կրկին գործարանում կլինի, վերջապես նա կրկին գործը կսկսի:

— Ելի նորություններ,—հայտնեց Կոլլարը,—մեր ընկերներից մեկը կենտրոնական բանտում այցելել է քո մորը: Պառավն իրեն պահում է հիանալի, ընկճված չէ: Յեղբայրդ վերցրել է իր մոտ Լուդարիչը, ձեր վարպետն ու անկվածային ցեխի պրոֆմիութենական լիդերը: Նա լավ մարդ է, կինը նույնպես լավ է: Տղան էլ, խիստ չարաճճի, յեղբորդ հասակակից է...Ե՞լի ինչ: Բանտի հետ մեր կապը լավացել է: Նորերս բանտում մեռել է

ցույցի ժամանակ վիրավորված ձեր մյուլլչիկներից մեկը: Տղերքին հարցաքննության ժամանակ շատ են տանջում: Բայց նրանք· ըստ յերևույթին իրենց լավ են պահում: Միլանն առայժմ կենդանի յե և դիմանում ե, թեև այնքան ել առողջ չե: Տղին շատ թունդ ե հասնում:

— Ինչո՞վ կվերջանա նրա գործը,—կամացուկ հարցրեց Բրոդարկան:

Կոլլարը ձեռքը դրեց նրա ուսին ու ձայնն իջեցրեց·

— Յեթե նա մինչև դատավարություն հասնի,՝ապա, հասկանալի յե, մեծ դատավարություն կլինի: Քսան տարվա շղթայակապ թիապարտությունից պակաս չի ստանա նա: Հավանական ե, նույնիսկ պարան: Դա կախված կլինի քաղաքական մոմենտից: Նրա դրությունը դատարանում շատ վատ ե լինելու: Ճիշտ այնպես, ինչպիսի դրության մեջ կլինես դու, յեթե ձերբակալվես: Միայն թե կոմիտեն վորոշել ե Միլանի նման տղայի համար ռիսկ անել: Յեվ Միլանի համար մենք հատուկ պլան ենք մշակում: Մի խոսքով՝ դուք շուտով են ինչ... Կտեսնվեք նորից:

Բրոդարկան իրեն թեթև ու լավ եր զգում բարակ կղմինդրի առաստաղի տակ, վոր բաժանում եյին իրեն ցած կախված անձրևաբեր ամպերից: Կոլլարի ամեն մի բառը նրան արիություն եր ներշնչում:

Անձրևը ծեծում եր տանիքը, իսկ Բրոդարկան ցնծագին լռած, լսում եր կուսակցական կոմիտեյի տված կարծիքը գործադուլի մասին...

— Վերջին օրերի բոլոր անախորժությունների մեջ ամենից ավելի մեղավոր ե ձեր անփորձությունն ու անկազմակերպվածությունը: Նախ և առաջ դուք պիտի ժամանակին կապված լինեյիք մյուս ձեռնարկությունների կազմակերպությունների հետ, վորպեսզի տնայնագործություն չլիներ, պարտիզանական յելույթներ չլինեյին: Դուք գիտեյիք, վոր սոցիալ—դեմոկրատները վորևե լավ բան անել չեն ցանկանա: Այնինչ միանգամից ցույց սկսեցիք: Յեթե սպասած լինեյիք գեթ մեկ օր, կարելի կլիներ նախապատրաստել լուրջ դիմադրություն, կազմակերպել քաղաքային բողոքի ցույց բոլոր ձեռնարկություններում: Իսկ այժմ վոստիկանությունը մեզ ջախջախեց առանձին—առանձին խմբերով ու մարդկանց բանտերում փակեց: Նշանակում ե ձեր առաջին սխալը կայանում ե նրանում, վոր անհարմար մոմենտ եք ընտրել: Յեվ հետո, յեթե բանն այնտեղ հասավ, հարկավոր եր զգույշ լինել: Այժմ ահա ձեր գործարանում մնացել են միայն անբեղ կոմյերիտականներ: Բայց այնպիսի հակա—հետախուզություն են կազմակերպել, վոր վոչ մի պրովակատոր չի ազատվում նրանց ձեռքերից առողջ կողերով... Յե-

րեկ, ասում են, մի տղայի այնպես են ծեծել, վոր հարկադրված են յեղել հիվանդանոց փոխադրել... Դե, քո տուն գնալու ժամանակն ե,—վոտքի յելավ Կոլյարը:

***

Առվակների մեջ խոխոջում եր ջուրը: Փողոցների լապտերների լույսն անդրադառնում եր փողոցի ասֆալտի վրա գոյացած փոքրիկ անձրևաջրի փոսերի մեջ:

Միլևան, պառավ ջուլհակուհին՝ փխրուն ու բարի մի կին՝ դողում եր սարսափից, նայելով յերկու ժանդարմներին, վորոնք նստել եյին հենց այդտեղ, Միլևայի սենյակում, քրքրված գրքերի կույտի մոտ, սպասելով Բրոդարկայի յերևալուն:

— Խնդրում եմ ազատեք սենյակը, յես պետք ե պառկեմ քնելու, վաղը գործի պիտի գնամ,—ջղային ու անվստահ ճչում եր Միլևան:

— Սպասի՛ր, սպասի՛ր... Դեռ ժամանակ կունենաս քնելու այնտեղ, ուր հարկն ե,—հանգիստ ասաց նիհարավուն, կապտաչյա ժանդարմը, վորը նստել եր Բրոդարկայի գրքերի կապուկի վրա, ինչպես վորսորդը՝ հանգիստ առնելով իր սպանած գազանի կողքին:

Միլևան զգում եր, վոր նավակը խորտակվել ե ու ընկղմում ե: Պղտոր ալիքները բարձրանում են ավելի ու ավելի բարձր: Բայց պա-

ռավ ջուլհակուհին այժմ, րոպե անգամ չտատանվելով, կթռչեր վտանգի ծովը, միայն թե հնարավորություն ունենար զգուշացնելու Բրոդարկային:

Րոպե առ րոպե նա սպասում եր, վոր ահա կճռնչա դուռն ու շեմքին կհայտնվի հոգնած, բայց միշտ զվարթ աղջկա թրջված կերպարանքը: Միլևան գիտեր, վոր սենյակի դռների յետև, միջանցքում և դարպասի մոտ, թաքնված սպասում են կրկին, համենայն դեպս հինգ-վեց ժանդարմ՝ բիրտ սերժանտի և վոստիկանական վարչության ոպերատիվ բաժանմունքի մի գործակալի գլխավորությամբ:

Յեվ մինչդեռ նա շփոթված վազվզում եր սենյակում, ժանդարմների ուղեկցող հայացքների տակ, մինչդեռ ծնվում և մեռնում եյին նրա գլխում տասնյակ յերևակայական, անիրականանալի ծրագրեր, Բրոդարկան ավելի ու ավելի յեր մոտենում տանը, արագ քայլերով կրճատելով իր և անուղղելի, ահռելի, անխուսափելի կատաստրոֆի մեջ յեղած տարածությունը:

Արդեն ներս մտավ նա դռնից ու կիսախավար միջանցքում փակեց անձրևանոցը: Զգում եր, վոր վոտքերը թրջված են ու թեթև ցուրտը ծակծկում ե ուսերը: Քայլ արեց առաջ և տեսավ, ինչպես բացվում են Միլևայի սենյակի դռները: Նույն իսկ ակնթարթին նկատեց իր դիմաց ժանդարմին, վորը դեռևս հայտա-

թերած չլինելով իր ներկայությունը, հանդիստ չորս կողմն էր նայում, առկայծելով ծխախոտը։

Բրոդարկյան անձրևանոցը հենեց պատին։ Անձայն բաց արեց ձեռքի տոպրակն ու յետ-յետ գնաց դեպի յելքի դուռը։

«Ընկա,—անցավ աղջկա գլխով։— Կենդանի անձնատուր չեմ լինի վոչ մի գնով։»։

Մնացյալ ամեն ինչ կատարվեց միքանի վայրկյանի ընթացքում։

Մուտքի դռները բացվեցին ու նրա դիմաց հայտնվեցին յերկու ժանդարմ, փակելով նահանջի ճանապարհը։ Արագ յետ նայելով, նա առաջ պարզեց ջղաձգորեն սեղմված ձեռքը խավարի բեջ։ Կայծակնապես ցատկեց ավտոմատիկ ատրճանակի վոտքն, ու ժանդարմը, յերկու գնդակ ստանալով փորին, ծանր հառաչելով՝ աստիճաններով վայր գլորվեց Բրոդարկյանի վոտքերի մոտ, ներկելով նրա տուֆլիները թանձր արյան շիթերով։

Բրոդարկյան շտապ բարձրացավ աստիճաններով և, դողդոջ ձեռքերով դուրս հանելով տոպրակից ձվանման չուգունե իրը, նետեց ցած, շփոթված ժանդարմների խմբի մեջ։ Վորոտաց ծանր պայթյուն։ Փոքրիկ լապտերը հանգավ։ Ոդը լցվեց խեղդուկ ծխի ալիքներով, իսկ ներքևում ծնունդ էր առնում ձգուն հառաչանքների, աղաղակների ու հայհոյանքների դժոխային ժխորը։

Միջանցքի մթության մեջ զանազան ուղղություններով փայլատակեցին արձակյունների կրակե լեզուներ։ Յերերալով, Բրոդարկյան ցատկեց հատակից, ուր նրան նետել էր պայթյունը, հաշիվ չտալով իր արարքներին, ցած սահեց ճաղաշարքերից և դուրս թռավ փողոց, գիշերային խավարի մեջ, դարնան անձրևի շիթերի տակ։

— Կո՛լլար,— արագորեն վճռեց Բրոդարկյան և, տների պատերին մոտիկ, առաջ նետվեց։ Հետապնդում չեր լսվում։

Նա արդեն բավական հեռացել էր կատաստրոֆայի վայրից, յերբ հանկարծ զգաց, վոր ձախ վոտքը դադարեց հպատակվելուց։

Անցավ դժվարությամբ միքանի քայլ ևս ու կանգ առավ մի դարպասի վերև յեղած փոքրիկ լապտերի տակ. կռանալով, բարձրացրեց հագուստի փեշը։ Ձախ վոտքի սրունքը տաք արյունով էր ծածկված, վորից գորշագույն գուլպան ու կոշիկը բոլորովին նոր գույն եյին ստացել։ Աղջիկը խեղդեց վախի բացականչությունը։

— Անցել է մկանների միջով,—վորոշեց նա։

Սարսափը պատեց Բրոդարկյային, նախ և առաջ այժմ նա, անշուշտ, չի կարող հասնել Կոլլարի բնակարանին։ Յերկրորդ, դժվար կլինի ծածկել իր ճանապարհի արյան հետքերը։ Բրոդարկյան նստեց մայթի ափի կարճ

ձյունին, վերջը կապեց յերկու կես արած թաշկինակով և ինչքան հնարավոր էր, գուլպան լվաց անձրևաջրով։ Ցավից ատամները սեղմած, սաստիկ կաղալով, քայլեց մայթով։ Յերբեմն նրա մոտով վազ էր տալիս վորևէ ուշացած անցորդի կերպարանք, ծածկված անձրևից ուռած անձրևանոցի սնկանման փափախով։ Բրոդարկայի վրա վոչ վոք ուշադրություն չեր դարձնում։

Կոլլարը լրագրերն էր նայում և ումպ անելով կոֆեն, ունկնդրում էր քնած մոր հավասար շնչառությանը, յերբ վերջապես տանջված և ուժասպառ Բրոդարկան աստիճաններով վերև սողաց ու թեթևակի բաղխեց դուռը։ Կոլլարը տեղից թռավ, բաց արեց դռան փեղկերն ու մռայլվեց։ Բրոդարկան սոսկալի վիճակում էր։ Թրջված հագուստը քիփ կպել էր դողդողացող մարմնին։ Աչքերը մահագույն դեմքին այրվում էին տենդոտ փայլով։ Կապտած շուրթերը ծռմռվել էին ժպտանման մի արտահայտությամբ։ Ջրի հետ միախառնված արյունը գուլպայի թելերի վրայով սահելով, կուտակվում էր ներկված հատակին։ Ծանր ատրճանակը ճզում էր կրծքի թրջված շորը...

Կոլլարն շտապ բարձրացրեց Բրոդարկային, տեղափոխեց հին գահավորակի վրա և փակեց դուռը։

— Ի՞նչ է պատահել,— արագ ու ջղային հարցրեց նա, պահարանից հանելով յոդի սրվակն ու վիրակապը։

— Փոքրիկ կատաստրոֆա,— թույլ ժըպտաց Բրոդարկան։

— Վո՞րտեղից ես վիրավորվել,— մոտեցավ նրան մեքենավարը։

Բրոդարկան պարզեց թաշկինակի արյունոտած կտորներով կապված վոտքը։ Կոլլարն արագ հանեց գուլպան, վերջը շփեց սպիրտով, յոդ քսեց ու փաթաթեց վիրակապով։ Բրոդարկան դեմքը դարձրեց պատի կողմը, հազիվ զսպելով ցավի աղաղակը,— կատաղաբար կրծելով հագուստի թաց ու աղահամ թևքը։

— Ուրիշ վոչ մի տե՞ղ,— հարցրեց Կոլլարը։

— Վոչ... Շնորհակալություն։ Վորտե՞ղ ես դու սովորել վիրակապություն։

— Համաշխարհային պատերազմի ժամանակ վեց ամիս սանիտար եմ յեղել,— պատասխանեց Կոլլարը։— Դու կարո՞ղ ես շարժվել։ Իսկույն կարթնացնեմ մորս, նա կօգնի քեզ հագուստներդ փոխելու։ Իսկ հետո յես քեզ վերև կբարձրացնեմ։

Կես ժամից Բրոդարկան պառկել էր մաքուր անկողնում՝ չերդակի մութ այրի մեջ։ Վոտքի ցավը հանդստացավ և վողջ մարմինն անեյանում էր հանգստի քաղցր խոնջությամբ։

Տանիքին, գլխավերևը խշխշում էր անձրևը։

***

Երբ միջանցքում վորոտացին ատրճանակի արձակյունները, Միլեան մահացու գունատվեց:

«Բրոդարկային են սպանում»,— անցավ նրա ուղեղում:

Ժանդարմները վեր թռան ու վազեցին դեպի դուռը...

Սոսկալի պայթյունից տունը ցնցվեց: Լուսամուտների ապակիները ճաքճքեցին ու գրնգոցով թափվեցին հատակին: Կիսաբաց դռնից Միլեայի սենյակ սողաց կծու ծխի ամպ, հառաչանքների ու հայհոյանքների հետ միասին: Հուզված, վախեցած ժանդարմը բռնեց Ջուլհակուհու ուսը:

— Քավթա՛ռ հիմար,— խռպոտեց նա կատաղած,— տեսնո՞ւմ ես ինչ արեց քո կենվորը: Սպասեցեք, ավազակներ... Վերցրու ճրագն ու մա՛րշ, միջանցք:

Ջուլհակուհին, ուշաբերվելով վախից, հնազանդ վերցրեց սեղանից ճրագը: Բոցի դեղին լեզվակը՝ ուռած ապակու տակ՝ փոքրացել ու առկայծում էր գաղջ, գազով հագեցած օդում: Միլեայի այտերով հոսում էին արցունքի խոշոր կաթիլներ: Նա ճրագը ավելի ու ավելի ներքև իջեցնելով, սպասում էր տեսնել Բրոդարկայի այլանդակված դիակը: Ժանդարմը հրեց նրա մեջքին:

— Գնա ցած, անիծյա՛լ անասուն,—ասաց

նա կիսաձայն շշունջով, թագնվելով Միլեայի թիկունքում, առաջ պարզելով ատրճանակով զինված ձեռքը:

Նավթի ճրագի լույսը լուսավորում է աստիճանների ներքևի բետոնե հրապարակը:

Անբնական դիրքով հատակին պառկել էին այլանդակված, արյունաշաղախ, խանձված դիակներ, ծածկված առաստաղից ու պատերից թափված ծեփի կտորներով: Մոխրագույն ժանդարմական համազգեստները պատառոտված էին: Բազմաթիվ պոկոտված վերքերից հոսում էր տաք, թանձր արյունը...

Միքանի ժանդարմներ և վոստիկանական դետեկտիվը լուռ կանգնած էին դիակների վերև: Մուտքի բաց դռնից, չդադարող անձրևի խշխշոցի միջից հնչեց սուրբ Անտոնիոսի յեկեղեցու զանգակատան ժամացույցի զարկը:

Երեք տխրամած, խուլ հարված:

Կես ժամից արդեն «դեպքի վայրում» էր գտնվում վոստիկանական քննիչ հանձնաժողովը:

Միջափողոցի փոքրիկ տան դարպասի առաջ, հորդահոս անձրևի շիթերի տակ քըրթմընջում էին յերկու սև, դուրս պրծած աչքերով ավտոմոբիլների մոտորներ: Վոստիկանական բժիշկը աստիճանների տակ շտապ արձանագրություն էր գրում բժշկական քննության մասին, զզվանքով նայելով գալարված դիակ-

ներին և էլեկտրական լապտերը բռնած՝ վախեցած ժանդարմին:

Միջանցքում քայլում էին ժանդարմներ, հետևելով, վորպեսզի բնակարանի կենվորներից վոչ վոք տանից դուրս չգա: Իսկ փոքրիկ սենյակում, ուր ապրել էր Բրոդարկյան, տակն ու վրա արած իրերի ու գրքերի քաոսի մեջ, վոստիկանական կոմիսարի առաջ ուղղված, կանգնել էր պառավ Ջուլհակուհին:

Ապակիները փշրված լուսամուտից ներխուժող քամին շարժում էր նրա գզգզված մազերն ու տատանում էր փոքրիկ նավթի ճրագի բոցը:

— Վորքա՞ն ժամանակ է ապրում է այստեղ Բրոդարկյա Գավրիլովիչը,—բարձրացրեց Միխայի վրա քննիչը պենսնեյի կլոր ապակիները:

— Նա այստեղ չի ապրել,—պատասխանեց Ջուլհակուհին հոգնած ու անտարբեր:

Քննիչը թռավ վոտքի:

— Ստո՛ւմ ես, անասուն,— գոչեց նա, բռունցքով խփելով Միխայի դեմքին...

Ամբողջ որվա աշխատանքը աղմկոտ մեքենաների մոտ, մահացու հոգնածությունը, անհանգիստ յերեկոյի սարսափներն ու յերկար, անքուն գիշերվա դեպքերը հանկարծակի ծանրությամբ ընկան Միխայի վրա, ինչպես չուգունե ծանր մի սալ, և քննիչի հարվածից նա

դանդաղորեն ընկավ հատակին, ուշագնաց: Քննիչը կրկին նստեց աթոռին:

— Ջուր տուր և ուշքի բեր այս զզվելի լեշը,— նետեց նա ժանդարմին:—Սատանան նրան տանի... Վոստիկանությանն ամեն ինչ կպատմի:

***

Չիչը և Սլավկոն սովորություն էին դարձրել ճաշել գլխավոր տրանսմիսիայի հսկայական շկիվի հաստ ճոպանները ծածկող տախտակյա լայն ծածկույթի տակ: Փոշեծածկ, կիսախավար անկյունում Սլավկոն շուռ տված արկղի վրա նստած ծխում էր ու կամացուկ ձայնով խրատում էր Չիչին:

— Յեթե մենք այնպես անենք, ինչպես դու յես առաջարկում, վոչինչ դուրս չի գա: Տղաները, ընդհանրապես ասած, խիստ են վախեցած: Վոչ վոք ցանկություն չունի դարպասից դուրս շպրտվել ու պահնորդական բաժին ընկնել:

— Ինչպե՞ս թե դուրս չի գա,—բորբոքվում էր Չիչը, շտապ ծամելով սոխի կանաչ շյուղերն ու ատամներով ահագին պատառներ պոկելով հացի կողքից:

— Ի՞նչ, քո կարծիքով տղաներին բոլորովին հարկավոր չէ՞ կազմակերպության մեջ առնել: Ինչպե՞ս պիտի մենք մեծացնենք բջիջը: Ինչպե՞ս պիտի մենք հարկադրենք աշխա-

տեսլու այդ աշակերտներին: Հարկավոր է նրանց հետ խոսել և խոսել, վորչափ կարելի յե, շուտ: Թե չե մեկ էլ տեսար նրանց ռոճիկը կավելացնեն...Այն ժամանակ էլ կորա՛վ:

— Դատարկ բան է,—վճռական հայտարարեց Սլավկոն:— Քո պլանից բան դուրս չի գա: Մենք արհմիութենական կոմիտեյին կից կազմակերպել ենք յերիտասարդական սեկցիա:

— Կազմակերպել եք...իսկ հետո ի՞նչ: Իսկ ի՞նչպես դու նրանց բջիջ կգրավես:

– Դու սպասիր, դու սկզբում լսիր: Ռոճիկի հավելման համար պետք է մի վորոշ բան անի յերիտասարդական սեկցիան... Ավելի ճիշտ մենք պետք է անենք յերիտասարդական սեկցիայի միջոցով: Այսպես: Դու, վորպես արհմիութենական լիազոր, պետքե անմիջապես ճաշից հետո գնաս Միլլերի մոտ և արհմիության անունից պահանջես, վորպեսզի վարչությունը տղերքին իսկական դրույքը վճարի...

– Բայց չե՞ վոր Միլլերը դրան չի համաձայնի, խելո՛ք գլուխ:

— Ե՛ է՛, տեսնում ես ահա: Բանն էլ նրանումն է, վոր չի համաձայնի, յես այդ առանց քեզ էլ գիտեմ: Դու կգնաս նրա մոտ պահանջելու վճարել լրիվ դրույք, համաձայն որենքի և այլն...իսկ նա ձեզ կուղարկի գրողի ծոցը:

Չիչին ավելի ու ավելի յեր պատում սաստիկ անհամբերությունը:

— Բայց ինչպե՞ս դու նրանց բջիջի մեջ կգրավես: Չե՞ վոր այն ամենն, ինչ դու ասում ես, կորած գործ է:

Սլավկոն նույնպես սկսում եր բարկանալ: Նա արհամարական սեղմեց շրթունքները և, կարծես ուշադրություն չառնելով իր խոսակցին, շարունակեց հանդարտ ու հանդիստ.

— Յեթե դու գնաս տղայի մոտ և վոչ այս, վոչ այն սկսես խոսել, վոր նա պետք է մտնի կոմունիստական կազմակերպության մեջ, տղան քեզանից ուղակի կփախչի: Փորձանքից հեռու.:Նույնիսկ կլինի այնպիսին, վոր վախից քեզ վոստիկանություն կմատնի: Հը՞...Մերկ ագիտացիայով ել բան դուրս չի գա: Դու ինքդ այդ բանն սքանչելի գիտես: Իսկ հիմի տես, թե ինչ դրություն է ստեղծվել այժմ: Տղաներին փող չեն վճարում, և նրանք զայրացած են դեվերի նման: Մեկ: Յերիտասարդական սեկցիան պաշտպան է կանգնում նրանց առանց վորևե հաջողության, վորովհետև Միլլերը վճարող չե.—յերկու: Արհմիութենական կոմիտեն նրանց առանձնապես պաշտպան հանդիսանալ չի կարող, վորովհետև նրանք, վորպես աշակերտներ, որենքով միության մեջ լինելու իրավունք չունեն: Ութ հոգու համար, հասկանալի յե, ամբողջ գործարանը գործադուլ չի անի: Իսկ յեթե նրանք գործադուլ անեն միայնակ, նրանց անմիջապես դուրս կշպրտեն գոր-

ծարանից և այլևս վոչ մի խոսակցություն: Ահա քեզ յերեք: Հիմա տես, տղաները բացարձակապես վոչ մի տեղ չունեն գնալու: Նրանք զայրացած են ամբողջ աշխարհի դեմ: Յեվ ահա, յերբ Միլլերը նրանց կմերժի, այն ժամանակ կգա մեր հերթը: Այն ժամանակ մենք նրանց կպատմենք բջիջի մասին և այն մասին, թե ինչ պետք ե անեն նրանք ... Հասկանալի՞ յե:

Ջինջը դադարեց ծամելուց, լարված ինչ վոր մի բան կշռադատելով: Վճռականորեն բարձրացավ տեղից, հագուստի վրայից թափ տվեց փշրանքներն ու ծպպացրեց լեզվով:

— Սատանա՛ն քեզ հետ: Յես իսկույն տղաներին կառաջնորդեմ Միլլերի մոտ,— ասաց նա:— Այժմ մենք իսկապես չիլափլավ կեփենք:

«Յաղրան» ակցիոներական ընկերության անկվածա— մանածային գործարանի ութ աշակերտները, վորոնք չորս ամիս առաջ վերջացրել եյին իրենց ուսուցման ժամկետը, խմբով կանգնած եյին մեխանիկական արհեստանոցի անկյունում, գործիքների բուդկայի մոտ և բավական բարձրաձայն ու միմյանց հետ համերաշխ, հայհոյում եյին գործարանի վարչության: Յուրաքանչյուրը նրանցից զգում եր հին վիրավորանքների ծանրությունը, վոր հանկարծ դուրս եյին լողացել գիտակցության մակերես: Նրանցից յուրաքանչյուրի աչքերի առջևով անցնում եր իր մոտիկ մանկությունը՝ մշտապես մռայլ, մտահոգված ծնողներ, խոնավ կիսախավար ներդակներ ու նկուղներ, նախնական դպրոցի քերծված նստարաններ. ապա աշխատանքի տարիները գործարանում — մշտապես կիսաքաղց տարիներ և մշտական անախորժություններ: Կիսամանկական օրգանիզմի ուժերը քամող տասներկու ժամյա բանվորական օր, վարպետների բռունցքների հարվածները, չնչին աշխատավարձը, անգթություն, անհամբերատարություն և բութ, աննպատակ վոխակալության մթնոլորտ: Միակ լուսավոր կետը ապագայի հորիզոնում յուրաքանչյուրի համար այն որն եր, յերբ կվերջանա ուսուցման ժամկետը և յերիտասարդ բանվոր—աշակերտը կդասվի «վարպետների» հաստիքում, այն մարդկանց հաստիքում, վորոնք ուղիղ հինգ անգամ ավելի վարձ են ստանում, քան աշակերտները: Այդ որվան սպասում եյին անհամբերությամբ. այդ որվա մասին յերազում եյին. այդ որվա հետ կապում եյին լավագույն հույսերը: Յեվ ահա,—որը յեկել ե, բայց յերազները մնացել են յերազներ: Միլլերը և բաժանմունքի ավագ վարպետը բոլորովին մոռացել եյին, վոր աշակերտները վերջացրել են ուսման ժամկետը և արդեն վաղուց հասակավոր, վորակավոր բանվորների աշխատանք են կատարում, որինական իրավունք ունեն լրիվ

դրույք ստանալու: Աշակերտները վերջին շաբաթ ստացել էին նույնքան, որքան և յուրաքանչյուր նախընթաց շաբաթ:

Զարմանքն անցավ չփոթվածության, չփոթվածությունը — հույսի: Գուցե պարոն Միլլերը իսկապես մոռացել է կարգադրություն անել ութ նորաթուխ «վարպետների» ռոճկի հավելման մասին: Չէ՞ որ պարոն Միլլերն այնքան գործեր ունի: Բայց շաբաթներն անցնում էին մեկը մյուսի յետեվից, իսկ վճարը չէր փոխվում: Յեվ ամեն անգամ դրասենյակի փոքրիկ լուսամուտի առաջ աշակերտներն ստանում էին իրենց զզվանքի աստիճան ձանձրացրած հարյուր քսան ու կես դինարը, որով չի կարելի նույնիսկ յերկու անգամ ճաշել «Եսպլանադ» ռեստորանում և որն հազիվ հնարավորություն է տալիս շաբաթվա ընթացքում սնվել հացով, խաշած բակլայով ու կանաչ սոխով, Թագաժառանգ Մարկոյի փողոցի անկյունի փոքրիկ ծխապատ պանդոկում... Խորտակվեցին նոր կոստյումի հույսերը, հեռանկարում մնաց նույն բակլայի խաշուն և նույն ստրկացնող հոգնածությունն, ինչ որ առաջ էր:

— Գետինն անցնեն ճարպակալած խոզերը:

Ավտոմոբիլներո՛վ են ման գալիս.— Լափում են, խմում ինչքան ցանկանում են, իսկ մենք պետք է քաղցից սատկենք:

— Սա իսկական քմահաճո՛ւյք է: Նրանք թքել են բոլոր կանոնների և օրենքների վրա:

Ջիչը կամացուկ մոտեցավ տղաներին: Կանգ առավ նրանց թիկունքում և մի քանի րոպե ականջ դրեց նրանց պայրագին բացականչություններին: Ապա վճռական դես ու դեն հրելով աշակերտներին, անցավ կենտրոն:

— Հերի՛ք կոկորդ պատռեք,— խիստ նետեց նա:

Աշակերտները սուս արին: Ջիչը հերթով ուղիղ նայեց նրանցից յուրաքանչյուրի դեմքին: Նրանց աչքերը փայլում էին բարկության կայծերով, բռունցքները սեղմված էին:

«Աքլորացել են, ինչպես հարկն է ... Ուր որ ուզես կգնան», — մտքում վճռեց Ջիչն ու վորչափ կարելի յե հանգիստ, ասաց՝

— Լսեցեք, տղայք: Գոռգոռոցով բան չի դուրս գա: Դուք ունեք արհմիություն, իսկ այս յերկրում կա ... են բանը ... այսպես ասած, օրենք: Հա՛:

Ջիչի հայտնությունը տղաների վրա շատ քիչ տպավորություն գործեց: Ադոլֆը՝ խարտիշահեր, կենսաշարժ մի խորվաթ, ինքնասեր ու հպարտ, արհամարհական ծամածություն արեց.

— Դու մեզ այդ օրենքների մասին դուրս մի տուր: Օրենքները գոյություն ունեն նրա համար, որպեսզի արհմիությունը մեզ պաշտպանել չկարողանա,— բացականչեց նա:

Ադոլֆը ցեխի աշակերտների ճանաչված առաջնորդն էր: Նրան անմիջապես պաշտպանեցին մի քանի ձայներ:

— Ճի՛շտ է:

— Օրենքով մենք արհմիության անդամ լինել չենք կարող: Յեթե չլիներ այդ անիծյալ օրենքը, մենք էլ կազմակերպված կլինեյինք:

— Վոչինչ անել չի կարող քո արհմիությունը օրենքի դեմ:

— Իսկ սա օրե՞նք է, վորպեսզի մարդիկ յերեք ամիս աշխատեն աշակերտների դրույքով, յերբ ուսուցման կուրսը շատ վաղուց վերջացած է ... դա օրե՞նք է:

— Փորձիր այժմ քո օրենքով Միլլերի մոտ գնա: Նա քեզ այնպես հուփ կտա, վոր հարազատ մորդ անունը կմոռանաս:

Խմբին մոտեցավ վարպետի օգնականն ու, գլուխը թեքած կողքի, վորոշ ժամանակ ականջ դրեց խոսակցությանը: Ապա լուռ քաշվեց մի կողմ:

Ջիչը լսում էր նրանց, ձեռքերը կրծքին խաչած: Նա փորձով իմանում էր, վոր այժմ հարկավոր է մարդկանց հնարավորություն տալ վորքան կարելի յե, լրիվ պարապելու, հարկավոր էր նրանց ուղեղներում ինչքան կարելի յե, շատ տեղ բացել...

— Յե՛վ կփորձենք, և՛ կգնանք,—կտրեց նա, յերբ հուզված բացականչությունների փոթորիկը մասամբ խաղաղվեց:— Դուք ի՞նչ եք կարծում, վոր Միլլերին չե՞նք կարող զսպել: Կարո՛ղ ենք, մի վախեցեք: Միայն թե, ի հարկե, ակցիոներական ընկերության վարչությունը չէ, վոր պաշտպան կկանգնի ձեզ: Յեվ իհարկե, վոչ թե բանվորական ատյանի չինովնիկը: Յեվ, պարզ բան է, վոչ պարոն նահանգապետը: Դրանք բոլորը մի պտուղ են: Այո՛: Մենք ինքներս, մեր կազմակերպվածությամբ կարող ենք պաշտպանել մեզ: Հա՛: Առանձին-առանձին մեզանից ամեն մեկին դարպասից դուրս կշպրտեն: Իսկ յեթե դուք համախմբվեք միության շուրջը, վոչ վոք ձեզ ճնշել չի կարող:

Ջիչը խոսում էր յերկար, խոսում էր շրնչահատ և, ինչպես միշտ, զայրույթով, չեշտումներով, կենդանի շարժումներով համոզելով մարդկանց:

— Այդպես, յեթե մենք ունենք արհմիություն և յեթե այս յերկրում դեռ յեվս կա մի չնչին օրենք, նշանակում է, մենք պետք է ձգտենք իրականացնել տալու օրենքը արհմիության միջոցով: Յեվ ահա յես, վորպես արհմիութենական լիդեր, առաջարկում եմ ձեզ բոլորիդ այս րոպեյիս ինձ հետ միասին գնալ Միլլերի մոտ: Պահանջենք նրանից, գրողը տանի, վորպեսզի նա վճարի մեզ լրիվ դրույք, վորպեսզի նա կատարի օրենքը: Հա՛:

Աշակերտները լռեցին ու միմյանց նայեցին: Միլլերի իրե՛ն մոտ: Այդ մեծ առանձնասենյակը, որի մասին այնքան խոսում են: Յեվ բոլորը միասին: Յեվ այն էլ պահանջով, սկանդալով: Իսկապես այդ գրողի տարած Ջիչը միանգամայն արտասովոր գործ է մտածել:

Գլուխների վրա վռնաց գործարանային շչակը: Ներքեվում Փշշաց գոլորշին, և փոկերը կամացուկ շարժվելով տեղերից սողացին, սկզբում դանդաղ, ապա արագ: Յեվ, վերջապես, շաչելով ու սոսափելով ինչպես աշնան տերևներ, պտտվեցին կատաղի ռիթմիկ պարով:

Աշակերտներն անօգնական նայեցին շուրջը: Կրկի՞ն սատանոկների մոտ: Կրկի՞ն աշխատանքի: Ո՛չ: Բավակա՛ն է: Շա՛տ են աշխատել:

Ադոլֆը, աջ ու ձախ հարևանների հրմշտուքով, մոտեցավ Ջիչին:

— Յես կարծում եմ, բոլոր տղաներն համաձայն են գնալու: Վախկոտներ,—Ադոլֆը հայացքով ընդգրկեց ներկաներին,—մեր մեջ կարծես չկան: Սատանան տանի նրանց, թող դուրս չպրտեն: Լավ է բոլորովին անգործ նստել, քան աշխատել ձրի: Ճի՞շտ եմ ասում յես, տղայք:

— Ճի՛շտ է:

— Գնա՛նք:

Ջիչը թեթևորեն ցած թռավ դազգյահի

վրայից և Ադոլֆի թևը մտնելով, քարշ տվեց նրան իր հետ: Աշակերտները, այնպես ցույց տալով, իբր գնում են մի շատ սովորական գրոսանքի, զսպած արագացած շնչառությունը և ձեռքերը գրպանները դրած, շարժվեցին Ջիչի յետևից: Ճանապարհին նրանց հանդիպած վարպետի օգնականը զարմանքով հարցրեց.

— Ո՞ւր եք գնում, ձրիակերներ: Ձե՞ք լսում շչակը: Ուզում եք տուգանվե՞լ,—հարցրեց նա սպառնական:

Տղաներից մեկը հպարտ դարձավ նրան.

— Գրասենյա՛կ, Մի՛լլերի մոտ,— նետեց նա չինծու անտարբեր:

Վարպետը չարախինդ թափահարեց գլուխը:

— Գրասենյա՛կ, Մի՛լլերի մոտ ... Գնում եք հաշիվնե՞րդ փակելու, պորտաբույծներ: Տեսեք, դուք շատ շուտ հաշիվ կտանաք, յեթե տեղներդ նստել չեք կարողանում ... Աղմըկարարնե՛ր...

Միլլերը աշակերտների գալուց ավելի շատ զարմացավ քան բարկացավ:

— Ի՞նչ,—հարձակվեց նա սպասավորի վրա,—այդ մարդիկ համարձակվում են ամբողջ բանդայով ինձ մո՞տ գալ: Այն էլ աշխատանքի ժամանա՞կ: Ներս բերեք այդ սրիկաներին:

Բարձրացնելով դռան ծանր վարագույրը,

աշակերտները ներս մտան բոլորը միասին և կանգ առան շեմքին, ձեռքերի մեջ ճմրթելով գլխարկները: Ջիչն առաջ անցավ:

— Պարոն քարտուղար,— սկսեց նա ամուր,— մենք յեկել ենք ձեզանից բացատրություն ստանալու մեքենայական բաժանմունքի աշակերտների հակաօրինական տարիֆիկացիայի մասին: Բարի յեղեք...

Միլլերը, կարմրատակելով, վեր թռավ բազկաթոռից և, բռունցքը սեղանին խփելով, ընդհատեց Ջիչին:

— Ի՞ի՛նչ...— բղավեց նա: — Ինչո՞ւ դուք չեք աշխատում: Ինչպե՞ս եք դուք համարձակվում ինձ մոտ գալ անպատեհ ժամի:

Աշակերտներից վոմանք վախեցան ու յետ քաշվեցին դեպի դուռը: Ջիչը կրկին մի քանի քայլ արեց առաջ և, ձեռքերը խորը կոխելով գրպանները, կանգ առավ քարտուղարի սեղանի առաջ, նայելով Միլլերի դեմքին ծաղրական ու չար հայացքով:

— Պարոն քարտուղարը մոռանում է, վոր յես բանվորական կազմակերպության լիազորն եմ,— ասաց Ջիչը հանդիստ,— և վոր ինձ վրա չի կարելի բղավել ինչպես ջորու վրա...

Միլլերը բռունցքով կատաղի հարվածում էր սեղանը և թուք շաղ տալիս:

— Յես ձեզ չեմ հարցնում այն մասին, թե ո՞վ եք դուք,— բղավում էր նա:— Յես ձեզ հարցնում եմ՝ ինչո՞ւ դուք բոլորդ միասին ամ-

բողջ խմբով յեկել եք ինձ մոտ անժամանակ: Ո՞վ է ձեզ թույլ տվել այս խայտառակություն: Ի՞նչ: Ո՞վ է ձեզ թույլ տվել ձգել աշխատանքը, հարցնում եմ յես:

Ջիչը շուռ յեկավ աշակերտների կողմը, հեգնական աչքով արեց Միլլերի կողմը և թեթև շարժումով հրավիրեց առաջանալ ավելի մոտ: Ապա իր նիհար դեմքի վրա հաճոյական ժպիտ կազմելով, թեթևակի գլուխ տվեց Միլլերին, վորը կուշտ բղավելով, նստեց աթոռին, կատաղի և արագ ինչ վոր գրելով իր ծոցատետրում:

— Պարոն քարտուղարը կամենում է իմանալ ինչո՞ւ մենք համարձակվեցինք գալ ձեր մոտ անպատեհ այս ժամին,—հանդիստ ու թունալից սկսեց Ջիչը: — Մենք մեր պարտքը համարեցինք հաղորդել ձեզ ի գիտություն, վոր յերեք ամիս առաջ ուսումը վերջացրած աշակերտներին շարունակում են վճարել աշակերտական դրույքով: Դուք, հավանորեն, չգիտեք այդ անլուր, աղաղակող անօրինականության մասին և, իհարկե, մեզանից շնորհակալ կլինեք այն բանի համար, վոր մենք մեր այցելությամբ հնարավորություն տվեցինք ձեզ վերականգնելու վոտնահարված արդարությունը:

Այս համառոտ ճառը Ջիչը պատրաստել էր վաղորոք, յերկար մտածելով և խնամքով ընտրելով ամենից պերճ բառեր ու արտահայտություններ:

— Մտիկ տուր, վոնց ա նրան նեղը գըցում,— հիացմունքով շշնջում եյին աշակերտները, արմունկով հրելով միմյանց:

Միլլերը նայեց տղաներին, իր հայացքը պահեց Ջիչի անթարթ, չարություն արտահայտող աչքերին ու հասկացավ, վոր նրան ծաղրում են: Նա զսպեց իրեն: Ընդունեց պաշտոնական տոն և, սեղմելով սեղանի ծայրին յեղած զանգի կոճակը, դարձավ աշակերտների կողմը:

— Դուք կամենո՞ւմ եք իմանալ, ինչու վարչությունը ծունկի չեկավ ձեր առաջ և դրույք չնշանակեց ձեզ, համաձայն ձեր խուլիգանական արարքների և փչացած փսլնքոտների պահանջների: Համեցե՛ք: Դուք կստանաք այնպիսի ռոճիկ, ինչպիսին մենք կբարեհաճենք տալ ձեզ: Հասկանալի՞ յե: Իսկ յեթե դա ձեր հաշվին չի գալիս, գործարանի դռները միշտ բաց են: Ձեր փոխարեն բավական շատ անգործներ կգտնվեն...

— Պարոն Բորայ,-դարձավ Միլլերը ներս մտած պաշտոնյային,— այս յերիտասարդների ռոճիկներից պահել յերեք որվա աշխատավարձ, աշխատանքից ինքնակամ հեռանալու համար, համաձայն գործարանի կանոնադրության: Իսկ այս պարոն արհ-մի-ու-թե-նա-կան լի-ա-զո-րին ընդհանրապես ջնջեցեք մեր բանվորների ցուցակից, վոր չարամտորեն գրգռում է ներքին կարգապահության կանոնները

խախտելու ... Մենք հարկադրված ենք հրաժարվելու ձեր մատուցած ծառայությունից, պարոն լիազոր: Այո՛ս: Իսկ դուք բոլորդ կարող եք գնալ: Այլևս յես տրամադիր չեմ ձեզ հետ խոսելու: Յեվ միանգամ ընդմիշտ հիշեցեք, վոր նման կամայական արարքների համար մեր գործարանում անհապաղ հեռացնում են: Ձեր վերաբերմամբ յես ներողամիտ եմ լինում միմիայն շնորհիվ ձեր յերիտասարդ լինելուն և անփորձության:

Միլլերը կատարյալ բավարարություն զգաց իր արարքով ու յետ ընկավ բազկաթոռի թիկունքին: Բայց աշակերտները չեյին հեռանում: Ինչպե՞ս: Նրանց դեռ խրատներ են կարդում վորպես յերեխաների: Նրանց կտրում են քաղցից և նրանց ռոճիկից ել բռնում են: Վո՛չ, դա արդեն չափազանցություն ե: Յեվ սկզբում կամացուկ, ապա ավելի ու ավելի բարձր քրթմնջացին տղաները, աստիճանաբար մոտիկանալով քարտուղարական սեղանին: Միլլերը սեղմեց կոճակը: Դուռը բացվեց ու առանձնասենյակ մտան ինդուստրիալ պահնորդության գործակալները:

— Հեռացրեք այս յերեխաներին,— մըռմըռաց Միլլերը:

***

Սլավկոն մի քանի անգամ շրջանակը վեր ու վար ցնցելով, բարձրացնելով սանրած թելի շերտը, շրջանակը բոլորովին հանեց մեքե-

նայիր։ Ձախ աչքը կկոցելով և ծուլելով, պող-պատե յերկար կտորը քթին մոտեցրեց և պը-տույտ տվեց, զանազան կողմերից դիտելով մակերեսը։

— Մաքուր է, անիծյալը,— հաստատեց նա մտքում։ Շրջանակն շտամպ դուրս տարավ ար-հեստանոց, մուրճի մի քանի թեթև զարկերով ուղղեց այն, կարծես խաղ անելով, հմուտ և թեթև քսեց խարտոցով գլուխների առվակ-ներով և, վերադառնալով բաժանմունք, շըր-ջանակն հագցրեց հին տեղը։

— Թո՛ղ,— ձայն տվեց նա ժապավենա-գործին։ Մի քանի րոպե ականջ դրեց մեքենա-յի թխթխկոցին... Ձայնն հավասար էր։ Շըր-ջանակներն իջնում էին ռիթմիկ, առանց ընդ-միջումների։ Ամեն բան կարգին է։ Շուրջը նայելով (վարպետը ոչ մի տեղ չէր յերե-վում), Սլավիկոն վերցրեց գործիքները և ու-ղևորվեց մեխանիկական բաժին ծխելու։

Կաթնապակետակ մառախուղով լուսա-վորված աշակերտները, վոր յերեկ «դիմու-մով» գնացել էին Միլլերի մոտ, աշխատում էին իրենց ստանոկների մոտ լուռ, մռայլ կի-տած հոնքերը։ Ներսում փրփրում էր պղտոր, թանձր զայրույթը։

Ո՞ւր գնալ այժմ։ *** Նրանցից յերեքը Ջիչի հետ գիշերել էին մոտակա վոստիկանական թաղամասում։ Ցեխ տնքում էր մարմինը, ծածկված լեռնացած արյան կապտույտ բծե-

րով։ Դևերի պես կոպիտ են այդ անիծյալ ինդուստրիալ պահնորդության գործակալնե-րը։

Անհոգ քայլվածքով, թեթևակի կորաց-վելով ու ծխախոտ փաթաթելով, Սլավիկոն մոտեցավ աշակերտներից մեկին։ Տղան ամեն ակնթարթ ձախ ձեռքով ուղղելով դեմքից սա-հող փաթաթանը (փաթաթանը ծածկում էր աչքի տակի կապտավուն ուռուցքը, վոր մնացել էր թաղային վերահսկչի բռունցքի հարվածից), աջով ամուր սեղմել էր սուպոր-տի կոթը։ Կտրիչի մանիշակագույն պողպա-տը, աղմուկով թաղվում էր կատաղորեն պը-տտվող պղնձի կտորի մեջ, հովհարաձև դա-նելով մանր, փայլուն տաշեղներ... Սլավիկոն արմունկով հրեց տղային ու անհոգ աչքով ա-րեց.

— Հը՞։ Ինչպե՞ս էր այնտեղ յերեկ։

— Կո՛րի գրողի ծոցը,— չարացավ նա, ցասումնալից, ուժգին սեղմելով կոթը։ Կտրի-չը կտրվեց չոր ճայթյունով, իսկ փոկը դուրս ընկավ չկիվից և, գալարվելով ինչպես յեր-կար օձ, դանդաղ իջավ հատակին։ Աշակեր-տը հատընտիր հայհոյանքների տարափ տե-ղաց։

Սլավիկոն խորամանկորեն նայում էր նը-րան, կոճակների վրա տարուբերվելով։

— Ի՞նչ, յերեվում է Միլլերը շատ հյու-րասեր էր։

— Կո՛րի դժողքը, Միլլերի և ամբողջ ավազակային բանդայի հետ,— գոչեց տղան, բարձրացնելով ձեռքի բանալին, որով նոր կտրիչ էր ամրացնում: Սպասելով սկանդալի և պատրաստվելով կարիքի դեպքում միջամտելու, հարևանները կանգնեցրին իրենց ստանոկները: Սլավկոն քմծիծաղում էր, քորելով ծնոտը: Ապա կարեկցական խփեց նրա ուսին:

— Դու մի բարկացիր, տղա: Ես ինքս էլ գիտեմ, որ ուրախ չեք ... Բայց և այնպես շատ է ցավում, չէ՞:

Աշակերտը հևում էր ու թասում պարկուճի մեջ սեղմելով պնդձի կտորը: Լուռ էր, ծուռ հայացքներ նետելով չորս կողմը: Նրա հարևանները կրկին խորասուզվեցին իրենց աշխատանքում:

— Հեծե՞լ են, ասում ես, ձեր մեջքերին: Կողքներդ ջարդեցին,— մտախոհ ասում էր Սլավկոն:— Էշերը, ընդհանրապես ասած, նրա համար գոյություն ունեն, որպեսզի նրանից հեծնեն ու ծեծեն... Պարզ բան է: Մտիկ տուր, տես ինչպես են ռեխդ նախշել: Դեռ շնորհակալ կեղիր, որ փողոց չեն շպրտել: Մյուս անգամ դուրս էլ կշպրտեն:

Լռություն: Կտրիչները ճռնչում են: Հրնչում է ատամնավոր անիվների չափավոր մրմունջը:

— Ի՞նչ, դու մտածում ես, որ պարոն-

ները քո վերաբերմամբ կարող են փողորմա՞ծ լինել: Մտածում ես, որ նրանք քեզ կխղճա՞ն: Զուր ես քիթդ կախ գցել պառավ կնկա նման: Հեծել են մեջքիդ, ծեծել են քեզ— և կհեծնեն քեզ և կծեծեն քեզ, մինչև չես դադարի պառավ կնիկ լինելուց ու չես սկսի պայքարել:

Հանդիստ ծաղրական և միաժամանակ բարեկամական խոսքերը աշակերտի գլխում նոր մտքեր առաջացրին: Իսկապես, նա պայքարի մասին արդեն շատ անգամ է լսել: Նա ականատես է յեղել պայքարի և յերբեմն — նրա ակտիվ մասնակիցը: Վերջին գործադուլի ժամանակ նա առաջինը դուրս հանեց ելեքտրոմատորի ռուբիլնիկը: Բայց այդ բոլորն այն պայքարը չեր, ինչ որ հարկավոր եր: Ճշմարիտ է, նա գիտեր կոմունիստների մասին: Նա մոտավորապես գիտեր, ինչի յեն ձգտում նրանք: Բայց նա գիտեր նաև պետության պաշտպանության որենքների մասին: Նա լսել է յերկար պատմություններ Մակեդոնիայի թիապարտության բանտերի սարսափների մասին: Բայց այժմ նրա առաջ սոսկալի պարզությամբ կանգնեց քաղցած գորշ որերի հեռանկարը, չոր, վոլոր—մոլոր ճոպանի նման յերկար ձգված:

Ցեվ կարծես քնի մեջ լսեց նա ականջի տակ կամացուկ շշունջը՝

... — Գիտես ի՞նչ է ասել ծերուկ Մարքսը: «Պրոլետարները վոչինչ չունեն կորցնե-

կորցնելու, բացի իրենց շղթաներից, բայց կնվաճեն նրանք ամբողջ աշխարհը»:

Տղան բարձրացրեց ձեռքը սուպորտից և մատները թաղեց գլխի խիտ բաշի մեջ:

— Այո, այո, — պետք է կռվել: Պետք է խփել բոլոր այդ շանվորդիներին: Այսպես չի կարելի այլևս, — շշնջաց նա դրդված:

Սլավկոն մի քանի վայրկյան նայեց նրան կողքից, հասկացող հայացքով, ապա աչքով անելով ինքն իրեն, ավելացրեց արդեն միանգամայն բարեկամական տոնով, բայց կամացուկ և ջերմաբար:

— Վերցրու առայժմ ահա այս թղթերը: Մեկը պահիր ինքդ, իսկ մնացյալը բաժանիր ընկերներին... կանե՞ս:

— Կանեմ, — խրոխտ պատասխանեց աշակերտը:

— Միայն, — Սլավկոյի աչքերը նեղացան և ձայնին տալով շշունջի, — յեթե մտածես լեզուդ չպահել կամ մատնություն անես, յեթե դավաճանես ընկերներիդ, այն ժամանակ իմացի՛ր...

Աշխատանքային օրը վերջացած է: Բանվորները հոգնած դուրս են գալիս գործարանի դարպասից, անտարբեր բառեր փոխանակելով միմյանց հետ: Աշակերտները միմյանց մեջքից թափ են տալիս բամբակի փոշին ու մազմզուկները:

Արեգակը ծուլորեն իջնում է բալկանյան

փողոցների տանիքների յետևը: Մայթերը ծածկված են ստվերների լայն շերտերով: Եվ ստվերների մեջ մարդիկ առաջ են շարժվում ավելի աշխույժ ու արագաքայլ, ուրախ՝ յերեկոյան զովին, հանած լայնեզր ծղոտե գլխարկները: Աշակերտները գնում են փողոցով համերաշխ խմբով, ականջներին քաշած հայրական հին կեպկաները և նախանձով նայելով միրգ ուտողներին:

— Մինչև յե՞րբ պիտի շարունակվի այս խայտառակությունը, — փնթփնթաց Ադոլֆն ավելի իր համար, քան խոսակիցների: — Սատանան գիտե ինչքան ժամանակ է անցել արդեն, իսկ մենք դեռևս գրպաններումս վոչ մի գրոշ չունենք: Տեսա՞ք ինչ են գրում կոմունիստները: Եվ բոլոր այդ...

— Կամա՛ց, եշ, ի՞նչ ես ձենդ գլուխդ գցել: Կլսեն, — հրեց Ադոլֆին Ֆրիցը:

Աշակերտները ցրվեցին տները, թաղվեցին գարնանային զովությամբ լցված միջափողոցները: Անցնում էին մայթերի վրա խաղ անող յերեխաների կողքով, հոգնած ներս էին սողում նկուղ-բնակարանները: Գլուխներում չուռ ու մուռ էին գալիս փոքրիկ կարմիր թերթիկներում գրած նախադասությունները:

* * *

Արեգակը մայր մտավ:

Սավան հանդարտ քսվում էր ափի ավա-

ղին, քնքուշ սլավում էր, յերբեմն խառնվելով թիերի թեթև զարկերից: Անտառի կածանով դանդաղ քայլում եյին Սեֆերը և Սլավկոն: Գիշերային թռչունների ճթճթոցն ու սուլոցները խանգարում եյին անտառի լռությունը:

— Ամեն ինչ հրաշալի յե ընթանում,— պատմում էր Սեֆերը:— Բոլոր տղաները թռուցիկներ ստացել են: Ինքս տեսա, ինչպես կարդում եյին: Անպիտանները դեռ զգուշ լինելու սովոր չեն:

Սլավկոն լսում էր լուռ, տատանելով գլուխը:

— Արի վաղը նրանց հավաքենք: Մենք միասին կարող ենք այդ մասին վորոշում կայացնել ինքնուրույն կերպով: Չե վոր մենք բյուրոյի մեծամասնությունն ենք ... Ի դեպ, Ջիչին շո՞ւտ բաց կթողնեն:

— Նրան, ասում են, արդեն բաց են թողել: Յերեկ յերկոյան տեսել են ծերունի Կլենչիչի պանդոկում ընթրելիս: Այս յերեկո նա անպայման կգա ինձ մոտ, վորովհետև գիշերելու տեղ չունի... Նա ապրում էր կազարմայում. յերբ գործարանից արձակել են,—հավանորեն բնակարանից էլ քշել են: Այժմ չերդակում կտեղավորվի վորևե մի այլ հիմար:

Սլավկոն գոհունակությամբ տատանում էր գլուխը:

— Դե յեթե Ջիչին բաց են թողել, այդ

դեպքում շատ լավ է: Յես կարծում եմ տղաներին պետք է հավաքել այստեղ: Ահա այնտեղ, բացատում, ուղեհատման վայրից հեռու: Անտեղ, վորտեղ ճանապարհի մոտ մատուռ կա ցցված:

— Գիտեմ:

— Այդպես, վաղը, յերեկոյան ժամի յոթին: Տղաներին լավ է իմաց տալ Ֆրիցի միջոցով: Նա, իմ կարծիքով, նրանցից ամենից վստահելին է: Դու նրան ինքդ կասես... Նու, հասկանալի յե, հետները թող վերցնեն գարեջուր, վորևե ուտելիք, վորպեսզի քաղաքադըրսի եքսկուրսիայի տպավորություն ստացվի... Ժողովը, բջիջի անունից, թող վարի Ջիչը: Դու նրան ասա, վոր կոմիտե գնա և վաղը «Սևին» անպայման բերի վորպես զեկուցող: Սևը տղաներին շատ շուտ կհամոզի...

Սամայի կամուրջի վրա Սեֆերն ու Սլավկոն բաժանվեցին:

«Յադրան» ակցիոներական ընկերության անկվածա–մանածային գործարանի բջիջի հերթական նիստը վերջացավ:

✲✲✲

Յերբ Կոլլարը յերեկոյան վերև բարձրացավ, Բրոդարկան նկատեց, վոր մեքենավարը գտնվում է սքանչելի տրամադրության մեջ: Նա ձեռքերն էր շփում, և նրա ծխամորճն ավելի ծուխ էր անում, քան յերբևէ: Կոլլարը նստեց ծղոտի վրա, Բրոդարկայի անկողնու մոտ:

— Հը՞, աղջիկս, առողջանո՞ւմ ես,— հարցրեց նա բարեհամբույր:

Բրոդարկյան ժպտաց, որքան կարելի էր առույգ և անբռնազբոսիկ:

— Յես այսօր փորձ արեցի ինքնուրույն շարժվել: Քայլել կարող եմ. վոտքս համարյա չի ցավում: Դու ինձ կարող եյիր ցած իջեցնել մի փոքր զբոսնելու.

— Լավ, այդ բանը մենք կանենք... Մի յերեք օրից, ասում են, մե՞ր կլինես վերջնականապես: Իսկ ինչպես է առողջությունդ ընդհանրապես:

— Հիանալի... Ինչ նորություն կա:

— Ա՜յ, նորություն, աղջիկս, շատ նորություն կա: Գլխավոր նորությունները յերկուսն են՝ նախ և առաջ կարգի յե դրված այն, ինչի մասին դու վաղուց յերազում եյիր — ձայնագրությունը կենտրոնական բանակի հետ: Այդ գործը կատարվում է յերեք մարդու միջոցով: Ճիշտը, միայն յերեք մարդ են իմանում այդ մասին: Դու, նշանակում է, չորրորդն ես...

* * *

Բրոդարկյան քիչ մնաց շնչասպառ լիներ ուրախությունից: Գտավ Կոլյայի հոր, կոշտերով ծածկված ձեռքն ու սեղմեց, որքան ուժ ուներ: Մեքենավարը փոքր ինչ շփոթվեց:

— Թե-թե,— շնչեց նա, ինքն կորցրած:— Յես գիտեյի, իհարկե, վոր դա քեզ շատ դուր կգա: Դու հենց այսօր կարող ես նամակ գրել

Միլանին: Իսկ յերկրորդ նորությունն ահա սա է — վորովհետև արհեստական մետաքսի գործարանում քո աշխատելուց վոչինչ դուրս չեկավ, ապա մենք վորոշեցինք քեզ բոլորովին դուրս հանել անվճար դրությունից և թողնել աշխատելու կոմունայի տրամադրության տակ: Ճշմարիտ է, մեր աղվեսները շատ էլ մեծ փող չեն ունենում, բայց մի կերպ ապրել կարող ես: Սպասիր ինձ մոտ, կգա «Սեր»: Դու նրան ճանաչո՞ւմ ես, նա կխոսի քեզ հետ:

Նույն ժամից Բրոդարկյան արդեն Կոլյայի հանձնեց Միլանին գրած նամակը, իսկ կես ժամից, չհրդեհի բարձրացած «Սեր» մարզային քարտուղարության անդամը: Նա ներս մտավ անձայն, անկանոն լայն արեց անկյուն մի քանի բառեր լսում նայում էր նրան Բրոդարկյանին, վորի աչքերից թեթև շառագունել էր: Լուսավորված լուսնի նուրբ շողերով, «Սեն» ավելի սև էր թվում, քան արևի լույսի տակ: Փոքրիկ, շարժուն մարմնի վրա ամրված երկու մեծ, այծի ուսերի խեղճ, կոշտ, կապտավուն մազերով:

«Սեր»՝ ծանոթացավ մանկեղորոնոցի և անցյալում աշխատած հարավային երկու երկրների ընդհանուր կուսակցական աշխատանքներից մեկը: Արդեն յերկու տարի էր նա աշխատում էր թաղամասային հյուսիսային մասում, վորտեղ դուրս կգային միայն դրեյֆերները և խորհրդային կանանց համար յերկրորդ կենտրոնական

սպասելի տեղերում: Նա համառորեն չէր կամենում գաղթել, չնայած իրեն մշտապես սպառնացող վտանգին: Յեվ ամբողջ յերկրի բուրժուական թերթերը սարսափով ու կատաղությամբ պատմում եյին նրա գործունեյության մասին, մշտապես խտացնելով գույները և նրան պատկերացնելով ամեն տեսակ չարագործությունների ընդունակ մի հրեշ:

Կոլլարը չերդակ բարձրանալով, արթնացրեց Բրոդարկային և ճրագը կախեց առաստաղից: Սևը նստեց ծղնոտի վրա, թուրքական ձևով ոտքերը ծալելով:

— Ահա ինչ,—սկսեց նա չոր և համարյա անլսելի,—քո դրությունն այնքան էլ լավ չէ: Կախաղանն ապահովված է քեզ համար... Յեվ այժմ քեզ համար կա յերկու հեռանկար: Դու պետք է ընտրես դրանցից մեկն ու մեկը:—Սևը լռեց, հայացքը հառած մի կողմ, ապա թեթևակի վեր քաշեց քիթը:

— Հեռանկար առաջին, — շարունակեց Սա,—դու ուղեվորվում ես Ավստրիա, այնտեղից նարող կլինեն քեզ փոխադրել Խորհրդային Միություն: Դու կատարյալ իրավունք ունես դրան: Յեվ այդ իրավունքը վերապահել է քեզ Կենտրոնական կոմիտեն: Այդ գործը գլուխ բերելը դժվար չէ, և կարող ենք գլուխ բերել մոտակա յերկու շաբաթվա ընթացքում: Մեկ ամսից դու կլինես կատարելապես ու բացարձակ ապահով դրության մեջ Մոսկվայում... Յերկրորդ հեռանկարն ավելի վտանգավոր է քեզ համար, սակայն դա դեռ մոտավոր կորուստ չի նշանակում: Անլեգալ, զգուշ լինելու դեպքում կարելի յե շատ յերկար դիմանալ: Կարճ ասած— մարզային քարտուղարությունը գտնում է հնարավոր քեզ թողնել յերկրում, կուսակցության փունկցիոների աշխատանքով: Դու կտանես հրահանգչի աշխատանք, քարտուղարության հատուկ հանձնարարություններով: Յերկրորդ հեռանկարը մենք հարկադրված յեղանք առաջարկել քեզ, վորովհետև վերջին դեպքերի հետեվանքով, մարդկային մատերիալը մեր կազմակերպություններում խիստ պակասել է: Յուրաքանչյուր աշխատող զույգ ձեռք մեզ համար այժմ առանձնապես արժեք է ներկայացնում...Մենք վորոշեցինք վոչ մի ազդեցություն գործ չդնել քո վորոշման վրա: Մենք վրոշեցինք քեզ տալ ընտրության կատարյալ ազատություն: Լա՛վ մտածիր: Յեթե դու չես կարող վորոշել այժմ, պատասխանը կհայտնես Կոլլարի միջոցով:

Սևը լռեց և անմիջապես գլանակ վառեց: Լուցկու բոցի արտացոլումը թրթռաց նրա խիտ հոնքերի տակ թաքնված աչքերի լայնացած բիբերում: Տիրեց լռություն:

Բրոդարկան տառապագին մտածում եր: Նրան թվում եր, վոր իր ուղեղը մտքերի հոսանքից, տեսարանների ու պատկերների հատվածներից ռետինե սպունգի նման ուռել է:

Խորհրդային Միություն... Ամբողջ աշխարհում միակ բանվորական յերկիրը: Ոչ,—հագեցած հսկայական գործարանների ու շախտերի բույրով, անծայրածիր ընդարձակ դաշտերի բույրով: Միլիոնավոր տեկստիլշչիկներ, միլիոնավոր մետալիստներ, վորոնք իրենք կառավարում են իրենց գործարանները, իրենք անխոնջ աշխատում են իրենց դասակարգի համար: Հարյուր հազարավոր մարդիկ, վորոնք մեկնաբանում են իրենց մտքերը հսկայական լսարաններում կամ անվախ գրի յեն առնում թղթին, չմտածելով այն մասին, վոր մեկ էլ տեսար հայտնվեց վոստիկանական լրտեսն ու ձեռագրերի ամբողջ տետրակներ պետք է ուտել, կուլ տալ կամ վոչնչացնել, վորպես մերկացնող փաստաթղթեր: Բրոդարկայի հիվանդությունից բորբոքված ուղեղում կուտակվում են պատկերներ, մեկը մյուսից ֆանտաստիկ: Տեսնում է ահա նա կառուցվող հսկայական մի շենք: Նա բերանում զգում է մանրիկ տառերով գրված ծխախոտի փոքրիկ թերթիկների դառնահամությունը: Այդպիսի թերթիկներ, կոլոլած ու առանց ծամելու, շատ անգամ է նա կուլ տվել, վտանգի մոտիկության դեպքում: Բրոդարկայի առաջ պատկերացավ Վորոշիլովի լուսանկարը, ձիու վրա, վորը նա տեսել էր մեկ անգամ «Բալկանյան Նորությունների» էջերում: Ապա անհայտացավ դա, ու Բրոդարկան ընկավ գործարանի մանածա-

յին որահը, իր ստանոկի առաջ: Հարյուրավոր իլիկներ կատաղի պտտվում եյին, չխկչխկացնելով ընդհատ-ընդհատ: Ու թվում է Բրոդարկային, վոր մեքենան փոխվել է բազմոտն փայլուն յերկար մի կարիճի: Մերթ այստեղ, մերթ այնտեղ կարիճի ունելիները գրկում են լռակյաց բանվորուհիների չոր մարմիններն ու ավելի ամուր: Մեկը անցնում է գործող մեքենաների յերերացող կնճիթների, շարժափոկերի ոձերի միջով: Մարդը քայլում է, անշարժ հայացքն առաջև հառած: Մեքենաների ուրվագծերը ձուլվում են, անեյանում, փոխվում են բանտային սենյակի գորշ ծեփի: Մարդու առաջ ցցվում է վանդակը: Իսկ այն կողմ, վանդակի յետև, անծայրածիր սև յերկնքի խավարի քառակուսու վրա առկայծում է փոքրիկ մի աստղիկ: Մարդը կանգ է առնում և սկսում է գրել...Միլա՛նը:

Բրոդարկան բաց արեց աչքերը: Կոլլարը նայում եր նրան լուռ և ուշադիր: Սևը չուռ եր յեկել, հետեվելով իր գլանակի կրակին: Բրոդարկան բարձրացրեց գլուխը: Կոլլարը և Սևը միմյանց նայեցին:

— Դու ավելի լավ է պարկիր ու քնիր,— կամացուկ ասաց մեքենավարը, ձեռքի սառը ափը դնելով Բրոդարկայի ճակատին և նրա գլուխը բարձին իջեցնելով:—Կարծես կրկին տենդ է սկսվում:

Բրոդարկան թեթևակի հեռացրեց նրա ձեռքն ու հանդիպեց Սևի հայացքին:

— Յես մնում եմ այստեղ և կշարունակեմ աշխատանքը: Յես վոչ մի տեղ չեմ գնա,— ասաց նա հաստատակամ, հանգիստ:

Սևը ժպտաց բերանի մի անկյունով:

— Լավ... Այդ պատասխանը յես համարում եմ նախնական: Վաղը դու Կոլլարին կհայտնես վերջնականապես պատասխանը: Նա քեզ մոտ կգա ճաշի ընդմիջումին, իսկ դու առայժմ առողջացիր:

Յերկուսով անհայտացան անցքում, իսկ Բրոդարկան լայն բացած աչքերով նայում եր չերդակի լուսամուտի ապակուն, վորի միջից ներս եյին թափանցում լուսնի գունատ ու անուժ շողերը... Իսկ լուսինը մեծ եր ու փայլուն, կարծես նոր հենց միայն դուրս եր յեկել լեռնային արագավազ գետի ջրերից: Նրա կանաչավուն դեմքը ուրախ նայում եր Բրոդարկային ու լողում մուգ կապույտ անծայրածիր անդունդի մեգի մեջ:

***

Փայտանոցից, ուր տեղի յեր ունենում գործարանային աճող բջիջի հերթական նիստը, Ադոլֆը դուրս յեկավ ճնշված տրամադրությամբ: Կեպկայի շփոցիկը քթին քաշելով, ծխախոտ վառեց ու քայլեց հուլիսյան գիշերվա տաք մթնշաղի դիրկը:

Ադոլֆն իրեն վատ զգալու բոլոր տվյալներն ուներ: Նա բանվորական յերիտասար-

դության սոցիալ-դեմոկրատական ակումբի անդամ եր և իր ազատ ժամանակի մեծ մասն անց եր կացնում ակումբում: Քայլելով փողոցով, Ադոլֆը կրկին պարզ պատկերացնում եր գործարանի մոտիկ գտնվող փոքրիկ տնակը: Պարզ տեսնում եր վոչ այնքան մեծ պարասրահը մաշված փափուկ նստարաններով և ճանճերի ապականած՝ Մարքսի նկարը, սրահի վերջում, փոքրիկ եստրադայի վերև, ուր պարահանդեսների ժամանակ հանպատրաստից կազմված ջազ-բանդը սուտ ու սխալ չարլստոն եր նվագում: Ադոլֆն ականջներում զգում եր ծնծղաների զնգոցն ու քրտնած խմբավարի՝ ցեմենտի գործարանի պահեստապետի և յեկեղեցական համայնքի անդամի աղմկալից շնչառությունը: Ադոլֆը տեսնում եր յերիտասարդ բանվորների ու բանվորուհիների զույգեր, ճշմարիտ ե, քաղցած ու հոգնած, բայց բավական հաջողությամբ նմանեցնող սալոնային ձևերին, վորոնք այնպես հափշտակիչ են ակումբի եկրանի վրա ուրբաթ որերը ցուցադրվող ամերիկյան ֆիլմերում:

Ադոլֆը հիշեց միջազգային տոնակատարումները: Այս տարի Մայիսի մեկին յերկու ժամ անընդհատ խոսեց Ազգային Լիգայի ոգտակար աշխատանքի մասին սոցիալ-դեմոկրատական արհեստակցական միությունների մարզային բյուրոյի ալխտակաբեղ անդամը: Տղաները քաղաքավարի հորանջում եյին, իսկ

տակ պարեցին ամբողջ գիշեր: Ադոլֆը հիշեց ակումբի վարչության անդամներին՝ վայելուչ, բարեպաշտ ու բարեկիրթ յերիտասարդներ, վորոնք կարողանում եյին այնքան դուրեկան ու ներդաշնակ խոսել բանվոր տղաների հետ սոցիալիստական դրախտի մասին, վորի ճանապարհն աշխատասիրության, խնայողության և անդամավճարները ճշտորեն վճարելու և կուլտուրայի միջով է անցնում: Հիշեց նաև Ադոլֆը... Սյուզիին...

— Ա՜խ, այդ Սյուզին: Յերիտասարդ, ուրախ, կոքետ և ելեգանտ: Հաշվապահ Ստեվոնսի աղջիկը. նա ակումբի կուլտուրական աշխատանքի ամենայեռանդուն ղեկավարներից մեկն, ե և անասուններին հովանավորող քաղաքային ընկերության քարտուղարը:

Յերբ Ադոլֆը, դեռ մի աշակերտ, առաջին անգամ մտավ ակումբի վողջագուրող կրակներով լուսավորված դահլիճը, նրան պատեց անսահման ուրախագին հիացմունքի զգացումը: Ինչքա՜ն ուրախ ու գեղեցիկ է ամեն ինչ: Տասնյակ յերիտասարդներ, տասնյակ աշակերտներ, բլյարդյաններ ու բանվորուհիներ պարում եյին ու ծիծաղում... Միայն հետո, մի քանի շաբաթից, վարժվելով ակումբի կյանքին, Ադոլֆը նկատեց կարկատաններ տղաների հին, բայց խնամքով հարթուկած կոստյումների վրա: Միայն հետո նա իմացավ, վոր բանվորուհի աղջիկները չա-

բաժիններով միշտ չեյին ուտում, վորպեսզի գնել կարողանան մետաքս և գուլպաներ ու հնարավորություն ունենան տատիկի հին շրջազգեստը մոդայլին սարքեցնել: Իմացավ Ադոլֆը, վոր ջահել բանվորուհիները պարահանդեսներին պճնամոլում եյին նոր տուֆլիներով, գնված հաճախ ցեխի վարպետի մոտ ուշ ժամանակ այցելության գնալու գնով: Յեվ յեղավ մի ակնթարթ, յերբ Ադոլֆի համար անտանելի դարձավ բառերի, պողաների ու հագուստների խղճուկ փայլը, վոր ծածկում եր սոված, տխրտում օրերի անխիղճ եյությունը: Բայց... ահա հենց այդ ժամանակ յեկավ Սյուզին, զվարթ, ուրախ և կուշտ: Նա վերադառնում եր կար ու ձևի խմբակի պարապմունքներից, վոր կազմակերպել եր նա բանվորուհիների համար և ուղղակի մոտեցավ Ադոլֆին:

— Ի՞նչ եք նստել այստեղ տխուր, — ճըռվողեց նա: — Ինչո՞ւ չեք պարում: Չգիտե՞ք... Յես ձեզ կսովորեցնեմ: Դուք ամբողջ շաբաթ կլինեք յերկրորդ չարլստոնի իմ պարընկերը: Բայց գիտեք, դուք շատ նման եք հանգուցյալ Ռուդոլֆ Վալենտինոյին: Միայն նա թուխ եր, իսկ դուք չեք... Դե, վեր կացեք, արջ:

Յեվ Ադոլֆը դարձավ Սյուզիի պարընկերը յերկրորդ չարլստոնում:

Յերջանկության մեգի մեջ թռած առաջին շաբաթին հաջորդեց յերկրորդը, հետո՝ յերրորդը, չորրորդը... Ակումբի վարչության

յերիտասարդները յերբեմն մասնավոր խոսակցում եյին նրա հետ, ներողամտորեն մի յերկու-յերեք նախադասություն փոխանակելով: Ադոլֆը դարձավ ակումբի ամենից գործունյա անդամը և Սյուզիի առաջին օգնականը բանվոր յերիտասարդության լուսավորության և կուլտուրական դաստիարակության գործում: Յերբ գործարանում տղաները, վորոնք չեյին ցանկանում պարել քաղցած, հայհոյում եյին ակումբը և ակումբի աշխատանքը, Ադոլֆը մեծ խանդով հակաճառում եր:

Յեվ մի գեղեցիկ գիշեր, ակումբի այլ ակտիվ անդամների հետ կատաղաբար ծեծեց մեքենայական գործարանի հինգ տղաների, վորոնք համարձակություն եյին ունեցել պարերի ժամանակ ակումբի լուսամուտի տակ բացականչել.

— Կորչե՛ն սոցիալ-դեմոկրատները, կորչեն բուրժուազիայի կամակատարները:

Այժմ ժամանակները փոխվել եյին: Նախ և առաջ Ադոլֆն այժմ գնում ե Ջիչի հետ միասին, իսկ Ջիչը ակումբի ամենակատաղի ու վոխերիմ թշնամին ե: Յերկրորդ, Սյուզիին Ադոլֆն սկսել եր արդեն ձանձրացնել և նա Ադոլֆի առաջ դրել եր մի շարք միանգամայն անիրագործելի պահանջներ: Յերրորդ, այսօրվա ժողովում Ադոլֆին առաջարկեցին ակումբում աշխատանք տանել սոցիալ-դեմո-

կրատներին մերկացնելու և այնտեղ կոմունիստական ֆրակցիա կազմակերպել, այդ նպատակով ընտրած բջիջի անդամներից մեկի հետ միասին... Այլ խոսքով ասած, դա նշանակում եր անհաշտ պայքար սկսել Սյուզիի և ակումբի վարչության անդամ յերիտասարդների դեմ:

Յերբ Ադոլֆը հասավ ակումբի դռանը, դահլիճում արդեն վորոտում եր ջազ-բանդը, և հատակին եյին քսքսվում տասնյակ զույգ բավականաչափ մաշված տուֆլիներ: Ելեկտրաղացի մի քանի բանվոր, վորոնց համար յերաժշտական գործիքների վրա նվագելը վաղեմի առանձնաշնորհում եր, բարեխղճորեն քրտնում եյին, փչելով սակսաֆոնները, իսկ բուֆետում ջահել բանվորուհիները ագահ հայացքով պանիր-հացին եյին նայում...

Սյուզին դիմավորեց Ադլոֆին շատ անհրապույր:

— Կրկին հագնված ես սատված գիտե ինչպես: Քանի անգամ ասել եմ յես քեզ, վոր անտարբեր վերաբերմունքը դեպի հագուստը, անվանարկում ե մեր ամբողջ աշխատանքը,— քմահաճորեն վրա յեր տալիս նա:— Յեվ ո՞ւր ե, ասա խնդրեմ, քո նոր կոստյումը, վորը վաղուց պատրաստվում ես գնել:

Միանգամայն անսպասելի եր համար, Ադոլֆը բարկացավ.

— Իսկ վորտեղի՞ց ճարեմ յես այդ նոր կոստյումը,—հանկարծ տաքացավ նա:—Գուցե պարոն Միլլերը կնվիրի ինձ: Ինչպե՞ս կարող եմ յես ինձ համար վորևե բան գնել, յերբ յերբեք կուշտ չեմ ուտում:

Սյուզին կարմրատակեց ու կկոցեց աչքերը:

— Ահա ինչպիսի տոնով ես սկսել ինձ հետ,—ասաց նա:—Այդպես մտածում են միայն իսկական կոմունիստները: Դու այդ չգիտե՞յիր: Ուրեմն իմացիր: Այն կոմունիստները, վորոնք հավիտենապես խոսում են ուտելիքի և ամենաստոր բաների մասին, վորոնք ատում են կուլտուրան և գեղեցկությունը... Իսկ թե դու վորքան ես ստանում, վճռականապես դա ինձ չի վերաբերում: Յեվ յեթե դու կամենում ես իմ կավալերը լինել և ուզում ես, վորպեսզի յես քեզ սիրեմ, աչքիս չերեվաս առանց նոր կոստյումի: Հասկացա՞ր:

Սյուզին շուռ յեկավ ու գնաց, ազդրերը շարժելով, իսկ Ադոլֆը մռայլ նայում եր նրա յետևից: Առաջին անգամ ակումբի պատերի մեջ յուղալի ու գռեհիկ հայհոյեց: Ապա շուռ յեկավ ու դուրս գնաց, դուռն ամուր շխկացնելով:

Գնալու տեղ չուներ: Ծայրահեղորեն ձանձրացրած փոքրիկ բունը, ուր ապրում եր Ադոլֆը յերկու այլ աշակերտների հետ, այժմ

զզվանք եր ներշնչում նրան: Քունն ել չեր տանում:

Ադոլֆը գրպանում շոշափեց մի քանի նիկելի դրամներ, վորոնք վաղվա համար եյին,—մի գավաթ դառը գարու սուրճի և կես կիլոգրամ սիմինդրի հացի արժեքը:

Գարեջրատան նկուղից դուրս յեկավ բարձրաձայն խոսակցող բանվորների մի խմբակ:

— Գրողը տանի, վաղը կարելի յե յոլա գնալ առանց նախաճաշի,—մտքում վճռեց Ադոլֆը և ուղղվեց դեպի գարեջրատուն:

***

Գավաթը լայն ե, թրաշած ու խորը: Մեջը—ջրիկ պղտոր գարեջուր՝ փրփուրի հալչող փափախը գլխին: Ամեն մի դանդաղ իջնող ու պատռվող փրփուրի բշտիկի մեջ անդրադարձած ե գաղջ ոդի թանձր շերտերի միջից խավար լուսավորող առաստաղից կախված գազի լապտերը:

Ադոլֆը ձեռք չի դիպցնում գավաթին: Նա մտախոհ ծամում ե վաղուց հանգած գլանակը և անթարթ աչքերով նայում ե լուսամուտին: Մայթի վրա, լուսամուտի գոգի մակերեսից բարձր անցնում եյին կոշիկներ: Ամեն տեսակ կոշիկներ. ծանր, գամերով պայտած, լայն, ցեխոտ անդրավարտիկով ծածկ-

ված, թեթև, մաշված բրեզենտի տուֆլիներ, տարօրինակ ֆանտաստիկ հողաթափեր, վորոնց արտաքինից վոչ մի դեպքում չեր կարելի վորոշել, ինչ եյին յեղել նրանք առաջ, լավ ժամանակ... Իսկ Ադոլֆի գլխում— դատարկություն է, մռայլ ու խոնավ դատարկություն, ինչպես նոր փորած ջրհորի ներսը:

— Այս տեղն ազա՞տ է, յերիտասարդ:

Ադոլֆը բարձրացրեց աչքերը: Նրա առաջ կանգնած եր համեստ հագնված, վտիտ, աննշան տեսքի տեր մի մարդ:

— Նստեցեք,—պատասխանեց նա:

Մարդը հանդիստ ու անբռնազբոսիկ նստեց, պատվիրեց գարեջուր և սոսիսկի: Ուտեսիլքի տաք, ախորժալի գոլորշին սուր կերպով խտղտեց Ադոլֆի քիթը, և ստամոքսը գալարվեց անախորժ ջղաձգումով: Ադոլֆը ումպ արեց գարեջուրը և ջղայնորեն հանելով՝ փաթաթեց վերջին գլանակը, արագ վառեց: Մարդը դադարեց ուտել և ուշադիր նայեց Ադոլֆին: Ապա կանչեց կեղտոտ սպասավորին, պատվիրեց նրան սոսիսկիի նոր բաժին, սեղանի վրա դրեց վեննական բարձր տեսակի ծխախոտի տուփը և բարեկամաբար թեքվեց դեպի Ադոլֆը:

— Ի՞նչ եք քթներդ կախել,— հարցրեց նա բարեսրտորեն,—գործազուրկ եք, ի՞նչ:

Ադոլֆն ուշադիր նայեց խոսակցի դեմ-

քին: Հասարակ ու աննշան մի դեմք, նման հազարավոր ուրիշ դեմքերի, բայց այդ դեմքն այնուամենայնիվ Ադոլֆին ծանոթ յերևաց:

— Դուք վորտեղացի՞ յեք,—չոր ու կասկածոտ նետեց Ադոլֆը:

Մարդը հասկացող ժպտաց:

— Յես Հերցեգովինայից եմ: Աշխատում եյի Չեխո-Սլովակիայում, հանքերում և յերեք որ առաջ յեկել եմ այստեղ: Մտածում եմ աշխատանք գտնել: Ահա և ձեր սոսիսկին յեկավ:

Սպասավորն Ադոլֆի առաջ դրեց գոլորշի արձակող տաք սոսիսկիները: Ադոլֆը խռովվեց և բողոքի նշան արեց: Սեղանի մյուս ծայրին նստած մարդը կրկին ժպտաց:

— Յես, պիտի խոստովանել, վաղուց եմ թողել ամեն տեսակի ձևականությունները,— ասաց նա պարզասիրտ:—Գրողը տանի: Մենք բոլորս բանվորներ ենք, բոլորս մնում ենք գործազուրկ և անփող, և մեր մեջ չպետք է վորևե հաշիվ լինի: Ինձ քանի անգամ ոգնել են ընկերներս իմ նեղ րոպեներին: Մեր մեջ պիտի համերաշխություն լինի: Յես այդպես եմ հասկանում:

Մարդը տրամադրում եր իրեն իր պարզությամբ և բարեսրտությամբ: Նրանք բացվեցին միմյանց: Մարդը պատմեց Ադոլֆին, ինչպես վատ է Մուրավյան կղզու լեռնագործ-

ների վիճակը և, ձայնն իջեցնելով, հաղորդեց Ադոլֆին, վոր նա Ջեխո-Սլովակիայում կոմունիստական կուսակցության բջիջի անդամ էր:

— Այստեղ ասում են՝ մեր կուսակցությունն արգելված է, թեև,— մարդը ժպտաց և արագ նայեց չորջը,— մեր տղաներն, ըստ յերևույթին, այստեղ էլ աշխատում են: Այստեղ յես միանգամայն պատահաբար մի մեծ մանածա-անկվածային գործարանի մոտ ստացա աhա այս... Գուցե տեսե՞լ եք:— Յեվ մարդը ծոցագրպանից հանեց ճմռթված, մոխրագույն թղթի ուղղանկյուն մի կտոր, ծածկված հաստ սև տառերի շարքերով:

Ադոլֆը ճանաչեց իր բջիջի վերջին թռուցիկը: Հագեցած ստամոքսի ախորժալի զգացումը, խմած գարեջուրը և վիեննական հիանալի գլանակի բարակ ծուխը Ադոլֆին խորասուզեցին բարոյական և ֆիզիկական թուլության գիրկը: Նա պատմեց իր խոսակցին վերջին գործադուլի մասին, ցուցարարներին գընդակոծելու մասին, մանածա-անկվածային գործարանի կոմունիստների մասին, վորոնք աշխատում են չափազանց ճարպիկ կերպով և բաց են թողել այդ նույն թռուցիկը, վորն այժմ պառկած է սեղանի կեղտոտ մարմարին և կողմնակի աչքերից թաքցրած է, ծածկած լինելով ափսեյով:

Մարդն ուշադիր լսում էր, խրախուսական թափահարելով գլուխը: Ելի մի կես ժա-

մից, բարեկամները գրկախառնված ու յերերուն, փողոց դուրս յեկան: Միջափողոցում մարդը թեքվեց Ադոլֆի ականջին.

— Վաղը այս նույն ժամանակ յեկեք այստեղ: Յես կկամենայի կապվել ձեր գործարանի վորոշ տղաների հետ: Դուք, իհարկե, ճանաչում եք գործարանի կոմունիստներից վորևե մեկին... Կգա՞ք ուրեմն:

— Կգամ:

Նրանք բաժանվեցին:

***

Մյուս որն առավոտյան Ադոլֆն անսպասելի կերպով կանչվեց առանձնասենյակ, Միլլերի իրեն մոտ, աշխատանքի ժամանակ:

Գործարանում փչացել էր դինամո-մեքենան և սրահները թաղված եյին կիսախավարում, իսկ փողոցում անձրև էր գալիս:

Ադոլֆը, վախեցած, շտապ մաքրեց ձեռքերը և, ճնշված, հետևեց դրասենյակից ուղարկված սուրհանդակին: Գլուխը ցավում էր յերեկվա գարեջրից: Միլլերը, փռված բազկաթոռում, սիգար էր ծխում: Շարժումով հրավիրեց Ադոլֆին նստել դիմացը և մի քանի րոպե, հմուտ գնահատողի նման, զննում էր պատանու դեմքը:

— Դեհ,— սկսեց վերջապես քարտուղարը,— մենք կամենում եյինք հայտնել ձեզ, վոր հրաժարվում ենք ձեր ծառայությունից և հանձնում ենք ձեզ վոստիկանության իրավա-

ռության, որպես վտանգավոր կոմունիստական ագիտատորի:

Միլլերը մի քանի վայրկյան հրճվելով իր բառերի առաջացրած տպավորությամբ, ապա շարունակեց.

— Մենք շատ լավ գիտենք, որ դուք, յերիտասարդ, մի քանի ձեզ նման բոլշևիկյան վարակով թունավորված պատանիների հետ գործարանում հակապետական քայքայիչ աշխատանք եք տանում: Մենք գիտենք, որ համաձայն պետական պաշտպանության օրենքի, ձեր հանցավոր գործունեյությունը պիտի պատժվի յերկարամյա թիապարտությամբ: Վստահ եմ, ձեզ հայտնի յե այդ բանը: Ճշմարիտ չե՞: Բայց... (Միլլերը բազմախորհուրդ բարձրացրեց մատը) մենք ամենևին շահագրգռված չենք այն բանում, որպեսզի խորտակենք յերիտասարդ մարդկանց կյանքն ու նրանց կարյերան: Մենք հիանալի կերպով գիտենք, որ դուք—ճակատագրական մոլորության զոհ եք և յերբեք ավելի հանցավոր չեք, քան հարյուրավոր ձեզ նմաններ: Մենք գիտենք, որ վողջ պատասխանատվությունը կրում ե սրիկաների և ավանտյուրիստների մի խմբակ, վորը ղեկավարվում ե Մոսկվայից և վորը յերկրագնդի բոլոր անկյուններում անկարգություն ե ցանում: Դուք այդ ավազակային բանդայի զոհն եք և պարտավոր եք օգնել մեզ մեր ձեռնարկությունները նրանցից ապահովելու:

Միլլերը լռեց, կարծես հնարավորություն տալու Ադոլֆին մտածելու իր ասածների մասին:

Ադոլֆը լուռ եր, բութ կերպով նայելով առաստաղին: Գլուխը ցավում եր և մարմնով հոսում եր խորունկ անտարբերության զգացողություն: Ահա հասավ վերջը. կես ժամից նա՝ Ադոլֆը նստած կլինի բանտում: Ինչ հիմարություններ ե առաջարկում նրան այդ Միլլերը: ինչ կարող ե անել մեկ մարդը կոմունիստների դեմ, վորոնց թիվը շատ ե, վորոնք կառավարում են ամբողջ մի մեծ յերկիր:

Միլլերն սկսում եր կորցնել համբերությունը:

— Ի՞նչ եք լռել: Ձեր առաջ յերկու ճանապարհ կա. կամ դուք անմիջապես կձերբակալվեք և, հավատացնում եմ ձեզ, շատ յերկար կնստեք բանտում, կամ դուք անմիջապես ընդունում եք մեր պայմանները, և այն ժամանակ ձեզ համար ապահովված ե մշտական վարձատրություն, պլյուս միանվագ հոնորարները: Ի՞նչ: Դուք թափահարո՞ւմ եք ձեր գլուխը: Դուք համաձայն չե՞ք: Ա՛... Լա՛վ... Պարո՛ն Հայառուշ:

Առանձնասենյակի դուռը բացվեց և Ադոլֆը զարմանքից քար կտրեց: Դռներում կանգնած եր վոչ այլ վոք, քան նրա յերեկվա խոսակիցը: Ժպտալով, նա աչքով արեց Ադոլֆին:

— Պարոն Հալաուշ,—դարձավ նրա կողմը Միլլերը,—բացատրեցեք խնդրեմ այս համառ պատանուն, ինչպիսի պարտավորություններ ունի նա և յեթե նա բավարար չափով սրամտություն չի հայտաբերի, կուղղեք նրան այնտեղ, ուր նրա համար տեղ է պատրաստված:

Հալաուշը դանդաղորեն նստեց բազկաթոռին, Ադոլֆի դիմաց:

— Յես շատ եմ ցավում, վոր մենք այսոր հարկադրեցինք ձեզ մի քանի անախորժ րոպեներ ապրել,—սկսեց գործակալը պարզ ու փափուկ,—բայց յես դեռ յերեկ համոզվեցի, վոր դուք միանգամայն համակրելի և ազնիվ մարդ եք:

Հալաուշը գրպանից հանեց մի կապուկ կապույտ բանկային տոմսեր, հարյուր դինարանոց և մտախոհ խփելով բունցք սեղմած ձախ ձեռքի բութ մատին, նայում եր առաստաղին, կարծես ինչ վոր մի բան կշռադատելով:

— Այստեղ ուղիղ հինգ հարյուր դինար է,—շարունակեց նա հանդարտ:—Սա ձեր առաջին միանվագ հոնորարն է, այսպես ասած, կանխավճարը: Այս գումարից դուք անմիջապես յերկու հարյուր դինար կմուծեք նոր կոստյումի, վորը ձեզ համար պարոն Միլլերը կհաջողեցնի գնել մաս-մաս վճարելով Բեզոլինչի առևտրատնից: Մեր մարդիկ պետք է վայելուչ տեսք ունենան... Ձեր պարտականությունները կայանալու յեն նրանում, վոր դուք շարունակում եք այսուհետև ել մնալ մեր գործարանի կոմունիստական բջիջում: Դուք պետք է մեզ ամենաճիշտ տեղեկություններ տաք բջիջի անձնական կազմի, նրա մեջ տեղի ունեցող փոփոխությունների, կոմունիստների գործողությունների և ծրագրերի մասին: Բայց մեզ համար այնքան կարևոր չեն մեր գործարանի կոմունիստները... Նրանք այնքան էլ վտանգավոր չեն... Վորչափ քաղաքում յեղած կոմունիստների ղեկավարները: Դուք պետք է ակտիվ աշխատեք կազմակերպության մեջ:

Հալաուշի խոսքերը խոխոջում եյին մեղմ, համոզիչ, լցնելով այն դատարկ տարածությունը, վոր զգում եր Ադոլֆն իր մեջ: Բառերը կաթկաթում եյին, բառերը կազմում եյին քմահաճ-տարորինակ նկարներ: Ահա սեղանը Եսպլանադայի դահլիճում, ամենաընտիր խորտիկներով լցված: Ահա թագավորական վոստիկանության գերբը Ադոլֆի կապիչի վրա, նման վոսկեգույն մոլյուսկի: Ահա վերջապես Ադոլֆը գրպանում զգում է դրամապանակը, ամբողջովին լցված այդպիսի կապույտ թղթադրամներով, ինչպիսին այժմ նա, Ադոլֆը ջղաձգորեն սեղմել է բռան մեջ... վոչ թե հինգհարյուր դինար, այլ հազար, հինգ, տասը հազար, ավելի, քան աշխատում է հաշվապահ Ստեվավինչը, Սյուզիի... Սյուզիի հայրը...»

Հալաուշը ցնցեց Ադոլֆի ուսն ու պարզեց չոր ափը:

— Եվ այդպես, ձեզ կարելի յէ շնորհավորել փայլուն կարյերայի սկզբնավորումով,— հարցրեց ուրախ և մտերմական:— Դուք համաձա՞յն եք, իհարկե:

Ադոլֆը տեղից վեր կացավ խռովահույզ, կարմրատակած և հուզված:

— Համաձայն եմ,— շշնջաց նա խուպոտ և արագ դուրս գնաց առանձնասենյակից:

Միլլերը և գործակալը գոհունակությամբ միմյանց նայեցին:

— Կարծեք դուք այժմ ձեզ համար վատ ոգնական չընտրեցիք, պարոն Հալաուշ,— ասաց քարտուղարը, ծխացնելով սիգարը:— Երևում է, հասկացող տղա յէ: Միայն դուք նրան չափից ավելի շատ դրամ տվեցիք: Հարկավոր չէ յերեխաներին այդչափ յերես տալ սկզբի շրջանում:

***

Երկաթգծերը բարձր զառիվայրի գագաթին ողողանջեցին:

Սեֆերը արմունկին հենված բարձրացավ ու նայեց թմբի ուղղությամբ:

— Ժամի տասնմեկի ապրանքայինը,— շշնջաց նա:

— Նշանակում է Սևը շուտով կերևա:

Հեռավոր, անորոշ թնդյունը դանդաղ մեծանում եր ու ծանրանում: Մասսիվ շոգեշարժը, ծանր շնչելով դեպի յերկինք բոց ու կայ-

ծեր, գլորվում եր յերկաթգծերով, գիշերային մթության մեջ պլպլացնելով լապտերի աչքերը ու քարշ տալով ապրանքատար վագոնների յերկար, խավարում կորչող պոչը:

Սեֆերը և Սլավկոն սողացին ավելի վեր, յերկաթգծերին մոտ: Շոգեշարժը գալիս եր նրանց վրա: Նրանց յերեսին խփեց մռնչացող հնոցի ջերմությունը, ջրի մանրիկ կաթիլներ, փափուկ շոգու և մազութի հոտը... Ապա ռիթմիկ թռչկոտալով, դղրդացին գորշ խավար վագոնների անթիվ անիվները: Գլուխների վերև ակնթարթապես սահում եյին արգելակների հրապարակներն ու միայնակ նիրհող վագոնավարների լապտերների կարմիր լույսերը: Գնացքակազմն անցավ և շոգեքարշի շչակի խուպոտ վոռնոցն արդեն հնչում եր հեռվից:

— Այնտեղ, տասնութերորդ կիլոմետրի վրա սկսվում է վայրեջքը,— շշնջաց Սեֆերը:— Մեկ ու կես ժամից կանցնի ճեպընթացը Բուդապեշտից:

Սլավկոն պառկած եր փորին՝ խոնավ խոտի վրա, բռունցքները դեմ արած աշխետ խոզանով ծածկված ծնոտին:

— Հետաքրքիր տղա յէ այդ Սևը,— ասաց նա մտախոհ:— Ես այդպիսի կոնսպիրատոր, աստված վկա, կյանքումս չեմ տեսել: Նայիր խնդրեմ.— տեսակցություն նշանակել է գիշերվա ժամը տասնմեկին յերկաթուղու թմբի մոտ, քաղաքից չորս կիլոմետրի վրա... Եվ

միշտ այնպիսի առաջարկներ կանի, վոր աչքերդ կչռես: Բայց անպայման կկատարես:

Սեֆերը նստեց և ականջ դրեց: Քամու հոսանքը խճուղուց բերեց թեթևակի ու սուր դռռոց:

— Սևն է,— շշնջաց Սեֆերը:— Սողա ներքև, խճուղի, ինչպես պայմանավորել ենք:

Խճուղում մութ ժապավենով, ցատկոտելով դերբուկներով, առաջանում եր անձև մի զանգված, իր յետևից կապտավուն ծխի մեջ ֆոսֆորային շողեր թողնելով: Սլավկոն, կանգնած առվակի ափին՝ թփուտի մեջ, թափահարեց գլուխը:

— Վոնց է վրա տալիս դևը,— փրնթփրնթաց նա:— Այսպիսի մութին և առանց լապտերի: Յես յերևի վաղուց ջարդ ու փշուր եյի յեղել մեքենայի հետ միասին:

Սևը փակեց գազն ու վերստասյունի մոտ ցած թռավ մոտոցիկլից: Շուրջը նայեց և տեսնելով թփուտում փայլատակած ելեկտրական լապտերի լույսը, շտապով մեքենան պառկեցրեց առվի մեջ, խճուղու մոտ:

— Իսկ մյուսն ո՞ւր է,— արագ հարցրեց Սևը, մթության մեջ բռնելով Սլավկոյի ձեռքը:

— Վերևում, թմբի վրա... Քիչ բարձրանանք, այնտեղ թփերն ավելի խիտ են:

— Դե, տղերք, պատմեցեք ինչ նորություններ կան ձեզանում,— հարցրեց Սևը, ծալապատիկ նստելով խոտի վրա:— Այդ ի՞նչ

պատմություն է դուրս յեկել Թուրցիկների հետ: Այդ գործը մաքուր գործ չի և դա ինձ այնքան ել դուր չի գալիս:

— Իսկապես, կասկածելի գործ է,— սկսեց Սլավկոն:— Ցերեկ վոստիկանությունը վոչ այս, վոչ այն, տանը ձերբակալում է բջիջի նոր անդամներից մեկին: Նրա մոտ գտնվում եյին նյութեր, վորոնք նա պիտի տաներ յերեկոյան և առավոտյան բերեր գործարան: Հիմար բան ստացվեց: Վոստիկանությունը բռնեց և՛ տղային, և՛ նյութերը...

Սևը գլուխը թափահարեց:

— Առանց պրովակացիայի չէ այդ բանը,— վճռեց նա:— Հետո:

— Հետո,— նոր հենց միայն, Սեֆերի հետ այստեղ գալուց առաջ, գործարանում ձերբակալվեցին Մարտեն, մեր արհմիության անդամն ու մի լավ ծերուկ: Գործարանից արձակված Ջիչը նրա մոտ է ապրում: Ապրում է կարծեմ խոտանոցում: Յեթե Մատեն քաջ լինի, Ջիչին վոչ մի վտանգ չի սպառնում: Բայց յեթե ծերուկը խոսք թոցնի, Ջիչին կարող են, թերևս, ձեռք ձգել: Իսկ դա շատ վատ կլինի, վորովհետև հիմի խառը ժամանակ է...

Սևը լուռ եր, ինչ վոր մի բան մտածելով՝ արագ բարձրացրեց գլուխը:

— Ասեցեք, տղերք, վաղը յերեկոյան ձեզ մոտ կայանալիք բանվորական մասսայական ժողովին կարո՞ղ եք յերկու մարդ թաքցնել:

Սլավկոն նայեց լուռ նստած Սեֆերի կողմը:

— Մենք այդպիսի գործեր արդեն արել ենք,— ասաց նա:— Դա շատ հենշտ է: Ժողովը տեղի չի ունենալու ծածկույթի տակ, իսկ ցանկապատի մեջ, ինչքան ասես, անցքեր կան: Մթության մեջ, բամբակի հակերի արանքում —ինքը սատանան վոտքը կկոտրի: Եվ, համենայն դեպս, բակ գալ և աննկատելի դուրս գալ այնտեղից—շատ հեշտ է...վստահելի գործ է...

Սեր գլխով հավանության նշան արեց:

— Լավ, տղերք, այդ գործը կազմակերպելու մասին մենք դեռ կխոսենք... Բջիջում, անկասկած, պրովակատոր կա, վորին հարկավոր է հայտաբերել: Այդ գործով կզբաղվեմ ինքս և վաղը կլինեմ ձեզ մոտ՝ բանվորական ժողովին... Եվ... գիտե՞ք ում եմ բերելու կոմիտեյից: Ձեր հին ծանոթին՝ Բրոդարկա Գավրիլովիչին... Այո, վաղը նա գործարանում հանդես կգա և վաղն էլ հենց մենք վորևէ բան կիմանանք պրովակատորի մասին: Իսկ այժմ պատմեցեք մանրամասն, ինչպես եք կազմակերպելու դուք այդ գործը:

Ղարադյորդևսկի փողոցի №28 տան յերրորդ հարկում յերկու մեծ կիսակլոր լուսամուտ կիսածածկ վարագույրների միջից արտացոլում են կանաչավուն լուսամփոփով ծածկված սեղանի լամպի լույսը: Մարդու սիլուետը ժամանակ-առժամանակ հանդգնում է

լամպին ու այն ժամանակ հակառակ տան սպիտակ պատի վրա ահագին ստվեր է ընկնում... Տրոտն անհամբեր քայլում էր սենյակում, քաշքշելով գծաձև խուզած բաց բեղերը: Ամեն րոպե պետք է զանգահարի սեղանի հեռախոսի սև ապարատը և լուր բերի յերեկ յերեկոյան ձեռնարկած մի քանի գործերի արդյունքների մասին:

Տրոտը քայլում էր թեթև, արագ քայլերով և յերբեմն դառնալով բարձր չկչկացող պատի ժամացույցի կողմը, սկսում էր մեղմաձայն սուլել:

— Զրզզզ...— խեղդված կոչեց սեղանի վրա սև ապարատը: Տրոտն արագորեն նստեց խորը, փափուկ բազկաթոռի մեջ, վերցրեց ապարատի փողակը, վոտքը վոտքին գցեց:

— Ա՛լլո... Յես լսում եմ... Ա՛ա՛... Այդպես... Յես արդեն կես ժամ է սպասում եյի այդ տեղեկությունների... Այդպես, այդպես... հիանա՛լի: Ընդհանրապես, պարոն Հալաուշ, յես յերբեք չեյի կասկածում ձեր ընդունակությունների... Այո, Միլլե՞րն էլ լավ եր... Այդ հին սրիկան մեծ փորձառություն ունի... Բռնեցիք նրան քնած ժամանա՞կ... Հա՛-հա՛-հա՛... հիանալի... Իսկ վորտե՞ղ է գտնվում նա այժմ, այս րոպեյին... Զորրորդ բաժանմունքու՞մ... Շատ լավ... Ի՞նչ... Հայհոյում է ու փորձում է կռվե՞լ... Նրանց պետք է նախազգուշացնել այնտեղ, վոր

դա վտանգավոր բանդիտ է և կարող է ամեն միջոց օգտագործել փախչելու... Թող անմիջապես չղթայեն... Այո՛... Իսկ այն ծերունին, Մատե՞ յե, ի՞նչ է, նրան արդեն բա՞ց եք թողել... Նշանակում է քեռին, այնուամենայնիվ, կատարեց ազգասիրական պարտքը... Ի՞նչ... Չե՛մ լսում... Հեռացավ շատ անբավակա՞ն.— փող ե՞լ չուզեց վերցնել... Ավելի լավ... Այո՛: Ավելի լավ մեզ համար... Վոչինչ, սկզբում միշտ այդպես է լինում... Հիշու՞մ ես Ադոլֆն ինչ դրության մեջ էր: Մի քանի օր մահն էր գալիս այնպիսի տեսքով, կարծես գերեզմանից դուրս յեկած լիներ: Ի դեպ, ուր է Ադոլֆն այժմ...Քեզ մո՞տ...Հիանալի: Դու, իհարկե, պատմեցիր նրան վաղվա քննության մասին... Ադոլֆն պետք է գործը լավ կազմակերպի... Ժողովը միտք չունի ցրել... Ցրելու դեպքում գլխավորներն ամենից հեշտ կարող են փախչել... Շրջապատել գործարանը և ընդհանուր խուզարկությո՞ւն կատարել... Այդ միտքը վոչ մի բանի նման չի, պարոն Հալաուշ... Ցես այդ մասին արդեն մտածել եմ: Նախ և առաջ ամբողջ գործարանը բավական թվով ժանդարմերիայով շրջապատել հնարավոր չէ, յերկրորդ, գործարանում հազար մարդու մեջ մարդու այնպես կարելի յե թաքցնել, վոր սատանան ինքը չի գտնի: Դե, իհարկե... Նրանց պետք է վորսալ ճանապարհին և յեթե պաշտպանվեն, կարելի յե

ունակ անել փոքրիկ, սակայն աղմկոտ սկանդալով... Լսեցեք, պարոն Հալաուշ, յես լսել եմ, վոր այդ անիծյալ Սևը բուն է դրել մեր ռայոնում... Այո, այո... Ցես էլ վախենում եմ, վոր նա մեր ռեպուտացիան ավելի փչացնի, քան մեր նորաթուխ կոլլեգաներինը... Այո, վտանգավոր մարդ է, գրողը տանի... Համենայն դեպս, փող... Դե, իհարկե, փող չպետք է խնայել... լա՛վ... Մինչև վաղը... Խոսափողը տվեք Ադոլֆին:

Շրոտը շունչ առավ: Մի ձեռքով բերանը դրեց ծխախոտը ու կպցրեց ինքնավառով ու ժպտաց:

— Բարև, անվե՛հեր պատանի: Ցես հիացած եմ քո յեռանդուն գործունեյությունից: Ինչպե՞ս է ապրում մեր դյութիչ Սյուզեն Սյուդեսան: Վո՛րտեղից գիտե՞ս... Հե՛, հե՞, հե՛... Ցես սիրելի՛ս, ամեն ինչ գիտեմ...Դե, լավ: Կատակ չէ: Հաջողություն է սպասվում քեզ... Լսում ես... սպասվում է քեզ հազար դինար ամսական, չհաշված միանվագ հոնորարը... Տեսնո՞ւմ ես, ինչպես արագ առաջադիմում ես... Դե, Դե... կապրենք, կտեսնենք... Բարի գիշեր... Աստված հաջողություն տա...

Շրոտը խոսափողը վայր դրեց ու վեր կացավ: Սենյակում լողում էր թանկագին ծխախոտի բույրը: Շրոտը մոտեցավ լուսամուտին, բարձրացրեց վարագույրն ու ժպտաց լուսնի գունատ շողերին:

***

Ամեն ինչ սկսվեց այն մոմենտին, յերբ յերիտասարդ ցեխավարպետը հաշվառքի սենյակով նյութեղենի պահեստ գալիս, առաջինը տեսավ նուրբ յերկաթալարի ցանցի յետևն աչքի ընկնող տեղում կախած հրամանը:

Ցեխավարպետը բաժանմունք վերադարձավ ամպից ել մռայլ: Յեվ կես ժամից գործարանում, ինչպես կեղտոտ անձրևաջրի հեղեղ, տարածվեց նոր լուրը՝

Վո՛չ մի դինար:

Վոչ մի դինար չի ավելանում ջուլհակուհիների, մանածագործների, մյուլլչիկների, տպագրիչների աշխատավարձը, վորոնք պետք ե վաղվանից սկսած, աշխատեն ուղիղ հիսուն տոկոսով լարված, քան մինչև այսօր: Պարզ ու վորոշ՝ չորսից վեց վորոշումը մռայլ մեկնաբանվում եր·

— Վորոշել են մաշկե՛լ մեզ:

Մարդիկ, կարծես նախապես պայմանավորվելով, չեյին խոսում միմյանց հետ: Առաջին պահում մեկը պարփակվեց ինքն իրան՝ մեջ: Յուրաքանչյուրը մտքով սլացավ աղմկոտ, մոլեգնոտ գործարանից իր բնական նկուղը, չերդակը... Վերջապես կատարվեց այն, վորի մասին վաղուց խոսում եյին միության լիդերները, նախազգուշացնում եյին թռուցիկների մոխրագույն փոքրիկ թերթիկները: Ռա-ցիո-նա-լա ցու՛մ: Յեթե առաջ հարկավոր եր վազտալ, ապա այժմ պետք ե թռչել: Յեթե առաջ տասնմեկ ժամվա ընթացքում հարկ եր լինում ուժերի ահռելի լարումով աշխատել չորս մեքենայի վրա, ապա այժմ լարվածությունը պիտի հասնի մեկ ու կես անգամ: Յեթե առաջ աշխատանքից հետո ցանվում եյին բոլոր վոսկորները, աշխարհը դառնում եր զզվելի և գլուխը լցվում· եր բութ անտարբերությամբ, ապա այս անգամ կյանքի տևողությունը և աշխատունակությունը անվաղն կիսվելու յե մեքենաների թափով: պետք ե ավելի ուտել: Պետք ե խլել պատառն ընտանիքի բերանից, այլապես օրգանիզմը չի դիմանա: Յեվ այդ դեպքում քաղցելու յեն բոլորը: Յեթե հնարավոր եր յերեխաների համար գնել մի լիտր կաթ, ապա այժմ պիտի բավականանալ կես լիտրով: Կոֆեն պիտի յեփել բոլորովին առանց կաթի: Միս կինն ու յերեխաները այլևս չեն ստանա բոլորովին. միայն հարկավոր ե աշխատավորներին, վորպեսզի ուժերը չթուլանան: Հարկավոր ե շատ ուտել:

Ճաշի ընդմիջումին հաշվառքի սենյակում նուրբ յերկաթալարի յետև յեղած հասարակ սպիտակ թերթի շուրջ յեռում, փրփրում ու գահավիժում եր մարդկային մասսան:

— Կրկին նո՛ր ծաղր:

— Յե՞րբ պիտի փթեն դրանք վերջիվերջո:

— Արյունարբունե՛ր:

— Խայտառակությու՛ն ե:

— Խոզությու՛ն ե:

— Ցես առանց այն էլ յերկրորդ աստիճանի թոքախտ ունեմ:

Սլավկոյի, Սեֆերի և արհմիութենական լիազորների չուրջը խմբվել եյին մարդիկ: Այդպես բնազդաբար վտանգի րոպեներին համախմբվում է մասսան նրանց չուրջը, ով իրեն չի կորցնում, ով մնում է հաստատուն և ընդունակություն ունի պայծառ մտածելու: Սլավկոն նայում եր բանվորների հուզված դեմքերին և թեթևակի քմծիծաղում: Ուղիղ նրա դիմաց կանգնած եր նիհար ջուլհակ Պավլեն ու ծեծում եր իր կուրծքը:

— Հասկանու՞մ ես դու, տղա, յես թոքախտ ունեմ,— կոչում եր նա,— գործարանը լափել է իմ թոքերը: Իմ յերեխաները ձմեռը դպրոց կգնան վոտաբոբիկ: Ինչի՞ յե նման սա, հարցնում եմ քեզ... Ի՞նչ է ուզում ինձանից այդ Միլլերը:

Սլավկոն ձեռքերը կրծքին խաչած՝ ժպտաց ու աչքով արավ:

— Ինչպես,—սկսեց նա, հանկարծ լրջանալով,— տեսեք խնդրեմ, այս ի՞նչ է պատահել մեր սիրելի, բարի Միլլերի հետ: Միշտ նա այնպես սիրալիր եր, այնպես լավ, այնպես հոգատար եր մեր մասին, առանձնապես քո մասին, Պավլե...

Հիշու՞մ ես, դու դեռ ասում եյիր, վոր չես կամենում խառնվել քաղաքականության և պարոն Միլլերին անախորժություն պատճառել, վորովհետև նա աշխատանք է տալիս և

դու նրա հացն ես ուտում... Այս ի՞նչ է հապա պատահել պարոն Միլլերին: Ինչո՞ւ. հանկարծ նա այդպես վատ վարվեց քեզ հետ, ամենից բարեբարո և հնազանդ բանվորի հետ: Ա՜յ, ա՜յ... Աստվա՛ծ վկա, լավ չի, պարոն Միլլեր:

Բանվորները մռայլ լռում եյին ծաղրական ու թունալից խոսքերը: Պավլեն կախ եր գցել գլուխը: Նա վոչինչ չուներ ասելու:

Սլավկոն հանկարծ ուղղվեց ու մռայլվեց:

— Պատին կախած այդ հրամանին մենք արժանի յենք,— բացականչեց նա:— Հիմար կլինեյին տերերը, յեթե նրանք մեզ չսեղմեյին: Գտնել այնպիսի գործարանի կառավարիչ, վորն իր բանվորներին չկամենա քամել, նույնքան դժվար է, ինչպես դժվար է գտնել կանանչ գույնի կատու կամ կուշտ տեկստիլ բանվոր: Յեվ յես զարմանում եմ, ինչու պարոն Միլլերը մեզ չի փոխադրել վեցի փոխարեն ութի... Մենք բոլորովին կորցրել ենք դիմադրելու ընդունակությունը: Մեր ընկերներին գնդակահարեցին ճտերի նման, իսկ մենք մյուս որը ևեթ աշխատանքի կանգնեցինք: Միլլերի համար մենք վոչխարի հոտ ենք, վորի հետ նա կարող է վարվել այնպես, ինչպես կամենա... Մենք զիջել ենք նրան վոչ թե մեկ անգամ...Յեվ վորչափ շատ ենք զիջում մենք նրան, այնչափ ավելի յե համոզվում նա մեր թուլության և այնչափ ամուր կնստի նա մեր

վզին: Ու նա այնքան կհասցնի մեր վզակոթին, քանի մենք ամուր, կազմակերպված հարվածով չենք ապացուցի նրան, որ մենք պայքարելու ընդունակ մարդիկ ենք:

Սլավկոն լռեց ու աչք ածեց սենյակում: Շարունակ մտնում էին նոր ու նոր բանվորներ: Մարդկային մասսան ավելի ու ավելի թանձրանում էր: Մարդիկ խմբվում էին առաջադեմ բանվորների շուրջը, որոնք ագիտացիա էին անում անհապաղ դիմադրություն ցույց տալ ձեռնարկատերերին... Ահա Սեֆերը հանդարտ ու համոզիչ ինչ որ բացատրում է միքանի պառավ ջուլհակուհիների, խծուծով մաքրելով քրտնած դեմքը: Ահա Անդրան ճառում է, կանգնած լուսամուտի դռին: Ցենթավարպետ Ֆրիցը դրկված կանգնած է իր բարեկամների հետ և ինչ որ խորհրդակցում է կիսաձայն... Ողբալի և անմիտ տեսք ունեն սոցիալ-դեմոկրատական սինդիկատի արհմիութենական լիդերները: Սեղմված մարդկային բոցավառ գրգռվածության խիտ օղակում, նրանք շփոթված ու անօգնական շուրջներն են նայում, ինչ որ մնթինթում են անհասկանալի և աշխատում են հնարավորին չափ շուտ ծլկել:

Գրասենյակում ամեն ինչ ընթանում էր սովորական կարգով: Չխչխկում են գրամեքենաները: Հաշվապահները քթերը թաղել են հսկայական մայր մատյանների թերթերի մեջ, կանտորականների մոնումենտալ բարձրություն-

ների վրա: Առևտրական գործակալները կամացուկ խոսակցում են, բուտերբրոտ ծամելով ու գրի առնելով ինչ որ իրենց ծոցատետրերում: Միլլերն իր առանձնասենյակում նստած՝ հագել է ականջներին ռադիո հաղորդիչի փողակները, լսում է հաշվեսենյակից հնչող ձայների քաոսն ու ժպտում է, նայելով Հալաուշին:

— Ոչինչ, սատանան տանի, թող գոռգոռան: Աշխատանքից հետո միտինգում մենք կորսանք հրահրողներին, և նրանք շատ շուտ կխաղաղվեն:

Ցերեկոյան շչակից դեռ յերկու ժամ առաջ գործարանի արհմիութենական կազմակերպությունների ղեկավարները վերջնականապես խուսափեցին վիճաբանությունից և հայհոյանքից: Սոցիալ-դեմոկրատական միության լիդերներն առավելապես համոզում էին և ապացուցում. գործարանի անկախ արհմիության ներկայացուցիչները և կոմունիստներն առավելապես լսում էին ապա կրկնում էին միևնույնը.

— Դուք, պարոնայք (այդ «պարոնայք»-ն առավել վիրավորական էր հնչում) — հին դավաճաններ եք ու տերերի արբանյակները: Մենք բողոք-գործադուլի կոչ կանենք մեր և ձեր բանվորներին: Մենք միանման պահանջներ կառաջադրենք և՛ ամստերդամցիների, և՛ անկախների համար: Միասնական ճակատ վարից.. Իսկ դուք կորեք գրողի ծոցը ձեր յեր-

կյուղով ու նախազգուշացումով, յեթե չեք կամենում, վորպեսզի միտինգում բանվորները թքեն ձեր դեմքին:

Քաղաքի վրա կախվեցին շչակների վոռնոցները, ազդարարելով աշխատանքային որվա վախճանը:

Սլավկոն մի րոպե նայեց իր մոտով վազող բանվորների և բանվորուհիների դեմքերին, ապա բռնեց զսպված, կարմրատակած Ադոլֆի թևը:

— Անցիր այնտեղ, անկյուն, — ասաց Սլավկոն:— Դու լա՞վ ես հիշում, ինչ պիտի անես այսոր յերեկոյան... Հապա, կրկնիր առաջադրությունը:

Ադոլֆը մոտեցավ Սլավկոյին և արագ շշնջաց.

— Դուրս գալ ցանկապատի յերկրորդ բացվածք հումույթի պահեստի մոտ: Գնալ քարի սարայի յերկարությամբ և փողոցի անկյունում հանդիպել բանվորուհուն, վորը կանգնած կլինի լապտերի տակ: Ասել նրան՝ «Բարի յերեկո, քույրիկ»:

— «Խեղճ քույրիկ», — ուղղեց Սլավկոն:

— «Բարի յերեկո, խեղճ քույրիկ», — առանց կարկամելու շարունակեց Ադոլֆը, — և յերբ նա կպատասխանի՝ «Գնանք զբոսնելու Թանկագինս», հարկավոր է վերցնել նրա թևն ու անցկացնելով ցանկապատի յերկրորդ անցքով, բերել Անդրեյի մոտ, վորը կանգնած կլինի հին շոգեմեքենայի մոտ:

Սլավկոն գոհացած գլխով արեց:

— Լավ, — ասաց նա, — այդպես .... հիմա գնա: Չմոռանաս հիշեցնել տղաներին, վորպեսզի գործարանի ցանկապատի լույսը հանեն:

Սլավկոն, նայելով առաջ վազող Ադոլֆի յետեվից, ծխախոտ վառեց և առանց շտապելու, գնաց կրկին անգամ ստուգելու ամբողջ գործի պատրաստությունը:

Տաս րոպեյից փոքրիկ բակը՝ գործարանային ժողովների ու միտինգների սովորական վայրը՝ լցվեց անհամբեր, հուզվող մարդկանցով: Դեպի տանիք տանող հրդեհաշեջ յերկաթյա սանդուխքի վրա տեղավորվեց ժողովի նախագահը, իսկ նրանցից ցած, շուռ տված արկղի վրա տեղ պատրաստեց ճառախոսի համար:

Առաջինը պիտի արկղի վրա բարձրանար մի գերամարմին, անփույթ հագնված տղամարդ — տեկստիլ բանվորների ռեֆորմիստական միության նախագահը: Նախագահը մեկ ամբողջ ժամ բանակցել եր պարոն Միլլերի հետ, համոզելով նրան ավելացնել ութ տոկոսով այն կատեգորիաների բանվորների աշխատավարձը, վորոնք փոխադրվում են վեց ստանոկի: Պարոն Միլլերը չեր համաձայնում: Պարոն Միլլերը դժվարությամբ, յերկար համոզելուց և վիճաբանություններից հետո, վորոշեց վերջապես ավելացնել աշխատավարձը յերեք տոկոսով և, հայտարարելով այդ մասին,

հասկացրեց նախագահին, որ նա անմիջապես պիտի կորչի:

Նախագահին ուրիշ ոչինչ չէր մնում անել, բայց յեթե բավականանալ ստացած վողորմությամբ: Յեվ ահա այժմ նա հին, փորձառու ճառախոսի տեսքով բարձրացավ արկղի վրա, ձեռքի յեռանդագին շարժումով հրավիրելով հավաքվածներին լռություն պահպանել:

— Թանկագի՛ն ընկերներ, բանվորնե՛ր և բանվորուհիներ: Ինձ մասամբ զարմացնում է ձեր չափազանց հուզված վիճակը: Նայելով ձեր դեմքին, կարելի յե կարծել, որ ձեռնարկատերերը համենայն դեպս կիսով չափ կրճատել են ձեր աշխատավարձը կամ բոլորովին արձակել են ձեզ գործարանից ... Կամ թե պետությունը գտնվում է կոմունիստական հեղաշրջման վտանգի տակ:

Նախագահը, ըստ յերևույթին, վորոշել եր համոզիչ և տպավորիչ ճառ արտասանել: Անբավական բացականչությունների տակ նա առնվազն տասը րոպե պատմում եր մարդկությունը դեպի անկում մղող կոմունիստական վտանգի մասին:

Արեգակը նստեց և բակում, սյուների գըլուխներին լուսավորվեցին լապտերները:

Բանվորները կորցրեցին իրենց համբերությունը: Սլավկոն, ձեռքը խողովակաձեվ բերանին դրած, բարձրացավ մատների վրա:

— Ի՞նչ ես կոմունիստների մասին յեր-

գում... Դու ավելի լավ է վեց ստանոկների մասին պատմիր:

Յեվ կարծես պայմանավորված ազդանշանով, միտինգի զանազան կողմերից տասնյակ բարձր ձայներ աղաղակեցին.

— Կարիք չկա՛ թող փչելու:

— Լսե՛լ ենք մենք այդ յերգերը:

— Ռացիոնալացումը դատարկ բան է ձեր կարծիքով:

Նախագահը, բարկացած, շփոթված, խեցգետնի նման կարմրած, թափահարում եր զույգ ձեռքերով, աշխատելով կարգը վերահաստատել:

— Սպասեցե՛ք, ընկերներ, — բացականչում եր նա:— Դուք դեռ չեք լսել ամենագըլխավորը: Հարկավոր է լսել մինչև վերջ, ապա կարծիք հայտնել: Դիմում եմ ձեր գիտակցության: Լռեցրեք աղմկարարներին, վորոնք կազմալուծում են միտինգը:

Բայց յերեք տոկոս հավելումի հայտարարությունը (տեկստիլ բանվորների միության նախագահի գլխավոր միջոցը) բողոքի բացականչությունների իսկական փոթորիկ առաջացրեց: Այս անգամ աղաղակում եյին բոլորը:

— Դա ծա՛ղր է:

— Աշխատանքն ավելանում է հիսուն տոկոս, իսկ աշխատավարձը՝ յերեք տոկոս: Վատ հարաբերություն չի:

— Ավել չկարողացա՞ք ստանալ, ծախու չարչիներ։

— Ինքդ խժռիր յերեք տոկոսը։

Սլավկոն իրեն զգում եր ուղղակի հարազատ տարերքում։ Նա պտույտ–պտույտ եր անում, աչքով եր անում, արմունկներով հրում եր հարեվաններին։ Բազմության մեջ դես ու դեն եր վազվզում և յերեվալով մեկ այստեղ, մեկ այնտեղ, հնչեղ բղավում եր, ձեռքերը փողաձեվ բերանին դրած։

— Կոր–չե՛ն սո–ցիալ դե–մո–կրատ–նե–րը։ Կոր–չե՛ն չար–չի–նե–րը։ Կոր–չեն գոր–ծա–րա–նա–տե–րե–րի ար–բան–յակ–նե–րը։

Անհնարին եր փոթորկած մարդկանց զսպել։ Սոցիալ–դեմոկրատ արհմիութենականները, խմբված նախագահի շուրջը, աղաղակում ու վոտքերով դոփում եյին, հայտարարելով միտինգն արաձկված։ Յետին շարքերում մեկը փորձում եր մարսելյոզ յերգել։ Մյուսներն ընդհատում եյին, «Ինտերնացիոնալ սկսելով։ Ձայների լեռն ուռչում եր, բացականչությունները միմյանց վրա եյին կուտակվում, ինչպես գրանիտի կոշտեր։ Սլավկոն տեսավ իր առաջ Ադոլֆի կարմրատակած դեմքը։

— Վորտե՞ղ ես կորել։ Բերեցի՞ր։

— Կա՛։

Սլավկոն մեծ դժվարությամբ կարողացավ բազմությունը ճեղքել և հասնել շուռ տված արկղին։ Նա առանց այլևայլության

ինքնաստեղծ տրիբունայի վրայից ցած քաշեց ամստերդամյան արհմիության քաղաքային բյուրոյի անդամներից մեկի վոտքից և, վրա տվող սոցիալ–դեմոկրատներից պաշտպանվելով ծանր կոշիկի հարվածներով, բարձրացավ յերկաթյա սանդուղքի աստիճանների վրա։ Դեմքը դարձրեց բազմության կողմն ու թափահարեց գլխարկը։

— Ընկերներ, լռություն։ Ըն–կեր–ներ...

Մարդկային գլուխների ծովի վերև նոր դեմքի յերեվալն ազդեց բանվորների վրա։

— Վորտե՞ղ ե բարձրացել։ Համարյա կըտուրը։

Դա Սլավկո Բատինիչն ե, մեխանիկականից։

— Լսենք, ինչ կասի նա։

— Սուս արեք. դեվեր։ Սուս, ասում են ձեզ, — հարձակվեցին մարդիկ սանձերը բաց թողած հարեվանների վրա։

Աստիճանաբար ձայները լռեցին։ Համեմատական լռություն տիրեց։

— Ընկերներ, — սկսեց Սլավկոն, — այն, ինչ վոր այստեղ պատմեց մեզ արհմիութենական բյուրոյի չինովնիկը, մեզանից վոչ վոքի համար հետաքրքիր չի։ Խղճուկ յերեք տոկոսը, վոր նա աղերսել ե Մյուլլերից — դա չնչին վողորմություն ե աղայի սեղանից շպրտված։ Յես կարծում եմ, վոր յեթե մենք աշխատում ենք, ապա պիտի ստանանք վոչ թե վողորմություն, աղերսված սոցիալ–դեմոկրատների

կողմից գործարանատերերից... Մենք պետք է ստանանք այն, ինչ վոր մեզ հասնում է իսկապես, այն, ինչ մենք աշխատել ենք: Ճի՞շտ եմ ասում յես:

Սլավկոն մի վայրկյան լռեց, շունչ առնելով ու դիտելով բազմությունը: Այժմ մարդկանց խոշոր մեծամասնության դեմքերը դարձել եյին իր կողմը: Մասսան սեղմվեց ավելի խիտ, ավելի միաձույլ, և տասնյակ բերաններից դուրս թռավ հավանության արդեն միահամուռ բացականչությունը:

— Ճիշտ է:

Սլավկոն խփեց ծնկան:

«Կես առ կես» — անցավ նրա ուղեղում: Յեվ արդեն հանդիստ ու վստահ շարունակեց:

— Մենք այժմ պիտի վորոշում հանենք, վորով ցույց կտանք, վոր մենք վոչխարներ հո չենք և կարող ենք պաշտպանել մեզ: Մենք պետք է ինքներս, առանց դայակների ու միջնորդների, այս րոպեյիս պատասխան տանք պարոն Միլլերին և նրա բոլոր բարեկամներին, սկսած ամստերդամյան նախագահից և վերջացրած պարոն Տրոտով: Յես առաջարկում եմ, վորպեսզի այժմ ընկեր բանվորներն արտահայտվեն և իրենց առաջարկներն անեն:

Մի ակնթարթ լռություն տիրեց: Յեվ հանկարծ վորտեղից-վոր բազմության վրա կախվեց զնգուն, բարձր մի ձայն:

— Խոսք եմ խնդրում:

Սլավկոն ցատկեց արկղի վրա և նախա-

զգուշական անհանգիստ նայեց չորս բոլորքը: Արկղի շուրջ համախմբվել եյին ամենից վստահելի տղաների դեմքերը, պատրաստ առաջին իսկ ազդանշանով սկսել քաշքշուք, չփոթ առաջացնելու: Սլավկոն բարձրացրեց ձեռքը:

— Հանգստացեք, ընկերներ: Խոսքը պատկանում է... ինչպե՞ս է ձեր անունը, ընկեր... Ջեմ լսում... Մի խոսքով, մեր գործարանի բանվորուհին:

Յեվ նա ձեռքը պարզեց յերիտասարդ բանվորուհուն, վորը թեթևորեն թռավ արկղի վրա: Նույն ակնթարթին սանդուխքի մոտ գործարանային կորպուսի վրայի ելեկտրական լամպը հանգավ և բակի միջին մասը թաղվեց կիսախավարում, մութով պատելով արկղն ու արկղի մոտ ու արկղի վրա բոլոր կանգնածներին:

— Սուս, — գոչեց Սլավկոն: — Մի հուզվեք: Լամպոչկան այրվեց: Մեզ համար կարեվորը նայելը չե, այլ լսելը:

Վաղուց «Յադրան» գործարանի բանվորներն այդպիսի ուշադրությամբ չեյին լսել միտինգում հանդես յեկող հռետորների խոսքերը: Թերևս այդպիսի լարված ուշադրություն չեր յեղել սկսած այն մոմենտից, յերբ վերջին գործադուլի նախորյակին, այս իսկ բակում բանվորներին դիմեց Ստեփան Վագները, վորը բաժանված է այժմ իր ընկերներից վոստիկանական կենտրոնական բանտի հաստ պատերով:

Արկղի վրայից խոսող աղջիկը նման էր ամպրոպի: Նա ծաղրում էր սոցիալ-դեմոկրատներին: Ջախջախում էր նրանց դավաճանությունը, հնարում էր նրանց համար ամենաանսպասելի, ամենից մահացու մակդիրներ: Նա խոսում էր գործարանների բանվորների դրության մասին: Նրա ձայնում հնչում էր խորը, անկեղծ տառապանք: Նա խանդավառ կոչ էր անում պայքարի, և նրա խոսքերը դղրդում էյին ինչպես շանթի ճայթյուններ, մարդկանց մեջ ցանկություն առաջացնելով անմիջապես կռվի շտապելու: Նրա ու մասսայի մեջ հաստատվեց անտեսանելի կոնտակտ: Հռետորը և ունկնդիրները վարակում էյին միմյանց ատելությամբ և պայքարի վոգևորությամբ:

Սլավոկն նստեց արկղի կափարիչի վրա, գրկեց մոտը կանգնած Սեֆերի պարանոցն ու թեթևակի ծպպացրեց լեզվով, — բարձրագույն գոհունակության նշան:

— Թող ուրեմն վոչ վոք ձեզանից, սկսած տյառրվանից, այլևս ձեռք չդիպցնի մեքենային, քանի չեն բավարարվել անկախ արհմիությունների կողմից մեր գործարանի բոլոր բանվորների անունից առաջադրած պահանջները: Թող մեր շարքերում չլինի վո՛չ մի վախկոտ, վո՛չ մի տատանվող:

Սեֆերն հանկարծ բռունցքով ուժեղ հրեց Սլավկոյի կողքին ու, չորս կողմը նայելով, չարագուշակ աչքով արեց: Կիսախավարի մեջ

արկղին էյին մոտենում ամեն կողմից սոցիալ-դեմոկրատ ակտիվիստները, հետներն ունենալով քանի մոտ, գործարանում միանգամայն անծանոթ անձնավորություններ: Պրոլետարական ինքնապաշտպանության ջոկատի յերիտասարդ տղաներն աշխատում էյին ավելի խիտ ողակել արկղը մարմիններով, մոտ չթողնելով թշնամիներին: Այստեղ ու այնտեղ հակառակորդների մեջ արդեն տեղի յեր ունենում կատաղի, լուռ պայքար: Մարդիկ խավարի մեջ բաղխվում էյին միմյանց լուռ, ծանր շրնչելով: Սլավկոն արագ թեքվեց դեպի Սեֆերը:

— Տո՛ւր, — շշնջաց նա, — հանգցնել լույսն ամբողջ գծի վրա, գոնե տասնհինգ րոպե:

Արկղի մոտ արդեն բորբոքվել էր իսկական տուր ու դմփոց: Սոցիալ-դեմոկրատները անխնա աշխատելով բռունցքներով, բղավում էյին կոկորդով մեկ:

— Կորչե՛ն կոմունիստական բանդաները:

— Կորչե՛ն Մոսկովյան ագենտները:

— Կորչե՛ն անարխիստները:

— Կորչե՛ն խաբեբաները:

— Կեցցե՛ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը:

Բակը և հրջապատում գտնված բոլոր շենքերը թաղվեցին խավարի մեջ: Բացականչությունները պոռթկում էյին, փշրվում, ճարճատում էյին վոսկորները, շուրթերից դուրս էր փչում ծանր, տաք շնչառություն: Տուր ու

դմփոցին մասնակցություն չունեցող կանայք ճչում էին և այս ու այն կողմ էին ընկնում, աշխատելով թաքստոց գտնել: Յեվ ձայների քաոսի վրա, տուր ու դմփոցի մեջ վորոտաց յերիտասարդ, զիլ մի ձայն:

— Կեցցե՛ կոմունիստական կուսակցությունը:

— Կեցցե՛ խորհրդային բոլշևիկյան ֆեդերացիան:

— Կեցցե՛ պրոլետարական հեղափոխությունը:

Յերիտասարդ ձայները խավարի միջից ձայնակցում էին բորբոքող յերգակցությամբ:

— Կեցցե՛ հեղափոխությունը:

— Կեցցե՛...

Ուր վոր հարեվան փողոցներում արդեն ճչում էին վոստիկանական սուլիչները: Ասֆալտով սլանում էին ապրանքատարներ՝ լիքը զինված մարդկանցով:

Ադոլֆը ամբարից ցատկեց մացառուտը, նայեց մայթի ուղղությամբ, միքանի վայրկյան սևեռուն նայեց խավարի մեջ, ապա թափով վազ տվեց դեպի հեռախոս-ավտոմատի դռնիկը:

***

Լուսինն արդեն ծածկվել էր ամպերի տակ, և գործարանի յետև, բլուրի վրա տարածված հին պուրակը լցվել էր յերեկոյան սովորական ձայներով: Տերևների մեջ յերգում էին սո-

խակները: Հարբած յերիտասարդների խմբեր ծիծաղով ու կատակներով զբոսնում էին ծառուղիներով, առանձնացած զույգերին անբավականություն պատճառելով: Հանդարտ թավալում էր իր ջրերը Սավան բլուրի փեշերին:

Պուրակը փոխվում էր անտառի: Գլխավոր դարպասից դեպի արևմուտք, մի քանի հարյուր մետր մաքրած ու ավազածածկ ծառուղիները տեղի էին տալիս խոտածածկ շավիղներին: Հավասար խուզած սիզախոտը փոխվում էր վայրի ծաղիկներով ծածկված անտառային թավուտի:

«Սևը» քայլում էր ծառուղու կողքով արագ ու թեթև, աշխատելով ծառերի ստվերներում մնալ: Պուրակի բարեկարգ մասը լուսավորող լապտերները հեռու էին մնացել արդեն: Սովոր վոտքը մթության մեջ հեշտությամբ կարողանում էր շոշափել նեղ կածանի տրորված խոտը: Հանկարծ Սևը կանգ առավ ու մռայլվեց: Մի քանի քայլ իրենից նա լսեց հրացանների փամփուշտանոցների խուլ չրխչրխկոց: Չոր խռիվը վոտքերի տակ այստեղ ու այնտեղ ճթճթում էր ու կոտրատվում: Խուլ, ընդհատ ձայնը հրամաններ էր տալիս: Սևը հասկացավ. — անտառը և պուրակը շրջափակել են ժանդարմները: Ըստ յերևույթին, պատրաստվում էր հերթական գիշերային շուրջկալ:

Սևի ծրագրում բոլորովին չէր մտնում հանդիպել վոստիկանական դեդեկտիվների,

վորոնք մանրազնին կերպով ստուգման են յենթարկում պուրակում գտնվող բոլոր մարդկանց փաստաթղթերը։ Նախ և առաջ Մակեդոնացին չուներ փաստաթղթեր, յերկրորդ, կարող եր այնպիսի գործակալի հանդիպել, վորը ճանաչում եր իրեն։ Վերջապես յերրորդ, Սևն իր մոտ ուներ այնպիսի իրեր, վորոնք խուզարկության ժամանակ հայտաբերվելու դեպքում միանգամայն ապահովում եյին նրա ձերբակալությունը։

Սևը մտքում կազմեց մի քանի ծրագրեր ու դեն նետեց։

Ծառ բարձրանալ չի կարելի (նախ, յերկար պատմություն է, յերկրորդ՝ մոտակայքում ցածր ճյուղեր ունեցող ծառ չկա)։

Խոտերի մեջ թագնվելը միտք չունի։ Պուրակը հրջափակելով, ժանդարմները ավելի ու ավելի խիտ պիտի ողակեն կենտրոնական մասը։ Յեվ առաջանալով դեպի կենտրոն, ամեն մի ժանդարմ ելեկտրական լապտերով պիտի լուսավորի իր ճանապարհը։

Յերրորդ հեռանկարն ամենից հուսալին ամենից ուղիղը, թեև վտանգավոր — փորձել գնալ շեշտակի, ճեղքել ժանդարմների շղթան։ Սևն ընտրեց ուղղությունը։ Առջևում, թփերի մեջ ժանդարմների պետն ըստ յերևույթին, նոր հենց պահակ կանգնեցրեց։ Այս կողմ ցանկապատը վերջանում է և անտառի ծայրից կարելի յե ուղղակի գծով կտրել սիմինդրի դաշտը։ Սիմինդրի բարձր վոտերն ամենից

վստահելի թագստոցն են։ Սևը գլխարկը շուռ տվեց՝ շփոցիկը ծոծրակի կողմը, բարձրացրեց բաճկոնի օձիքն ու ամբողջապես կոճակեց։ Մի րոպեյից նրա առջև մթության մեջ հրխնչաց փակաղակն ու դողդոջ, բեկվող մի ձայն նետեց։

— Կանգնի՛ր։ Ո՞վ է գալիս։

Սևը կորացրեց մեջքը, սեվեռուն նայեց խավարի գիրկն ու թռիչք գործելով դեպի ժանդարմը, ծանր, նշանառու մի ապտակ իջեցրեց նրա դեմքին.

— Սուս կաց, խոզ, — խռպոտ շշնջաց Մակեդոնացին, — ինչ ես դռռում։ Այդ յերբվանի՞ց է, վոր դադարել ես ճանաչել քո պետին։

Ժանդարմը շփոթվեց, լռեց, անհանգիստ շարժում անելով տեղում։ Ճայթեց մի չոր ճյուղ։ Սևը կանգնեց մի քանի վայրկյան ականջ դնելով։

— Աղմուկ մի արա, անասուն, — խուլ նետեց ժանդարմին և, շուռ գալով, արագ ու անձայն քայլեց թփերի միջով դեպի անտառի ծայրը։

Արդեն սիմինդրի դաշտում Սևը լսեց պուրակից հնչող հեռավոր կրակոցներ։

* * *

Բրոդարկան շտապում եր։ Սիրտը, հուզված դեռևս մխինդում, շարունակում եր աշխատել արագ, շտապ քայլելուց առավել ջերմացած։ Ամբողջ եյությունը մինչև մատների ծայրը պարուրած ուրախությունից մաքերը

թեթև էին և ազատ։ Ինչպես լավ է այնուամենայնիվ։ Գործարանում ընկերների շարքերից խլեցին տասնյակ ամենից լավերին։ Պետք էր սպասել ճնշվածություն, վախ, ուժերի անկում։ Յեվ ահա դուրս է գալիս, վոր վոչ մի այդպիսի բան չկա։ Վերքերը բուժված են։ Ճեղքվածքները ծածկված են բանվորական մասսայի անսպառ աղբյուրի մարտական յեռանդի փրփրուն, կենդանի ուժերով։ Սքանչե՛լի։ Հին հսկայական գործարանը դասակարգային պայքարի ճակատում կրկին ամուր պոստ է դառել... ինչպե՛ս էին կազմակերպել այսօր միտինգն այդ յերիտասարդ տղաները։ Ինչպե՛ս ամուր ու վճռական կերպով կարողացել էին համախմբել բանվորներին։ Յեվ դեռ կան այնպիսիները, վորոնք պատրաստ են քթերը կախել ու լաց լինել ամեն մի չնչին անհաջողության դեպքում, յուրաքանչյուր, նույնիսկ աննշան պարտությունից հետո։ Գոհունակությունից Բրոդարկան նույնիսկ մեղմ սուլեց իտալական ձկնորսական յերգի յեղանակով։ Մոտիկից անցնող շքեղ «Լիմուզինի» շչակի վռնոցը Բրոդարկային վերադարձրեց իրականության։

«Հիացմունքից յես ինձ վերջնականապես կորցրել եմ», մտածեց Բրոդարկան, շուրջը նայելով։ —Գիշեր ժամանակ գտնվում եմ, սատանան գիտե, վորտեղ և դեռ լսում եմ չոբանի նման... Հարկավոր է շուտ տուն հասնել։ Պուրակի ծառուղու ստվերում հեռավոր լապ-

տերի լույսի ճառագայթը շողաց սվինի սուր բերանին։ Բրոդարկան վորոշեց քայլերը չըդանդաղեցնել։ Աշխատելով շնչել հավասար և վորչափ կարելի յե հանդիստ յերևալ, նա առաջացավ ուղիղ դեպի ժանդարմը։

«Յերևի պուրակում շուրջկալ է լինելու, վորոշեց նա։ —Ահա ժանդարմը բոլորովին մոտիկ է։ Կրկին մի քայլ...»

— Կա՛ց։ Տեղիցդ չշարժվե՛ս։ Ձեռքերդ վե՛ր։ Ձայնը բիրտ է ու խռպոտ։ Հրացանների փողերը թեթև յերևում են։ Բրոդարկան ցընցվեց, գունատվեց ու նայեց շուրջը։ Դեպի նա վազում էին ևս մի քանի ժանդարմներ։

«Ընկա»— անցավ Բրոդարկայի ուղեղով։ Արագ, կատվի նման սահեց նա սեզի վրայով ու սեղմվեց այգու աղյուսե պատին։ Ծառերի տակ վազվզեցին, թռչկոտացին գրպանի լապտերների ուռուցիկ ապակիների անդրադարձրած լույսերի կապտա-սպիտակավուն շերտեր։

— Այստեղ է անիծյալը...

Դադար— կարճատև, ինչպես հրացանի ճարճատյուն։ Սիրտը դադարեց։

— Ե՛յ, դու... անձնատուր յեղիր... Միևնույն է, բռնվել ես։

Լռություն։ Յեվ ապա ավտոմատ ատրճանակի չոր ճայթուն... Կրկին... և ... կրկին։ Շաչեցին հրացանների կրակոցներ։ Հսկայական մի մտրակ հարվածեց Բրոդարկայի

վոտքը և, բաց թողնելով ձեռքից ատրճանակը, նա մեղմ հառաչանքով դանդաղ սահեց խոտին:

***

Առավոտյան Բալկանը հուզվեց լրագրավաճառների աղաղակներից:

— Բացվեց զինաթափման հանձնաժողովի հունիսյան նիստը:

— Մեր ներկայացուցիչը ոդանավով թռավ Ժնեվ:

— Մեծ մանածա-անկվածային գործարանում կրկին սկսվեց գործադուլ:

— Ձերբակալված է վտանգավոր բոլշևիկուհի:

—Յերկաթուղային աղետ Նիշ-Ցարիբրոդ գծի վրա:

Քաղքենիները առավոտյան կոֆեյի գավաթներն առաջներին, ագահորեն կլանում եյին նոր դեպքերի նկարագրությունները: Բանվորները գործարաններում վախով նայելով շուրջներն ու գաղտագողի միմյանց հանձնելով արդեն ճմրթված, յուղոտած լրագրերը, մի քանի վայրկյան հայացքները սահեցնում եյին գործադուլի հաղորդագրության վրա:

Մատեն տանն եր: Նա նոր միայն քաշել եր իր կրտսեր վորդու ականջներն ու միտք եր անում այժմ, գլուխը ձեռքերի մեջ առած...

Ահա արդեն յերկու որ ե, վոր նրան անդադար հետապնդում ե անսպասելի և ապշեցուցիչ մի տեսարան...Նա՝ Մատեն, անկախ արհ-

միության անդամը, հին ազնիվ բանվորը— գործակալ Ցրոտի գրասենյակում պարտավորություն ե ստանձնում հավատարիմ ու խղճմիտ ծառայել թագավորական վոստիկանության շահերին, միանգամայն հոնարարով ծախելով իր յեղբայրների շահերը: Վայրի ու անհեթեթ տեսարան... Մատեն ինքը չեր կարողանում հասկանալ, ինչպես պատահեց այդ...

Գործիքների բուդկա մտավ ցեխի վարպետը՝ յերկու անհայտ մարդկանց ուղեկցությամբ, վորոնք, պահարանի վրա կախած՝ Մատեյի վերնահագուստի գրպանից դուրս հանեցին մի կապոց թռուցիկներ: Ապ՝ վոստիկանական վարչության գրասենյակում Հալաուշը խիստ նայվածք գամեց ծեր գործիքագործի դեմքին:

— Դուք պարտավոր եք ցույց տալ վերջերս գործարանից հեռացրած կոմունիստ Ջիչի գտնված տեղը: Ձեզ յերեկ տեսել են միասին, և դուք պետք ե իմանաք, վորտեղ ե գտնվում նա: Հենց վոր նա ձերբակալվի, դուք կստանաք յերեք հարյուր դինար: Հակառակ դեպքում մենք հարկադրված կլինենք ձեզ անմիջապես դատի հանձնել, վորպես հանցագործ թագցնողի...

Այնուհետև Մատեն հիշում ե իրեն ճմլող ներքին պայքարի ծանրությունը: Ջերդակից գողացված ե ամբողջ ապխտակեղենը: Հարկավոր ե առնվազը հինգ հարյուր դինար, յե-

րեխաներին հագցնելու համար... Վեց կիլո-
գրամ գետնախնձոր և յերկու կիլոգրամ
բակլա, վորպեսզի մի կերպ յոլա գնա մինչև
աշխատավարձ ստանալը.... Յեվ կնոջ գու-
նատ դեմքը... Յեվ պարտքերը... Յեվ յերեք
հարյուր դինար այստեղ սեղանի վրա...վորը
կարելի յե աշխատել միակ մեկ բառով: Յեվ
վախ, անսանական, անսահման վախ:Ի՞նչ կլի-
նի ընտանիքի դրությունը, յեթե իրեն այս բո-
պեյիս ձերբակալեն: Ո՞վ կկերակրի յերեխա-
ներին:

Իսկ գործարանը, վոր տարիներ շարունակ
հարյուրավոր ընկերների հետ աշխատելու ըն-
թացքում պրոլետարի ազնվության հաստա-
տուն պատկերացումներ ե ներշնչել նրան...
Ջիչը, փոքրիկ, սեվ ու չար մի տղա, վոր ամ-
բողջ որը գործով ե զբաղված, վորի պատճա-
ռով այս բոպեյիս բանտ են ընկել Միլան
Գորիչը, Ստեվան Վազները և շատ ուրիշ-
լավ տղաներ:

Դիլեմմա. Ջի՞չը, թե ընտանի՞քը: Վո՞րն
ե թանգ: Վո՞րը պետք ե զոհաբերի Մատեն:

Միջին ճանապարհ չկար:

Մատեն հանդիպեց ձերբակալված Ջիչին
վոստիկանական վարչության դռներում: Ծեր
գործիքագործը ազատություն եր ստանում
խճճված պարտավորությունների պողպա-
տյա թելերում, վոր դրված են նրա վրա Հայա-
ուշի դրասենյակում: Ջիչը կորցրեց ազատու-
թյունը: Ջիչը ներս մտավ բանտի դռնից յեր-

կու ժանդարմի հսկողությամբ: Ջիչը սովո-
րականից ավելի չարացած եր, և նրա դեռևս
քնից կարմրատակած աչքերը բոցավառվում
եյին ցասումով: Նա վոչինչ չասաց Մատեյին
Նա միայն նայեց գործիքագործի վրա և թե-
թեվ ծամածությունն եր ծածկել նրա շըր-
թունքները... Իսկ հետո Մատեյի համար ըս-
կսվեցին անտանելի տառապանքների ժամեր:
Մատեն, վոր համարվում եր որինակելի գեր-
դաստանի հայր, վոր յերբեք չեր ծեծել կնոջն
ու յերեխաներին, հանկարծ կատաղեց: Նա ա-
մեն մի առիթով ծեծում եր յերեխաներին. և
նրա դրությունից զարմացած՝ կինը հաճախ
լսում եր նրանց անհասկանալի, վախ պատ-
ճառող մի նախադասություն.

— Ձե՛ր պատճառով յես ծախվեցի, գրո՛ղը
ձեզ տանի:

Մատեյին ճնշում ե մենակությունը: Աշ-
խատանքի գնալու կարիք չկար: Գործարանը
առավոտյանից գործադուլ եր արել: Գնալ գա-
րեջրատուն, ուր այժմ, հավանորեն, նստած
են գործադուլավորները, ունկնդրել նրանց
բորբոքված ձայներին, նայել գործարանի
դարպասի դիմացի փողոցում շրջագայող դի-
տակալների դեմքերին, Մատեն չեր համա-
ձայնում: Նա վախենում եր իր վրա վորսալ
գործադուլի ղեկավարի կշտամբական կամ
անբարյացակամ–կասկածամիտ հայացքները:
Նա վախենում եր բանվորների աչքե-
րում կշտամբանք կարդալ:

Բաց լուսամուտի մոտով, որի առաջ նըստած էր գործիքագործը, վազեց լրագրավաճառ տղան: Մատեն ուրախանալով, որ ժամանակն սպանելու պատճառ ստեղծվեց, «Բալկանյան նորություններ» գնեց:

«Այսօր առավոտյանից «Յադրան» մեծ մանածա-անկվածային ակցիոներական ընկերության բանվորները, գրգռված յերեկ միտինգում կոմունիստական ագիտատորների ելույթներով, գործադուլ են սկսել, առաջադրելով տնտեսական և քաղաքական բնույթի մի շարք պահանջներ: Իմիջիայլոց, բանվորները պահանջում են աշխատավարձի քսան տոկոս հավելում, բանվորական ժամանակի տևողության կրճատում մեկ ժամով և վերընդունել ներքին կարգապահության կանոնները խախտելու համար գործարանից արձակված յերեք բանվորի: Սոցիալ-դեմոկրատները և անկախները պայքարում են միմյանց հետ, գործադուլի ղեկավարության համար: Վերջիններին հաջողվեց նախաձեռնությունն իրենց ձեռքն առնել: Ակցիոներական ընկերության վարչությունը կասկածում է, որ մեծ եքսցեսներ տեղի կունենան և թագավորական ոստիկանության ապարատը մշտապես գտնվում է կատարյալ պատրաստ վիճակում:

«Բելգրադից ստացված հաղորդագրության համաձայն, յերեկ, ցերեկվա ժամի չորսին Նիշ-Ցարիբրոդ գծի վրա խորտակվել է ճեպընթաց գնացքը: Մարդկային զոհերի թիվը

դեռևս ճիշտ չի պարզված: Կասկածներ կան, որ կատաստրոֆային մասնակից են մակեդոնական ավտոնոմիստները»:

«Գիշերվա ժամի տասներկուսի մոտ Շենոա պուրակում, շնորհիվ ոստիկանական գործակալների յեռանդի և համարձակության, վերջապես ձերբակալված է վաղուց հետապնդվող վտանգավոր տերրորիստ Բրոդարկա Գավրիլովիչը, — մանածա-անկվածային գործարանի նախկին բանվորուհի»:

— Ի՞նչ, ի՞նչ, — Մատեն ձեռքից բաց թողեց լրագիրն ու մի քանի բոպե անշարժացած, նայեց իր առջևը: Այս անվճռական մաքրեց ակնոցները և նորից կարդաց Բրոդարկայի ձերբակալման լուրը սկզբից մինչև վերջ:

Այո, Բրոդարկան, ծերուկ Գանսոնի աղջիկը ձերբակալված է և այժմ նստած է բանտում: Գուցե հենց այս րոպեին նրան ծեծում են, փորձելով խոստովանություն դուրս կորզել նրա բերանից. իսկ նա՝ Բրոդարկան անշուշտ լուռ է... Նշանակում է Մատեն տեսել է նրան ձերբակալությունից ընդամենը յերկու ժամ առաջ: Չե՞ր կարող հո Մատեն չճանաչել, մտածում իր հին բարեկամի աղջկան, որին ուսերին գրկած ման է ածել ինքը: Նրան այժմ կախ կտան: Նա նստած է, շնորհիվ ոստիկանական գործակալների յեռանդի և համարձակության...

Արյունն հանկարծ խփեց Մատեյի գլխին: Ոստիկանական գործակալների... Նա սար-

սափ զգաց։ Միթե ինքը, Մատե Մլիներիչը վոստիկանական գործակալ չէ՞։ Միթե նա դավաճանություն չի՞ կատարել։ Միթե նա չվաճառե՞ց Զիչին։ Բայց գուցե և... վոչ, Մատեն բացարձակապես վոչ մի մասնակցություն չունի Բրոդարկայի ձերբակալման մեջ։ Ճշմարիտ է, յերեկ միտինգում նա անմիջապես ճանաչեց աղջկան, չնայած կտրած մազերին ու կիսախավարին։ Նրան ձեռքից բռնած առաջնորդում եր յենթավարպետ Ադոլֆը... Ադոլֆը...

Մատեյի գլխում հանկարծ կասկած ծագեց։ Նա հիշեց, ինչպես իր ձերբակալվելուց կես ժամ առաջ գործիքարան մտավ Ադոլֆը։ Յեվ, տանալով իրեն անհրաժեշտ գործիքը, Ադոլֆը մի րոպե կանգ առավ պահարանի մոտ, ուր կախված եր Մատեյի վերարկուն։ Յեվ Ադոլֆն եր միայն տեսել Մատեյին Զիչի հետ, իր ձերբակալությունից մեկ որ առաջ... Իսկ հետո Բրոդարկային առաջնորդեց Ադոլֆը, վորին անմիջապես դրանից հետո ձերբակալել են

— Յեվ այժմ այդ անիծյալը մնալու յե գործարանում։ Այնուհետև ես պիտի ծախի մարդկանց։ Բավակա՛ն է,—բորբոքված նետեց Մատեն տարածության մեջ։ Բարձրացավ աթոռից ու դուրս յեկավ տանից։

Ծերունի Կլինչիչի գարեջրատան մոտ աղմկալից եր, ինչպես միշտ՝ արվարձանի թաղամասերը հուզող մեծ դեպքերի որերին։ Ճիշտ . հենց այն րոպեյին, յերբ Մա-

տեն մի քանի աստիճան ցած իջավ ու բաց արեց մուտքի դուռը, վերջացավ գործադուլային կոմիտեյի նիստը։ Սլավկոն, նստած սեղանի մոտ, ձախ ձեռքով բռնել եր գարեջրի գավաթը, իսկ աջով յեռանդուն թափահարելով, ինչ վոր բան եր բացատրում գործադուլային պահակալների պետին— ծերունի, մռայլ մի բանվորի։ Մատեն աթոռների և մարդկանց արանքով մոտեցավ Սլավկոյին ու ցնցեց նրա ուսը։

—Գնանք, տղա, յես քեզ ասելիք ունեմ,— կռացավ գործիքագործը յերիտասարդ կոմունիստի ականջին։

Սավայի ափին, Մատեն հուզված ու բառերից շնչասպառ, ամեն ինչ պարզ, առանց ծածկելու պատմեց Սլավկոյին, սկսած ձերբակալություններից և իր այսորվա յենթադրություններից։ Սլավկոն սուլեց, մռայլվեց և ուշադիր լսում եր Մատեյին, քորելով չածիլած այտը։

— Դա միանգամայն հնարավոր է,— ասաց նա կարծես ինքն իրեն։— Հավանական է, վոր թռուցիկները դցել է Ադոլֆը... Այո, միայն նա գիտեր, վոր ճանապարհով գնաց Բրոդարկան։ Միյն նա կարող եր մատնել նրան...Ա՛յ քեզ սրիկա։

Սլավկոն կրճտեց ատամներն ու լռեց։ Հետո բարձրացրեց աչքերը, և Մատեն վախեցավ, տեսնելով յերիտասարդ մանտյորի բիբերի չոր, կանաչավուն փայլը։

—Լսիր, ծերուկ, մեղմ ծոր տվեց Սլավկոն, —այն բանի համար, վոր դու ծախեցիր Ջիչին, քեզ, իսկապես, հարկավոր եր սպանել շան նըման: Յես չեմ կամենում խոսել քեզ հետ այժմ այլևս: Գրողը տանի քեզ... Քո դավաճանության մասին յես վոչվոքի չեմ պատմի...Կարծում եմ, վոր դրա համար ինքդ արդեն բավականաչափ պատժվել ես: Իսկ Ադոլֆի մասին կստուգենք: Յեվ կանենք, ինչ վոր հարկավոր ե, —կամացուկ վերջացրեց Սլավկոն, լիզելով չորացած շրթունքները:

Սոսկալի յերկար եր տևում ժամանակը...

* * *

Արդեն մի ամբողջ շաբաթ եր անցել այն որից, ինչ Բրոդարկան ընկել եր վոստիկանական վարչության կեղտոտ առանձնարանում: Բրոդարկան չեր հիշում իր հետ կատարվածը: Գլխում խառնիխուռն կուտակվել եյին մտքերի, ձայների, պատկերների պատառիկներ: Յեվ միայն ֆիզիկական ցավի գալարումներն են մեխվում հիշողության մեջ վառ առկայծումներով, ազդող ու վորոշակի...

Ձերբակալությունից հետո, վոտքից վիրավորված Բրոդարկային զետեղեցին գլխավոր վոստիկանական վարչության բանտային հիվանդանոցում: Փոքրիկ սենյակում չորս մահճակալ ե դրված: Ոդը դաղջ ե, յոդաֆորմի, կարբոլկայի, մարդկային փտող մարմնի հեղձուցիչ հոտով հագեցած:

Բրոդարկայի կողքին, — կեղտոտ անկողնում պառկած ե սիֆիլիսով հիվանդ հասակավոր մի պոռնիկ: Ամեն յերեկո բանտային կոպիտ, ջղային բուժակը լվանում ու կապում ե նրա դարշահոտ վերքերը: Կինն աղաղակում ե գազանային, անկապ վոռնոցով: Իսկ սենյակի մյուս անկյունում յերիտասարդ, թոքախտով հիվանդ գրպանահատ մի կին բարձրացնում ե ջերմից շիկնած չոր դեմքն, ու նրա պապակ, ճաքճքած շրթունքներից հորդում են ու թափվում զզվելի, խիտ, բայց անուժ հայհոյանքներ:

Բրոդարկան վոչ վոքի հետ չի խոսում: Ատամները սեղմած, հետեվում ե առավոտները վերքերը կապող բժշկի ձեռքերին: Անտարբեր կուլ ե տալիս տաք ջրում թրջած պաքսիմատի արդանակը: Մեկ անգամ վոստիկանական քննիչը փորձեց հարցաքննել նրան: Բրոդարկան լուռ մնաց: Յեվ քննիչը հեռացավ դատարկաձեռն, բարկությամբ չխկացնելով դուռը: Միջանցքում խնդրեց բժկին չտապել հիվանդին «հարկավոր դրության» բերել:

Բալկանի լրագրերը տպագրեցին վոստիկանության պետի հայտարարությունը Բրոդարկայի մասին: Հաղորդվում եր, վոր ձերբակալման ժամանակ զինված դիմադրություն ցույց տված և դրա հետևանքով վիրավորված վտանգավոր բոլշեվիկուհին ներկայումս գտնվում ե հիվանդանոցում, բուժման:

Լրագրի կարճ, չոր հաղորդագրությունները չեյին բավարարում քաղաքի բանվորնե-

րին: Անկված-մանածային գործարանի կոմունիստական բջիջը, վորի ղեկավարությամբ բանվորները հաղթանակեցին վերջին գործադուլի ժամանակ, անկախ արհմիության անունից պատգամավորություն ուղարկեց վոստիկանության պետի մոտ: Պատգամավորները աստիճանավորին կասկած հայտնեցին այն մասին, վոր Բրոդարկան ընդհանրապես կենդանի չէ, և կտրուկ պահանջում եյին ձերբակալվածի հետ տեսակցություն: Վերջիվերջո Բրոդարկայի հետ թույլատրվեց տեսակցել վեննական մի փաստաբանի, վորին ուղարկել եր Կարմիր օգնության կազմակերպությունը: Փաստաբանը բժշկի ներկայությամբ հարկադրված եր հաստատել, վոր Բրոդարկան ֆիզիկական ուժի, խոշտանգումների կամ ծեծի հետքեր չունի իր մարմնի վրա:

Բրոդարկան վերջապես փոխադրվեց բանտային առանձնարանը: Պողպատյա ցանկապատով բաժանված փոքրիկ նախասենյակում լըռակյաց ժանդարմները կրկին անգամ մանրազնին խուզարկեցին աղջկան, և նա ներս մտավ բետոնի յերկար միջանցքի կամարների տակ: Միջանցքի պատի յերկարությամբ սեվին եյին տալիս բանտային սենյակների յերկաթապատ դռների քառակուսիները: Յուրաքանչյուր դռան մեջ, մարդկային հասակի բարձրությամբ, բացված է կլոր, փոքրիկ անցք: Իսկ այդ անցքից լսվում է դռան յետև գտնվող կենդանի մարդկանց շնչառությունը:

Ժանդարմը պտտեց բանալին, բաց արեց ճռռացող դուռն, ու Բրոդարկան ներս մտավ իր նոր բնակարանը— առանձնարան № 26-ը:

Չնայած ամառային տոթին, առանձնարանը սառն եր ու խոնավ և նրա բորբոսնած պատերը բաժանում են Բրոդարկային իր բարեկամներից, մարդկությունից, բնությունից: Ժամերն ընթանում են անտանելի դանդաղ: Լռություն, վոր յերբեմն ընդհատվում է քայլերի ձայներով, բանալիների զնգոցով ու բացվող դռան ճռռոցով: Ոդը կանգ է առել, անշարժացել: Վոչ մի բան չի տատանում նրան: Հարկադրական լռությունը հուսահատության եր հասցնում Բրոդարկային: Նա փորձում եր խոսել ու յերգել: Խռպոտ ձայները թվում եյին վայրի ու անբնական: Լռելով, լայն բանալով աչքերը, Բրոդարկան սկսեց ունկնդրել, աշխատելով վորսալ պատասխան ձայն: Աղջկան ընդգրկեց սարսափը: Նա բարձրացավ տախտակամածի վրա, կծկվեց անկյունում՝ փոքրիկ, կլոր գունդ դառած ու յերկար մնաց այդպես, ապակիացած աչքերն հառած սենյակի հակառակ անկյան: Ամեն օր Բրոդարկային դուրս եյին բերում բանտային շենքերի չորս պատերով շրջափակված փոքրիկ բակը: Բանտային վարչությունը կես ժամ նշանակել եր Բրոդարկային զբոսնելու: Կես ժամ Բրոդարկան կախ գցած գլուխն ու ձեռքերը թիկունքին, քայլում եր բակի շուրջը, ծեր ժանդարմի հսկողությամբ: Այդ կես ժամը Բրոդարկայի

համար անփոխարինելի ուրախություն էր։ Միջօրեի արեգակը շողում էր ուղղակի գլխավերևը։ Ամառային թափանցիկ օդը բերում էր բանտային շենքերով խեղդված մեծ քաղաքի աղմուկը։ Խոտով ծածկված բակի քարերի վրա անհանգիստ թռչկոտում էին ճնճղուկներ, վորոնց ուշադիր հետևում էր բանտային տեսչի սրադունչ կատուն։ Յեվ թեև Բրոդարկայի զբոսանքի ժամանակ բակում ուրիշ կալանավորներ չեյին լինում, նա անուամենայնիվ ավելի սուր էր զգում իր ընկերների մոտիկությունը, վորոնց թաքցրել էին բանտային փոքրիկ լուսամուտների վանդակների յետև, Յա[illegible]յան փողոցում մայիսյան ցույցը գնդակահարելու օրից սկսած։

Զբոսանքից վերադառնալով իր խուցը, Բրոդարկան սովորաբար շարունակում էր քայլել։ Նրա առանձնասենյակն ուներ չորս մետր երկարություն և [illegible] էր. [illegible] 1700 անգամ, [illegible] յոթ կիլոմետր տարածություն ունեցող ճանապարհ։ Ու մենակության տառապալից ժամերն անցնում էին. Համարյա բանտային [illegible] լռության մեջ խուլ հնչում էին սեփական քայլերի միապաղաղ հարվածները։

Խիստ մեկուսացման մեջ պահվող Բրոդարկան, յերբ մտածում էր իր [illegible], [illegible] բան էին դուրս բերում ձերբակալվածներին, բանտի դա-

նաղան հարկերից։ Մարդիկ գնում էին միայնակ, խմբերով, առանց յետ նայելու և առանց խոսելու, իսկ վոտքերի կապանքները զրնգում էին, նման սուրբ Անտոնիոսի շուրջը տոնական յերթի ժամանակ հնչող զանգակներին։ Յերբեմն միապաղաղ շաչյունը հասնում էր Բրոդարկայի ականջին՝ փոքրիկ լուսամուտի վանդակապատի միջից, և աղջիկը շունչը պահած, անշարժ լարում էր հիվանդագին սրված լսողությունը։ Տառապալից ցանկություն էր զգում տեսնել իր ընկերների դեմքը, Մելանի դեմքը... Անիրականանալի ցանկություն։ Վողորկ ծեփած թեք պատը յերկու մետր բարձրությամբ, բաժանում էր Բրոդարկային լուսամուտների վանդակորմներից։

***

Շրոտը սրբեց աչքերը, հորանջեց, դժկամությամբ նայեց զանգահարող հեռախոսի ապարատին և, հողաթափերը քցելով մերկ վոտքերը, մոտեցավ սեղանին։

— Լսում եմ, Հալա՛ուշ։ Բարի լո՛ւյս... Այդ ի՞նչ է պատահել ձեզ մոտ... Կարևո՞ր... Դե լավ... Յես ձեզ սպասում եմ քսան րոպեյից։

Շրոտը կախեց խոսափողը, հոնքերը վեր բարձրացրեց, ուսերը ցնցեց ու թափահարեց ձեռքը։ Խալաթի փեշերը վրա քաշելով, շարժվեց դեպի լոգարան։

Հալաուշը գտավ նրան նախաճաշելիս։

Տրոտը վերցրեց մոխրագույն բարակ թղթի կտորը, ծածկված հաստ, տարածուն տառերով:

— Կրկի՞ն նոր թռուցիկ ձեր գործարանում, — մրմռաց նա:

Հալաուշը քմծիծաղ տվեց:

— Ամեն ինչ իր կարգին, պարո՛ն Տրոտ: Սկզբում լրագիր, հետո թռուցիկ, իսկ ապա այն, ինչ պատիվ ունեմ հաղորդելու ձեզ:

Տրոտը մի կողմ դրեց թռուցիկը, նշանով առաջարկեց Հալաուշին նստել և դանդաղորեն սկսեց կարդալ կարմիր մատիտով ընդգծված համառոտ լուրը լրագրի թարմ համարում: Խոժոռվեց ու արագ նայեց Հալաուշին: Նա նստած էր հանդիստ, փոքր փոքրին դրած և դաստապարտյալի նման, դանդաղորեն ծխախոտ էր փաթաթում:

— Այստեղ ասվում է, որ դիակը, ըստ փաստաթղթերի, ճանաչված է, որ դա Ադոլֆ Տիմացն է: Ձեր տեղեկությունները հաստատո՞ւմ են այդ:

Հալաուշը մռայլ հոգոց քաշեց:

— Դժբախտաբար՝ այո՛: Լսեցեք, ինչպես էր գործը: Բողարկային ձերբակալելուց հետո գործարանի կոմունիստները կասկածեցին, որ Ադոլֆը մեր գործակալն էր... Հանդամանքներն այնպես էին դասավորվել, որ հատկապես Տիմացին էին առաջարկել Բողարկային միտինգ առաջնորդել: Դա հեշտացնում էր մեզ համար հանցագործի ձերբակալությունը,

բայց, բնական է, կասկածի տակ էր դցում Ադոլֆին: Անհայտ է, ինչ ճանապարհով, կոմունիստներին հաջողվում է պարզել Ադոլֆի մասնակցությունը նաև ուրիշ ձերբակալություններին, մասնավորապես Զինչի ձերբակալման: Յեվ յերեկ յերեկոյան գործարանի կոմունիստները Ադոլֆին խորամանկությամբ հրապուրում են Սավայի ափ ու թփերի մեջ գնդակահարում նրան...

— Փաստե՛ր,— կարճ նետեց Տրոտը:

Հալաուշը գրպանից հանեց մի փոքրիկ ճմրթված թղթի կտոր: Տրոտը բարձրաձայն ու դատ–դատ կարդաց.

«Նեղություն մի կրեք փնտրելու ձեր գործակալ Ադոլֆ Տիմացին վերջացնողներին: Պարտք ենք համարում նախազգուշացնել, որ նրա վիճակին արժանանալու ռիսկին են յենթարկվում բոլոր նրանք, ովքեր պրովակացիայի և դավաճանության ճանապարհն են ընտրում»:

— Այդպե՛ս, — ծոր տվեց Տրոտը: — Նշանակում է, դուք արխացե՞լ եք, հարգելի ընկերներ: Նշանակում է դուք համարձակություն եք ունենում մեզ նախազգուշացումնե՞ր անել... Լավ, դրողը ձեզ տանի. կտեսնենք՝ ո՞վ ում...

— Այդ ի՞նչ եք փնթփնթում այդտեղ, Տրոտ, — գլուխը դռնից հանեց Հալաուշը: — Տուտ յեկեք:

— Գալիս եմ, — ասաց Շրոտն ու Թափուկ դառնալով, շտապեց դեպի դուրս։

***

Բրոդարկայի համար սկսեցին այն օրերը, վորոնց նա յերկար սպասում եր քայքայված նյարդերի ահռելի լարումով։ Սկսվեցին հարցաքննության օրերը։ Վոստիկանների ու քննիչների ցինիկ քաղաքավարություններ, խելահեղ կատաղության նոպաներ... Սարսափի և հուսահատության ու սոսկալի, անտանելի ֆիզիկական ցավերի րոպեները միախառնվելով կազմեցին ահռելի մի ցանց, խճճելով Բրոդարկային ամեն կողմից։ Գիտակցությունը, շաբաթներով բարոյական ու ֆիզիկական տառապանքներով ջախջախված, անսովոր համառությամբ մի վորոշում ուներ միայն — լռել։ Խոսել ու մտածել չի կարելի։ Չի կարելի խոսել, վորովհետև բառը կարող է մի օղակ հանդիսանալ, վորի միջոցով դուրս կկորզվի ամբողջ մնացյալը — իսկ դա կոչվում է դավաճանություն։ Չի կարելի մտածել, վորովհետև մտքերն այլևս չեն յենթարկվում վերահսկողության ու նրանց փոթորիկը գիտակցությունը խելագարության անդունդն է մղում։ Պետք է լռել, ատամները սեղմած։ Մինչև վերջին հնարավորության լարել ջղերը, լարել թուլացած մարմնի մկաններն ու լռել։

Բրոդարկան պառկել եր մեջքին՝ ձեռքերը գլխի տակ առած ու հայացքն առաստաղին հառած։ Մարմինը մանրիկ ցնցվում եր, բութ

ցավը լցնում եր որգանիզմի յուրաքանչյուր բջիջը, կապույտ ուռուցքներով ծածկված կաշվի յուրաքանչյուր սանտիմետրը։ Շուտով կրկին պիտի տանեն հարցաքննության։

Ահա։ Գալիս են...

Միջանցքում զրնգացին բանալիներ ու լսվեց մի քանի զույգ ժանդարմական ծանր կոշիկների դոփյուն։ Բանալին կողպեքի մեջ յերկար ու տրտում ծլնգաց։ Դռան մեջ յերևաց ժանդարմ։

— Վեր կաց... Քննիչի մոտ...

Բրոդարկան լուռ բարձրացավ։ Ժանդարմը ներս մտավ խուցը և, վարժ շարժումով ուղղելով ուսի կարաբինը, հմտորեն պրկեց Բրոդարկայի ձեռքը պողպատյա կապով, վորի օղակը ամուր սեղմեց իր մազոտ, ուժեղ մատներով։

— Մարշ, — վորոտաց նա։

Բրոդարկան ժանդարմների հետ հանդարտ առաջացավ միջանցքով։ Հեռվում հնչեցին պատի ժամացույցի հարվածները — ինը հարված։ Աղոտ, փոքրիկ լապտերները միջանցքում ժլատ, դեղին լույս եյին առկայծում։ Դռների կլոր բացվածքներում Բրոդարկան տեսնում եր իր քայլերն ուղեկցող աչքեր։

Քննիչի սենյակի դռան մոտ ժանդարմը պահեց Բրոդարկային։ Սենյակում լսվում եյին ուժեղ, խուլ, հարվածներ և մի բարձր, ցասումից դողդողացող ձայն նետում եր զայրագին, կարճ խոսքեր։ Ժանդարմները մռայլ լուռ

էյին մնացել, իսկ Բրոդարկան շունչը զսպած, լարված լսում էր:

— Սրիկաներ, —հնչում էր դռան յետև:— Դուք կարծում եք, ծեծելով ինձ կարող եք հարկադրել այն, ինչ յես չե՛մ կամենում: Կըստանաք, չէ՞: Թքե՛լ եմ յես ձեր բոլորի վրա: Յես իմ կշավի տերն եմ: Լսո՞ւմ եք,— յե՛ս և վոչ թե դուք: Յեվ յեթե յես հրամայեմ նրան լռել, նա կսատկի, բայց լուռ կմնա:

Ձայնը դռան յետև խզվեց, փոխվեց խորդյունի և, վերջապես, դուրս ցայտեց վորպես յերկարատև, խեղդված հառաչանք: Քննիչի սենյակում լսվեց աղմուկ, և, վերջապես, ամեն ինչ լռեց: Դռան շրջանակի վրա բոցավառվեց ու հանգավ փոքրիկ կապույտ լապտերը: Ժանդարմը ձիգ տվեց կապանքի ողը, ինչպես ուղտապանը ձգում է ուղտի ռունգներից անցկացրած ողը:

Քննիչը, չոր, հիսնամյա մի մարդ՝ սուր հայացքով, ըստ յերևույթին նոր միայն նստել էր սեղանի առջևի բազկաթոռին: Նա խիստ հուզված էր: Անցողիկ նայելով Բրոդարկային, մոտեցրեց իրեն գրամեքենան ու ծխախոտ վառեց:

— Նստեցեք, — չոր նետեց նա:

Բրոդարկան նստեց աթոռին և գլուխը դարձրեց լուսամուտի կողմը: Դեպի լուսամուտի գոգը թռավ մոխրագույն վայրի մի աղավնի: Նա գլուխը հենել էր ապակուն ու բարակ կարմիր տոտիկները վեր ու վար էր անում, աչ-

խատելով կանգնել նեղ յերկաթյա ցուքին: Տըների տանիքների յետև դանդաղ հանգչում եյին յերեկոյան վերջալուսի շողերը:

— Լսեցեք, Բրոդարկա, — սկսեց քննիչը, — ամեն ինչ վերջիվերջո սահման ունի:

Բրոդարկան լսում էր անտարբեր ու հանգիստ... Ինչպե՛ս անսահման ձանձրացրել է նրան այդ ամենը: Հիմի կսկսվեն կրկին ձանձրալի, հոգատանջ ու անշնորհք փորձեր՝ ազդեցություն գործ դնելու նրա համոզմունքների վրա: Հետո այդ նույն քննիչը, վորը միշտ սկզբում կուլտուրական ու մարդասեր մարդու դեր է խաղում, կկատաղի, կսկսի բռունցքով ծեծել սեղանն ու բղավել, հետո սենյակ կմտնեն ժանդարմները և Բրոդարկան կստանա տանջանքների հերթական բաժինը:

— Յես ձեզ մի քանի անգամ ասել եմ, վոր ձեր կատարած հանցագործությունը ձեզ համար ապահովում է մահվան դատավճիռը: Ձեր հոգու վրա ծանրացած է առնվազն կես դյուժին սպանություն՝ յերդմամբ իրենց վրա դրված պարտականությունը կատարող և մոտ մի քանում հանցանք չունեցող մարդկանց: Ինչո՞ւ համար է այդպիսի, հիրավի, ձեր համառությունը: Նա վոչ մի չափով չի թեթևացնի ձեր դրությունը: Ընդհակառակը, անկեղծ զղջումը ձեզ բավական հիմք կտա հույս ունենալու, վոր կպահպանվի ձեր յերիտասարդ կյանքը: Յես չեմ հասկանում ձեր վարմունքը, Բրոդարկա Գավրիլովիչ: Ձեր վարմունքը, առ-

նվազն, անտրամաբանական է: Վերջապես ի նկատի ունեցեք, որ մենք ավելի ուժեղ միջոցներ ունենք, քան այն, որ գործադրել ենք ձեր վերաբերմամբ մինչև այժմ:

Բրոդարկան լուռ էր:

Քննիչը վճռեց, որ իր ճառը որոշ տպավորություն գործեց համառ հանցագործի վրա և սեղմեց սեղանի էլեկտրական զանգի կոճակը:

— Ներս բերեք կրկին այդ ավազակին,— հրամայեց նա ներս մտնող ժանդարմներին:

Երկու ժանդարմ ներս բերեցին կապկըպված, նիհարած, ծեծված Ջիչին:

«Ահա ով էր ինձ առաջ ադադակում այստեղ»,— մտածեց Բրոդարկան, նայելով գործարանի իր նախկին ընկերոջը: Ջիչը, անցողիկ նայելով Բրոդարկային, անթարթ ու հանգիստ, փայլող հայացքը դարձրեց քննիչին

— Հը՞, ինչ կասեք ,հարգելի պարոն դոկտոր, — ասաց Ջիչը: — Ես և իմ դունչն ու իմ կողերս ձեր տրամադրության տակ ենք:

Քննիչը բռնկվեց:

— Վիրավորանքներ մի թույլ տուր, խուլիգան, — գոռաց նա: — Նայիր այս կնոջը, — մատնացույց արեց նա Բրոդարկային:

Ջիչը նայեց Բրոդարկայի աչքերին ուղիղ և հանգիստ: Սև ջոդուն, լայնացած բիբի խորքում տեսավ աննկատելի, ջերմ բարեկամական կրակ:

— Նայում եմ շատ ուշադիր, պարոն քըննիչ, — հեգնական ասաց Ջիչը, — նայում եմ և առանձնապես հետաքըրքիր բան չեմ տեսնում:

Քննիչը զուսպ էր կատաղությունից, բայց լռում էր:

— Հիմարի, յոլիտաարդ սրիկա: Իսկ գիտե՞ս դու, որ քո առաջ նստած է Բրոդարկա Գավրիլովիչը: Ճանաչու՞մ ես նրան:

Ջիչը ժպտաց քմծիծաղ:

— Բրոդարկա Գավրիլովի՞չը: Շատ հավանական է, — ծոր տվեց նա: — Մանավանդ, եթե դուք, պարոն քննիչ, այդպես հեղինակավոր հաստատում եք: Միայն, եթե այս կինը երբևիցե եղել է Բրոդարկա Գավրիլովիչ, ապա այժմ, շնորհիվ ձեր սիրալիր ջանքերի, նրան ճանաչելը շատ դժվար է:

Քնիչն սկսեց արագ-արագ տպագրել գրամեքենայի վրա: Գլանի տակից հանեց տպագրածը, գցեց սեղանի վրա, Ջիչի առաջը:

— Ստորագրիր քո ցուցմունքները, — նետեց նա:

Ջիչն արագ աչքով արեց Բրոդարկային և սկսեց կարդալ դիտավորյալ բարձր ու դանդաղ:

— «Ես, ներքո ստորագրող Ջիչ Նիկոլայը, բերվելով յերես առ յերես Բրոդարկա Գավրիլովիչի հետ, իսկույն ճանաչեցի, որ համարձակ հինգյալ Գավրոկլովիչը քանիցեցի կալանավոր հիշյալ Գավրոկլովիչը ակտիվ մասնակից է յեղել անլեգալ կոմունիս-

տական կուսակցության հանցապարտ գործունեությանը»... — Զիչն ընդհատեց ընթերցումը և անբավական կնճռոտեց քիթը:

— Հը՞,— մռռացրեց նա,— սա էլ ի՞նչ նոր բան է: Ով է ապացուցել ինձ, որ 26-րդ խցի կինը անլեգալ կոմունիստական կուսակցության ակտիվ գործիչն է... Ահա քեզ նորություն:

Քննիչը վոտքի ցատկեց բազկաթոռից:

— Անասուն,— մռնչաց նա,— ո՞վ է այստեղ քննիչը: Ո՞վ է այստեղ հանցագործը: Դո՞ւ թե յե՞ս:

Զիչը ժողովեց ուժերի մնացորդը և դեմքին սիրալիր ժպիտի նման մի բան պատկերեց:

— Յես յենթադրում եմ, վոր դուք ամենևին էլ փոքր սրիկա չեք, քան...

Քննիչը թույլ չտվեց Զիչին վերջացնել: Արագ հարվածով դեմքին, նա Զիչին վայր տապալեց ու դեռ մի քանի անգամ վոտքով հարվածեց բանվորի գալարված մարմնին:

— Կարցե՛ր,— շնչահեղձ կարգադրեց քննիչը: — Յեվ յերկու որ վոչ մի փշուր հաց, վոչ մի կաթիլ ջուր: Բայլշեվիկյա՛ն ավազակ: Բանդի՛տ:

Յերկու ժանդարմ դուրս հանեցին սենյակից Զիչի անհույս մարմինը, իսկ քննիչը անթարթ աչքերի կատաղած հայացքը հառեց Բրոդարկային:

— Ինչ է, անասուն,— փշշաց նա, Բրոդարկային մոտեցնելով զայրույթից գունատ-

ված դեմքը,— յե՞րբ ես վերջապես բաց անելու քո բերանը: Դե՛: Ո՞ւր է Սեվը: Ասա իսկույն, կամ թե այստեղից կենդանի դուրս չես գա:

Բրոդարկայի ներսում հանկարծ ինչ վոր մի բան բեկվեց: Քննիչի զայրույթն անցավ նրան: Նա վոտքի թռավ շնչահեղձ, բառեր չըգտնելով: Մի քանի վայրկյան նրանք կանգնել եյին միմյանց դեմ լուռ: Քննիչը փոքր ինչ շփոթվեց, յետ քաշվեց յերկու քայլ ու կրկին սեղմեց ելեքտրական զանգի կոճակը:

— Դե, ի՞նչ կասեք, իմ դյութիչ բայլշեվիկուհի,— հարցրեց նա կիսաձայն, ձեռքերը գրպանը դնելով:

Բրոդարկան բաց արեց բերանն ու այլես չկարողացավ զսպել իրեն: Ատելությունը մըթագնեց նրա ուղեղը, և բառերը, կրքոտ ու տաք, թռան, ինչպես գնդացիրի գնդակներ:

— Այո,— գոչեց նա, շնչասպառ,— բայլշեվիկուհի յեմ: Բայլշեվիկուհի— և հպարտանում եմ դրանով: Վոչինչ չեմ ասի: Վո՛չ մի բառ... Յեվ մենք դեռ ձեզ հետ հաշիվ կտեսնենք: Մենք կհատուցենք ձեզ մեր արյան փոխարեն... Դահիճներ: Շատ չի մնացել ձեզ իշխել:

Քննիչը ձեռքով անորոշ շարժում արեց, և ժանդարմները, բռնելով Բրոդարկային, այնպես սեղմեցին նրան, վոր վոսկորները ճարճատեցին: Մեկը բերանը խցկեց թաց շորի գուղձ, իսկ մյուսը կապտության աստիճան պրկեց թևերը մեջքին: Քարշ տվեցին պատի

մոտ, ուր կախված եյին հագուստի ճանկերը: Փոկը կապեցին պրկած թևերի մեջ, ծայրը գցեցին ճանկի պողպատե ցցվածքին և Բրոդարկայի պրկած թևերը քաշեցին վերև...

Սոսկալի ցավը տարածվեց աղջկա ձգված մկանների մեջ: Ճարճատեցին արմունկների վոլորված հոդերը: Կոկորդից դուրս յեկավ յերկարատև, կաղկանձյուն հառաչանք: Դեմքը կապտեց: Վզի յերակները փքվեցին: Բերանը խցկած չորի դուղձի տակ բշտկեց ալ փրփուր, քթանցքներից դուրս սողաց յերկու դեղնավուն, արյան բծերով շերտավորված լորձունք:

Քննիչը մոտեցավ Բրոդարկային, նողկանքի շարժումով դուրս հանեց նրա բերանից դուղձն ու, ձեռքերը գրպանները դրած, չռեց վոտքերը:

— Դե, այժմ դուք, անշուշտ, կխոսեք, որիորդ,—հարցրեց նա:

Բրոդարկայի աչքերը բացվեցին: Պարզորակ, խոշոր արտասուքները կաթում եյին արտևանունքներից ու գլորվում չոր, կրակվող այտերի վրա: Աղջկա կկոցված աչքերի անսահման արհամարհանքը յեղավ քննիչի պատասխանը: Ապա աչքի խնձորները սահեցին կոպերի տակ ու Բրոդարկայի գլուխը կախվեց անկենդան: Քննիչը չուռ յեկավ, մոտեցավ սեղանին ու նստեց բազկաթոռի մեջ:

— Հանեք այդ ապականությունն ու յետ

տարեք խուցը, — հոգնած ձայնով հրամայեց նա:

***

Բանտային դռան փոքրիկ կլոր լուսամուտում մարդկային աչքը հիշեցնում եր Բրոդարկային Պողոս և Պետրոս յեկեղեցու կամարների վրա նկարածը: Նկարը պատկերացնում եր «Տիրոջ ամենատես աչքը»: Անբնական լայն բացված աչքը յեռանկյունի շրջանակից գունատված, անորոշ գույնի շողերով շրջապատված, նայում եր մարդկանց: Աչք—կտրված մնացյալ որգանիզմից: Աչքը—լայնացած, ուշադիր, անթարթ, անբնական տպավորություն եր գործում ու թվում եր ինքնուրույն կենդանի եյակ...

Ամբողջ որը մի մարդ միջանցքում նայում եր Բրոդարկայի խցի դռան կլոր բացվածքից: Բրոդարկային մերթ թվում եր, թե դա ընկերոջ բարեկամական, համակրական հայացք եր, մերթ հանկարծ աղջկան սկսում եր թվալ, թե դռան յետև գտնվում ե անծայրածիր սարսափելի, խորթ ու աղոտ մի անձնավորություն: Յեվ նա, հառաչանքը զսպելով, ուժ եր գործ դնում թեքվելու պատի կողմը, չտեսնելու կկոցված սև բիբը, վոր այնպես սարսափ եր ներշնչում նրան...

Յերեկոյան Բրոդարկայի խուցը բացվեց ու ներս յեկավ հերթապահ վերահսկիչը: Զգուշորեն հատակին դրեց գոլորշի արձակող ջրալի բակլայի արգանակով ամանն ու դուրս յե-

կալ։ Բրոդարկան դժկամակ ցած սողաց տախտակամածից ու մի ումպ խմեց տաք, լճացած ջրի համ ունեցող կերակրից։ Ցեվ հանկարծ նա հայացքը գամեց ցեմենտի հատակի այն կետին, որի վրայից նա բարձրացրել էր ամանը։ Այնտեղ սպիտակին էր տալիս թղթի մի փոքրիկ քառակուսի։

Բրոդարկան տատանվում էր։ Ի՞նչ բան է։ Լո՞ւր բանտային ընկերոջից, թե որևէ պրովակացիա։ Վերջապես խլեց դողդոջ ձեռքերով թուղթն ու, մոտենալով լուսամուտին, բաց արեց։ Թղթի միջից դուրս ընկավ մատիտի մի փոքրիկ միջուկ։ Ներքևում հաստ տառերով գրված էր— «Միլան»։ Բրոդարկան ուրախությունից կարմրեց ու սկսեց ագահաբար կարդալ։

«Բրոդարկա՛․

Ցերեկ խցի դռան աչքից յես տեսա, ինչպես քարշ էին տալիս քեզ ժանդարմները, հարցաքննությունից հետո։ Սիրելի՛ս, ի՞նչ տանջանք է տեսնել ամենամոտ բարեկամի տառապանքներն ու հնարավորություն չունենալ օգնելու նրան։ Գուցե ավելի թեթև կլիներ, յեթե մենք յերկուսով էլ սպանված լինեինք ցույցի ժամանակ Ցադրանյան փողոցում։ Թեպետ և այժմ էլ մենք կիսից ավելի մեռած ենք։ Համենայն դեպս, Ֆիզիկապես։ Ո՛չինչ, սիրելիս, արիացի՛ր։ Մեր գործն ապրում է և ամրապնդվում։ Առանց զոհերի չի կարելի հաղթել։ Ցեվ յես հավատում եմ, որ մենք կհաղթենք։

Իմ վախճանն ինձ չի վախեցնում։ Յես վարժվել եմ այդ մտքին։ Հիշո՞ւմ ես ինչ է ասել Լեվինեն։ «Կոմունիստը— դա մեռյալ է արձակուրդի մեջ»։ Միակ բանը, որ տանջում է ինձ, —դա քո մասին յեղած մտածմունքն է։

Գրիր ինձ թղթի մյուս յերեսին... Դիր կերակրի ամանի տակ, և յերբ ժանդարմը կգա ամանը տանելու, շուռ յեկ․ մի՛ փորձիր խոսել նրա հետ։ Նա առանց այն էլ իր ուժերից ու հնարավորություններից շատ վեր գործ է անում։

Քաջալերվի՛ր, քաջալերվի՛ր, Բրոդարկա։

Քո Միլան»։

Բրոդարկան իր մեջ ուժերի արտասովոր վերելք զգաց։ Նամակը նրա վրա ներգործեց այնպես, ինչպես մորֆիումը՝ մորֆինիստի վրա։ Յուրաքանչյուր նախադասությունը դուրս էր քաշում նրան գորշ խցի միայնությունից ու կրկին ներփակում էր նրան միլիոնների պայքարի անընդհատ շղթայում։ Ցեվ Բրոդարկան զգում էր, ինչպես յուրաքանչյուր բառը հեղափոխություն անող այդ միլիոնների յեռանդի հսկայական շտեմարանից իր մեջ մի նոր կաթիլ է ավելացնում։

Բրոդարկան Միլանին գրեց ջերմ և առույգ նամակ ու թղթի փոքրիկ կտորը դրեց շուռ տըված ամանի տակ։

Մյուս օր Բրոդարկայի մոտ «բժիշկ» ուղարկվեց: Բանտային իշխանությունը կամենում էր պարզել, վորքան ժամանակ կարող է ապրել Բրոդարկան, սիստեմատիկ հարցաքննության յենթարկելով: Հարկավոր էր հընարավորին չափ ճիշտ վորոշել բեկման ակնթարթը, ակնթարթ, յերբ մարդը դեռևս իր մեջ կրում է ինքնապահպանման ինստինկտն ու յենթագիտակցական ծարավը կյանքի, բայց ֆիզիկական ու բարոյական ուժերն արդեն սպառվել են այնչափ, վոր լեզուն այլևս չի յենթարկվում կամքին: Այդպիսի բոպեներին մարդիկ, զգալով յեղունգների տակ շիկացած ասեղի սայրը՝ կամ դավաճան են դառնում, կամ յելք են փնտրում բանտում միակ հնարավոր ձևի տառապալից ու դժվարին անձնասպանության մեջ: Միջինը— մինչև վերջին բոպեն իմացականությամբ ղեկավարվող գիտակցական համառությունը քչերին է վիճակվել:

Բրոդարկան, ըստ յերևույթին, պատկանում էր այդ քչերի թվին:

Բժշկական զննությունը չափազանց պրիմիտիվ էր: Գեր, դյուրագրգիռ բուժակը ըստուգեց վոսկորների վողջությունը և հոդերի գործելը, կոպտորեն ճնշելով, ականջ դընելով կրծքի գործունեությունը: Մի քանի անգամ սեղմելով աղջկա մարմինը զանազան տեղերում, հարցրեց.

—Ցավու՞մ է:

Բրոդարկան չկարողացավ զսպել իրեն:

—Վոչ, պարոն դոկտոր, ամենևին վոչինչ չի ցավում,— նետեց նա:— Ինձ սքանչելի խընամք է տարվում. ամենօրյա մասսաժ, շփում, ու հիանալի դիետա:

Բուժակը քննադատորեն դիտեց Բրոդարկայի նիհարած, դեղնած դեմքը, կապույտ բծերով չերտավորված, համարյա թափանցիկ թևերը, տանջանքներից մաշված, խղճալի մարմինն հագին ծածկող պատառոտված հագուստն ու վիրավորվեց:

—Քո դրության մեջ կատակ չե՛ն անում,— նետեց նա, ծանրորեն բարձրանալով տախտակամածից:—Թեթևամի՛տ աղջիկ: Ինքդ ես մեղավոր...

Դռան մոտ կանգնած վերահսկիչի մոտ բուժակը կանգ առավ բոպեյական մտածկոտությամբ: Ապա մեջքի կողմով բութ մատով ցույց տվեց Բրոդարկային:

—Իսկ ինչպե՞ս է նա ընդհանրապես... Ուտու՞մ է...

— Լափում է,—չգիտես ինչու՛, ուրախացած գոչեց վերահսկիչը—Ցերեկ յերեկոյան մի ամբողջ աման բակլա խփշտեց...

Բուժակի այցելությունը Բրոդարկային զվարճացրեց: Պառկած մեջքի վրա, նա անձայն ծիծաղում էր (բարձրաձայն ծիծաղը ցավ էր պատճառում): Իսկ յերբ մի ժամից հետո ժանդարմը յեկավ նրա յետևից, աղջիկը

լարեց բոլոր ուժերը՝ ավելի առույգ և անձնապաստան յերևալու:

***

Միջանցքի հրջադարձում Բրոդարկան իր համար միանգամայն անսպասելի կերպով հանդիպեց Միլանին: Գրոհիչը վերադառնում էր հարցաքննությունից յերկու ժանդարմների ուղեկցությամբ: Նա սաստիկ նիհարել էր, դեղնել, դեմքը վոխտ էր ու յերկար միրուքով ծածկված: Բայց Բրոդարկան նրան անմիջապես ճանաչեց: Այնպես պատահեց, վոր նրանց հայացքներն հանդիպեցին և յերկուսով էլ միա ժամանակ շնչառությունը դադարեցնող ուրախության մակնթացություն զգացին: Միլանը մի պահ կանգ առավ, թափահարեց գլուխն ու հռետորի բարձր ձայնով բացականչեց ամբողջ միջանցքով մեկ:

— Բարև՛ Բրոդարկա:

Աղջիկը բռնկվեց, բարձրացրեց ձեռքը:

— Վողջո՛ւյն, Միլան:

Ժանդարմը թույլ չտվեց Բրոդարկային վերջացնել, ուժգին հրեց բռունցքով թիոսկրների մեջ:

— Ի՞նչ ես գոռում,— գոչեց նա:— Այստե՞ղ էլ չես կարող հրաժարվել քո բոլշևիկյան վորձ չներից:

Բայց Բրոդարկան չէր լսում: Նա նայում էր այնտեղ, ուր նոր միայն կանգնած էր այժմ արդեն բանտային խցի դռան յետև ծածկված Միլանը...

Միջանցքի բաց լուսամուտից լսեց նա թռչնակի ճռվողյունը մոտակա պուրակում:

Բրոդարկան քննիչի առանձասենյակ մըտավ լայն բացած աչքերով:

***

Ցերեկվա մոտավորապես ժամի տասներկուսին Ցադրանյան և Ղարադյորգևսկի փողոցների անկյունում կանգ առավ մի սև, ծածկված ավտոմոբիլ: Յերկու էլեգանտ հագնված յերիտասարդներ իջան մեքենայից, մի քանի բառ փոխանակելով մռայլ, ակնոցավոր շոֆերի հետ, ձանձրացողի քայլերով, մոտեցան թագավորական դատարանի շենքին:

— Նայիր այն կողմ,— կամացուկ ասաց յերիտասարդներից մեկը մյուսին::—Դու այստեղ դեռ չես յեղել... Ահա այն յերկաթյա վանդակապատը բաժանում է դատարանի շենքը բանտի շենքից: Այս կողմից, այս գրասենյակներից յելքը դեպի փողոց միշտ բաց է: Բայց վորպեսզի բանտարկյալին այստեղ հանես, ինչպես տեսնում ես, պետք է անցնի յերկու յերկաթյա վանդակապատ, վորոնց միջին մասում որ ու գիշեր չարունակ պահակներ են կանգնած...

— Իսկ այս կողմ, այնուհետև բացատրեց յերիտասարդը, հայացքով ցույց տալով մոտակա դուռը՝ այստեղ, սիրելի՛ս, գտնվում է այն պարոնի գրասենյակը, վորը հետաքրքրում է մեզ: Այստեղ աշխատում է իրավասության դոկտոր պարոն Դրագուտինովիչը, պետական

գործերի քննիչը... Ինչ դրության մեջ է քո պղպեղը:

Յերկրորդը՝ միջահասակ, մի թուխ սևահեր յերիտասարդ, ուշադրությամբ լսում էր իր ուղեկցին, գլուխը կողքի թեքած ու բութ մատը ժիլետի բացվածքի մեջ անցկացրած: Վերջին, ըստ յերևույթին միանգամայն անսպասելի և անտեղի հարցը սակայն նրա մեջ զարմանք չառաջացրեց: Սևահեր յերիտասարդը գլխով դրական նշան արավ:

— Գնանք քննչի մոտ,— առաջարկեց նա, ժամացույցին նայելով:

Պարոն դոկտոր Դրագուտինովիչը նոր միայն վերջացնում էր յերկար ու բավական անդրադետ կազմած վոստիկանական արձանագրության ընթերցումը՝ մեխանիկական գործարանի բանվորների բնակարաններում կատարած խուզարկությունների մասին: Յեվ թեպետ ընթերցման պրոցեսն ինքն անհաճո յեր, այնուամենայնիվ խուզարկության արդյունքները, վոր տալիս էր պարոն դոկտորին վաղուց անհրաժեշտ նյութերը, նրա մեջ լավ տրամադրություն առաջ բերեց: Ուստի նա բավական սիրալիր վողջունեց յերկու անծանոթ յերիտասարդներին, վոր համեստ, բայց արժանապատվորեն առանձնասենյակ մտան:

— Մենք պատիվ ունենք տեսնելու դոկտոր Դրագուտինովիչի՞ն,— քաղաքավարությամբ հարց տվեց այցելուներից շիկահեր յերիտասարդը:

— Յես դոկտոր Դրագուտինովիչն եմ: Նստեցեք: Ինչո՞վ կարող եմ ծառայել:

Յերիտասարդները նստեցին ու միմյանց նայեցին:

— Մենք կխնդրեյինք պարոն դոկտորից կարճատև տեսակցություն ունենալ հետաքննության տակ գտնվող Միլան Գորիչի հետ: Իր ժամանակին մենք դպրոցական դասընկերներ ենք յեղել և կկամենայինք նրա հետ մի փոքր խոսել... Ահա պարոն դատախազի նամակը... Նա...

Քննիչն արագ շարժումով բաց արեց ծրարը և կարդաց թանգարժեք, հաստ պոստային թղթի վրա յեղած մի քանի անհոգ գրված տողերը: Փորձող նայեց գալանտ յերիտասարդներին և մտախոհ յետ ընկավ բազկաթոռի թիկունքին:

— Դուք կկամենայիք խոսել Միլան Գորիչի հետ,— ծոր տվեց նա: —Այո՜ո... Հըմ, հըմ.. Լա՛վ... Յես կարող եմ թույլատրել ձեզ հինգ րոպե խոսակցել նրա հետ այստեղ, առանձնասենյակում, իմ ներկայությամբ: Գորիչը շուտով այստեղ է լինելու... Դա ձեզ բավարարո՞ւմ է:

Յերիտասարդները կրկին միմյանց նայեցին:

— Ո՛, պարոն դոկտոր, մենք շատ շնորհակալ ենք ձեր սիրալիրության համար:

Պարոն դոկտորը ներողամտորեն շարժեց գլուխն ու սեղմեց ելեկտրական զանգի կոճակը

Այստեղ բերեք հետաքննության տակ գտնվող Միլան Գրոխչին,— հրամայեց նա ներս յեկած ժանդարմին:

Մի քանի վարկյանից դուռը բացվեց և շեմքին յերևաց Միլան Գրոխչը, ժանդարմի ուղեկցությամբ:

Նա զսպված վողջունեց այցելուներին:

— Նստեցեք, Գրոխչ,—նետեց նրան քննիչը:— Ձեր տրամադրության տակ հինգ րոպե կա:

Յերիտասարդներն սկսեցին խաղաղ, հանգիստ զրույց:

Այն, ինչ տեղի ունեցավ հետո, ամբողջ Թագավորության լրագրերը ընդարձակորեն մեկնաբանում էյին յերեք որ շարունակ: Թեպետ դեպքերը տեղի ունեցան հիրավի կայծակի արագությամբ:

Դոկտոր Դրագուտինովիչը հորանջեց, նայեց ժամացույցին ու բարձրաձայն ազդարարեց.

— Ձեր ժամանակը լրացավ, պարոնայք: տեսակցությունը վերջացած է: Տարեք կալանավորին իր խուցը,— ավելացրեց նա, դառնալով ժանդարմին :

Յերիտասարդները վոտքի յելան, քաղաքավարի գլուխ տվեցին դոկտորին ու դուրս գնացին առանձնասենյակից Գրոխչի ու ժանդարմների յետից:

Միջանցքում շլացուցիչ փայլում եր մոմած հատակը: Հետմիջօրեյի այն ժամն եր, յերբ հարավային արեգակը կանգնած է հա-

մարյա զենիթում, և կենդանի ամեն արարած քնել եր ձգտում: Վանդակորմների մեջ ննջում եր հերթապահ վերահսկիչը: Դատարկ միջանցքում արձագանքում եր գրամեքենայի չխչըխկոցը... Քննիչի առանձնասենյակի դռների մոտ Միլան Գրոխչը կանգ առավ: Նույն ակնթարթին թուխ յերիտասարդը ձեռքն արագորեն դուրս քաշեց գրպանից ու ժանդարմի դեմքին նետեց բռնով լի մանր ծեծած կարմիր պղպեղ: Մյուսը սոսկալի ուժով հարվածեց շփոթված ժանդարմի վզակոթին: Յեվ, բռնելով Միլանի ձեռքը, թռավ միջանցքով դեպի յելքի դուռը: Ժանդարմն աղաղակեց, տրորելով պղպեղից կծկծացող աչքերը: Վանդակորմի յետև գտնվող վերահսկիչը ցատկեց տեղից ու ձեռքը տարավ ատրճանակի բռնը: Բայց թուխ յերիտասարդը ծածկելով հարձակումը, վազքի ընթացքում առաստաղին պարպեց ավտոմատիկ ատրճանակի կես փամփուշտանոցը. և դատաստանական դրասենյակները վերջնականապես շփոթության մեջ ընկան... փախստականները գլխապատառ նետվեցին աստիճաններից ու թռան ավտոմոբիլի մեջ, վորը դողդողում եր կապույտ ծխի ամպերում: Մռայլ, ակնոցավոր շոֆերն արագ շարժեց լծակը, վաթսուն ուժանոց մատորը մռնչաց, և մեքենան, մրրիկի պես պոկվելով տեղից, սրընթաց թռավ դատարկ փողոցների ասֆալտով:

Ավտոյի ներսում Սովկոն ու Սեֆերն այլևս չկարողացան զսպել իրենց: Մինչև

վերջին աստիճան լարված ջղերը միանգամից թուլացան, ու տղաները պայթեցին ուրախուդին բացականչություններով, մեջընդմեջ խառնված բարեսիրտ հայհոյանքներով։ Միլանը լուռ, հերթով սեղմում էր Սլավկոյի ու Սեֆերի ձեռքերը։

— Կեցցեք, տղերք,— կրկնեց նա, հավանորեն հարյուրերորդ անգամ։— Զարմանալի տարաք գործը։

— Ո՞ւր ենք գնում,— հարցրեց Միլանը, մի փոքր հանգստանալով։

Սլավկոն ցույց տվեց շոֆերի կողմը։

— Սեվը գիտի։

— Մի՞թե դա Սեվն է։

— Իհարկե՝ Մի՞թե դու կարծում ես, վոր մենք ինքնուրույն կերպով կարող եյինք կազմակերպել է այսպիսի գործ։ Քո փախուստի վորոշումը կատարել էր մարզային կոմիտեն, հանձնարարելով Սեվին։

Միլանը լռեց ու մի քանի ակնթարթ նայում էր ղեկի վերա կուզացած մակեդոնացու լայն թիկունքին։

Մեքենան զարհուրելի արագությամբ սլանում էր քաղաքադրսի խճուղով։ Սեվը նստած էր անշարժ, հայացքը հառած հեռուն, կարծես խաղ էր անում ղեկի հետ։

***

Բոդարկան արթնացավ ծանր, կիսաքուն դրությունից ու ականջ դրեց։ Ուր վոր ջուր էր կաթկթում։ Տախտակամածի տակ ճլճլում

եյին ու կռվում առնետները, իսկ լուսամուտի վանդակից հազիվ հնչում եյին անընդհատ տարուբերվող աղմուկի հազարավոր միախառնված ձայների բեկորներ ու արձագանքներ։

Քաղաքը շնչում էր առաջվա նման։

Շնչում էր ռեստորանների սեղանների վրա, շնչում էր փոքրիկ բանվորուհիների մերկ մարմինների վրա, վորոնց հարյուր դինարով պառկեցրել եյին լայն, կեղտոտ մահճակալներին՝ հյուրանոցների սենյակներում, շնչում էր արվարձանների փոքր, խոնավ տնակներում, ջղաձգորեն ցնցվում էր ու ատամները կափկափում անսահման հոգնության կապարային քնի մեջ։ Կեղտոտ, տրտում մառախուղ էր կանգնած փողոցների վրա, միաձուլելով ուրվականների սաստկությունն ու դիմազուրկ անելով ամեն ինչ...

Բոդարկայի գիտակցությունն աստիճանաբար ձուլվեց քաղաքի շնչին, ամբողջ յերկրի շնչին, վողջ աշխարհի շնչին։ Թռավ բանտի պատերից դուրս, ծավալվեց, ընդարձակվեց։ Աշխարհը հայտնվում է նրա առաջ բազմաթիվ պատկերների խիստ ուրվագծերով։

Դղրդալով, կրճտում են հսկայական թեք պատերը, խժռելով շիկացած, շլացուցիչ փայլփլուն յերկաթե շերտերը... Զանգերում յեռ է գալիս բորակաթթվուտը։ Սողում են միլիոնավոր մետր բազմազան, ֆանտաստիկ, քմահաճ գործվածքները մեքենաների չուր-

ջը: Գունատ, նիհար, ուժասպառ մարդկանց բազմությունն աշխատում է օրեր ու գիշերներ, փոխարինելով միմյանց՝ մեռնելով ու վերածնվելով: Անսահման քանակությամբ ամենազանազան տեսակ իրեր ու առարկաներ, վոր ընդունում են յերկրագնդի բոլոր անկյուններըը, սկսած Հյուսիսային բեվեռից մինչեվ հասարակածի տակ գտնված գյուղերը, ըստեղծված են այդ փոքրիկ, այդ աննկատելի մարդկանց ձեռքերով, վորոնք հասարակական զարգացման անողոք օրենքներով, կարիքի ու քաղցի մահակով քշվել են միասին, կազմելով մի ընդհանուր մարդկային զանգված՝ նետված գործարանների յերախը, սուրճի ագարակների ընդարձակ դաշտերը, իմպերիալիստական պատերազմների մսաղացի ատամների տակ... Յերկրից յերկիր, ովկիանոսներով ու սահմաններով հոսում են վոսկու գետեր՝ մարկ, իեն, դոլլար, ֆունտ, ֆրանկ: Նրանք մարմնավորում են իրենց մեջ միլիոնավոր ստրուկների աշխատանքը՝ ներդրած նավերում, ավտոմոբիլների մեջ, թնդանոթների, կոշիկների, յերկաթուղիների, կոնսերվաների, ջութակների մեջ: Վոսկե ցանցը խեղդում է աշխարհը ու ձգում է նրան պատերազմների ու սոցիալական կատաստրոֆաների հորձանուտը: Արդեն դուրս են ժայթքում այրող լավայի վիժումները: Հնչում են պայթյուններ ատելության, պայթյուններ պայքարի, վորոնք

խորտակում են դարերով կառուցված շենքերի քարերը: Ցեվ զգում է իրեն Բրոդարկան փոքրիկ մասնիկը մեծ օրգանիզմի, վորին պատմության կողմից վորոշված է տեր դառնալու վաղվա օրվան: Ցեվ զգում է Բրոդարկան, ինչպես այդ հսկայական օրգանիզմն ավելի ու ավելի ամրանում է, միասնության, ստեղծագործող ու ավերող կամքի ուժով է ներշնչվում, պատրաստվելով վերջին յեզրափակող մրրիկներին:

— Սա յե մեր վերջին ու վճռական կռիվը...

Բրոդարկան զգում եր նրա առաջընթացը: Փոքրիկ, հիվանդ, խղճալի կիսակենդան աղջիկն զգում է, ինչպես ինքը ներշնչվում է կռվի ընթացող բազմամիլիոն մասսայի ուժով:

Խուցը ցրտում է: Աստղերը, մեծ ու աչեղ, ցուրտ հետաքրքրությամբ նայում են ցած:

Թեթեվ է ու խաղաղ:

Ջնգաց փականքը: Դանդաղ դարձրեց Բրոդարկան գլուխն ու նայեց դռանը:

Նրա համար ամեն ինչ միևնույնն եր:

Քննիչն ու յերկու ժանդարմ խուցը մտան կամաց ու գողունի: Ծածկեցին դուռը: Աստիճանավորը կանգնեց մի քանի րոպե ու ծխեց, ըստ յերեվույթին ինչ վոր բան խորհելով:

— Ցած քաշիր նրան ու բերանը փակիր, — կամացուկ կարգադրեց նա վերջապես:

Տարօրինակ, հանդիստ անտարբերությամբ, հետեվում եր Բրոդարկան ժանդարմ-

ների գործողություններին, հետևում էր այնպես, ինչպես հոգնած ուղևորը հետևում է ճամբի յեզերքին կանգնած ծառերի տերևների սոսափյունին: Կարծես Բրողարկայի թևերը չէր կապտության սահման պրկել բարակ դիմացկուն թոկը, կարծես Բրողարկան չէր զգում բերնում թաց, հոտած՝ արդեն բազմաթիվ կալանավորների ատամներով, անտանելի ցավի բռնկումներին կրծոտած գուղձի սերտ խառնող համը...

Քննիչն շտապում էր: Գիշերային հանկարծակի հարցաքննություն կատարելու միտքը նրա մեջ արթնացավ այն մոմենտին, յերբ նա արդեն հանվել էր ու խալաթն էր գցել վրան, պատրաստվելով քնելու: Նա հավատացած էր, վոր աղջիկը գիշեր ժամանակ ռետինե մահակի հարվածների տակ անպայման ավելի խոհուն կդառնա: Բայց միևնույն ժամանակ քննիչի քունը տանում էր: Նա չափից ավելի առատ ընթրիքից հետո նրա ներսն այրվում էր ջղայնացած էր և կամենում էր, վորչափ կարելի յե, շուտ վերջացնել ծառայության ճանճրալի պարտականությունը:

Նա ընդհուպ մոտեցավ յերկու ժանդարմների կողմից պահված Բրողարկային:

— Լսիր, յեթե դու այս րոպեյիս չես խոսել, սողուն, յես քո կաշին կմաշկեմ, — շշընջաց նա բացորոշ ու վճռական:

Բրողարկան նայեց նրան յերկարատև ու խոր հայացքով թույլ քմծիծաղեց:

«Ինչպես չնչին ու խղճալի յե այս վարձկանը... Գիշերը յեկել է խուցն ու կամենում է այնպիսի պրիմիտիվ միջոցով, ինչպիսին վախն է, կոտրել «մեր ուժը ...»

Յեվ Բրողարկան նորից քմծիծաղեց:

Գուղձի շուրջը բարակ ողակով տարածված շուրթերն ավելի բարակեցին և անկյունները թեթև ցնցվեցին:

Քննիչը կորցրեց համբերությունը: Ուժգին թափով ձգեց աղջկա մազերից ու նետեց նրան հատակին, կոշկի ծայրով հարվածելով կողքին: Բրողարկայի մարմինը գալարվեց ցավից:

Քննիչը ջղայնորեն կրծոտեց շրթունքները: Ձախ այտը աչքի տակ ցնցվեց:

— Բարձրացրու վոտքերը վերև ու խփիր անսասանի կրունկներին, — մրմռաց աստիճանավորը:

Ժանդարմները, մռայլ ու հնազանդ, քաշեցին աղջկա վոտքերից պատռված գուլպաները, մերկացնելով գունատ ու սառը թաթերը: Բրողարկայի ցած ընկած գլուխը կախվեց անկյանք, իսկ քթանցքներից ու բերանից բշտկեց արյունը:

— Խփի՛ր:

Ռետինե մահակները թռչկոտում եյին կրունկներին խուլ հարվածով. կաշին բշտկեց, ուռեց, կապուտակեց:

Հրճվանքի ինքնամոռացությամբ ժանդարմները բռնել էյին աղջկա ոտքերից, հարվածներ էյին իջեցնում, իսկ քննիչը ջղայնորեն քայլում էր խցում մեծ-մեծ քայլերով, ծխում էր ու խռերիկ շշնջում։

— Սատկում ես, բայլշևիկյան քած։ Սատկում ես... Կսատկես...

Ժանդարմներից մեկը ձեռքով մաքրեց կարմրած ճակատից քրտինքն ու բաց թողեց Բրոնշտեյնի ոտքը։ Ոտքը ծանր ու փայտացած ընկավ հատակին խուլ թմփոցով։ Աղջիկը պառկած էր անշարժ, գունատ ու փոքրիկ։ Սրված քիթը, արյունոտած, թաթախվեց ցեմենտի հատակի արյան լճակում։ Վտիտ թիկնկները դուրս ցցվեցին պատառոտուն զգեստի տակ։ Բարակ, գունատ մատները կծկվեցին վերջին ջղաձգումով։

Քննիչը կանգ առավ, գլուխը թեքած կողքի։ Ժանդարմները ձգվեցին ու սսկվեցին։ Ցերեկով միմյանց նայեցին մռայլ։

— Կարծես վերջացավ անիծածը, — փըսփըսաց ժանդարմը, խոնարհվելով Բրոնշտեյնի վրա։ — Այդպես է, որ կա։ Զարկերակը չի աշխատում բոլորովին։

Քննիչը ձեռքի լայն շարժումով ծխախոտի թերուցքը նետեց անկյունն և դարձավ դեպի դուռը։

— Թաց շորեր պատրաստեցեք։ Հարկավոր է առայժմ նկուղ փոխադրել, — ասաց նա։

Լուսամուտի վանդակից ներս թափանցած քամու հոսանքը տարածվեց հատակին ու թեթևակի տարուբերեց դիակի մազերը։ Անտառի ծերպերին լողում էր առավոտյան արշալույսի վարդագույն լույսը։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0045872

Գինը 1 ռ. 20 կ
Կազմը 40 կ.

(804)
A I/8624

МИРКО МАРКОВИЧ
Бродарка
ГИЗ ССР Армении, Эривань